ԿՌՈՒՆԿ

ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀԻՆ

ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՅ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԲԱՐՈՅԱԿԱՆ

ԼՈՒՍԱՒՈՐՈՒԹԵԱՆ

Դ· ՏԱՐԻ· 1863· ԹՒԻ Գ·

ՄԱՐՏ

ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ

ԱՂԱՍԻ

ԱԶԳԱՅԻՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ

ԳԵՐԱՑԱՐԳՈՅ ՏԵԱՌՆ

ՌՈՄԱՆՈՍԻ ՊՕՂՈՍԵԱՆ

ՆԱԳԻՐԵԱՆՑ

ՆՈՒԷՐ

ՑԵՐԱԽՏԱԳԷՏ ՍՐՏԷ

Աղդասէր Տէր

Այս տարի թիֆլիզում մեր ներկայացրած մի քանի հայկական թատրոնների սիրալեր ընդունելութիւնը և մեր ազգի թատրոնի վերայ ցոյց տուած մեծ եռանդը քաջալերից ինձ

ձեռնամուխ լինիլ մի ազգային թատրոն գրելու։ Մտքումս դրի իմ հայրենակցաց արդի կեանքից վերառնել գրուածիս նիւթը. բացուեցան աչքիս բազմաթիւ տեսարաններ Արարատեան գաւառի ընտանեկան կեանքից, Հայաստանի շատ կրքիՀներ ներկայացան առաջիս իրենց նահապետական պարզութեամբ և քաջագործութեամբը, բայց ես թողլով այդ ամէնը, ընտրեցի ինձ համար այժմեան դրականութեան մէջ ինձ լեզու տուող և յառաջ քաշող Վարժապետիս դիւցազնը։ Հայրենակցաց վարքն ու բարքը և Արարատեան գաւառի ներկայ դարուս աղէտքները մեր աչքի առաջ վիպասանօրէն ներկայացնող Խաչատուր Աբովեանը, որ առաջին անգամը խրախուսեց ինձ ազգային աւանդութիւնները երգելու, այսօր և նա պարգևեց ինձ իր Ազասին թատրոնական բեմի վերայ դուրս բերելու։

Ողբերգութեանս մէջ իմ հայրենակցաց կենաց նկարագիրը պարզ ցոյց տալու համար, ես աշխատել եմ 'ի գործ դնել և Աբովեանի քաղցր դարձուածքները, չհեռանալով որքան կարելի է և թատրոնական բեմին յարմար լեզուից։ Կամեցել եմ երբեմի փունջ ծաղիկ հայոց ամէն գաւառական բարբառների միջից շնորհել և Արարատեան գաւառի ընտիր ընտիր ոճերն ու յատկութիւնները և սրանով թէ քաղցրութիւն և ճաշակ տալ գրուածքիս և թէ դարձնել Աբովեանի «ՎԷՐՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ» վերայ ամէն Հայի ուշադրութիւնը։

Եթէ հասայ իմ նպատակիս կամ ոչ, ես չեմ կարող վճռելը այլ այս միայն կասեմ, որ իմ ցանկութիւնս 'ի գլուխ տարայ. եթէ իմ գրած «ԱՂԱՍԻ» Ողբերգութիւնը չյաջողեցաւ ըստ ցանկութեանս, այս գոնէ արի, որ թատրոնական խաղարկութեանց մէջ աւելի կրթեալ և յարմար մարդիկ կամ քննութեան տակ ձգելով իմ գրուածքս և կամ նորը շարադրելով այս նիւթիս վերայ, կրկին և կրկին կրկնդանացնեն հայրենեացս վարքն ու բարքը և Աբովեանի անմահ անունը, այս է միայն իմ սրտիս փափաքելին։

Իսկ իմ այսքան եռանդեամբ աշխատութիւնը ո՞ւմ կարող եմ նուիրել Ազգասէր Տէր, եթէ ոչ նրանց միայն, որք ուրիշներից շատ գերազանց լինելով հայրենասիրական հոգւով

ԱՂԱՍԻ

ԱԶԳԱՅԻՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ

ՀԻՆԳ ԱՐԱՐՈՒԱԾՈՎ.

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

ՏԱՆՈՒՏԷՐ ՕՀԱՆԷՄ ԱԲՈՎԵՆՑ.
ՄԱՐԳԱՐԻՏ, *Նորա կինը.*
ԱՂԱՍԻ, *սոցա որդին.*
ՆԱԶԼՈՒ, *Աղասու կինը,*
ՄՈՒՍԱ, ԿԱԲՕ, ՎԱԹՕ, ՎԱՆԻ — *Աղասու ընկերակիցքը.*
ՍԱՐԻԱՄ, *Քանաքեռցի մի այրի կին.*
ԹԱԳՈՒՀԻ, *Մարիամի աղջիկը.*
ԱՒԵՏԻՔ, *Աղասու հօր եղբայրը.*
ՑԱՐՈՒԹԻՒՆ, *Մուսայի հայրը.*
ՄԷԼԻՔ ՍԱՀԱԿ, *Հայ իշխան Երեւանի.*
ՍՄԲԱՏՈՎ, *իշխանազն աստիճանաւոր.*
ՀԱՍԱՆ ԽԱՆ.
ՄԻ ԲԱՆՏԱՊԵՏ.
ԱՌԱՔԵԼ, *մի քրիստոնեայ ծեր Հայ.*
ԺՈՂՈՎՈՒՐԴՔ, ՑԱՐԲԱՇՔ *եւ* ԶԻՆՈՒՈՐՔ ՊԱՐՍԻՑ,
ՔՐԴԵՐ, ԶԻՆՈՒՈՐՔ ՌՈՒՍԱՑ *եւ այլն.*

Ա. *արարուածը կատարուում է Քանաքեռ գիւղի մէջ,* Բ-ը *Արարատ գաւառումը,* Գ-ը *Անի քաղաքի մէջ,* Դ-ը *Փամբակու Խլղարաքիլիսի սահմանումը, իսկ* Ե-ը *Երեւանու բերդումը.*

Անցքը պատահում է 1822-*ից*—1827 *թիւը.*

Տեսարանը ներկայացնում է Քանաքեռ գիւղումը մի հասարակ տան բակ կիսաւեր պատերով, հեռուումը երեւում է տերեւաթափ այգիներ եւ տնկերի ու մշուշների մէջ կորած լեռներ, երկինքը ամպած, ձիւնը ամէն տեղ բռնած. Թագուհին բակումը կանգնած է.

Ֆարրաշները նրանից դողում են, ինքը Սարդարն էս շատ պատուում է նրան. տեսնում ես, երեսուն տարեկան տղայ է, բոլոր Հայ սարվազների վերայ նայիր է կարգուած և մինչև հիմի ոչ գիտէ, որքան Օսմանցու և Քրդի գլուխ է կտրել։

ԹԱԳՈՒՀԻ.

Ես կարծեմ բնութիւնն էլ շատ ազնիւ պէտք է լինի, բոլոր երիտասարդները նրան սիրում են, նրա անունովն երդուում են, մէկ խօսքով մեր գիւղումը նրա նման լաւ տղայ չկայ։

ՄԱՐԻԱՄ.

Բնութիւնն էլ հարցնելու չէ. ոչ թէ միայն երիտասարդները, ձեր մարդիկն անգամ նրան կեանք և արեւշատութիւն են խնդրում. այս հասակումը նա դեռ մէկի սիրտը չէ վիրաւորել. ասում են դրա պապ Աբովն էլ շատ պատուական մարդ է եղել, սա էլ երեւում է, նրան է նմանել. ասած է, «մարդ իր ազգը չի կորցնել, մի առուով որ մի ժամանակ ջուր է գնացել էլի կերթայ». սա իր ձեռքովն է մշակում իրենց մեծ այգին, այն պատճառաւ, որ աղքատաց բաժինն է, ամբողջ ամառն էն տեղ է լինում և ամէն պտուղը իր ձեռքովն է աղքատաց բաժանում. էս կանոնը հաստատել է դրա պապ լուսահոգի Աբովը։

ԹԱԳՈՒՀԻ.

Իր քաջութիւնի և բարեսրտութիւնի հետ էլ Աստուած ամէն շնորհքը պարգեւել է դրան. մեր Գանաքեռի աղջկունքը երբ 'ի միասին ժողովում ենք, թէև դա ամուսնացած է և որդիք ունի, բայց էլի դորա վերայ ենք խօսում. ամէնքը երանի են տալի դրա մօրը և կնոջը, ամէնքը ասում են, ափսոս, որ դուռ մէկ ես ծնած. քո մայրը քեզ նման տասը պէտք է ունենար. և ճշմարիտ որ, մայր, Նազլուն՝ դորա կինը երջանիկ է բոլոր Գանաքեռի կանանցիցը։

ՄԱՐԻԱՄ.

Ա՛խ, քո խաշմալի հօր աչքը միշտ այդ քաջ երիտասարդի վերայ էր. եթէ նա կենդանի լինէր, դու կը լինէիր Աղասու ա-

ՏԵՍԱՐԱՆ Գ.

Այս աղաղակի վերայ դրացիք լսելով չփոթուած տուն են լցուում, ոմանք սիրելնած կրկին փախչումեն, ոմանք տեսնելով Սարդարի ֆարրաշներին, պատերի տակին կուչ են գալի, մի քանիսը աչքերը սրբում են, այլք մօտ են գալի ազատելու, բայց էլի փախչելով հեռանումեն.

ՀԻՍԷԻՆ գոռալով ժողովրդի վերայ.

Դուրս կորէ՛ք անիրաւնե՛ր, ի՞նչ է՛ք ժողովել, ո՞վ կը համարձակի մօտ գալ, բոլորիդ սուրը կը քաշեմ Սարդարի անպատնաղի վճիռն է, ո՞վ իրաւունք ունի ընդդիմանալ։ (զինուորներին) Տղա՛յք, դուրս ձգեցէ՛ք դրանց, մի քանի անարդ Հայեր կամենումեն մեր առաջն առնուլ, մի՛ վախիք, խփեցէ՛ք, կոտորեցէ՛ք, ես եմ պատասխանատու։

Թուրքերն սկսում են սրան, նրան հրել հրացանի դլխով, այլոց մտրակով են դուրս ձգում, երեխայք սկսումեն ճչալ, ուրիշները հառաչում են, բայց կրկին միւս դռնիցը ներս են լցուում;

ԱԼԻ.

Հիւսէի՛ն, էլ ի՞նչ ենք երկարացնում, ժողովրդին նայիլ չի լինիլ, մօրը խղճալու ժամանակ չէ, հեռացնենք այս անպիտան կնոջը, առնենք աղջկանն ու գնանք, Սարդարը հիմա սպասում է։

ՀԻՍԷԻՆ մօտենալով Մարիամին, որ թաղուհու վերայ ընկած ողբում էր.

Վա՜ՀԷ կայ, ո՞վ խեղճ կին, քո աղջկանը պատուի ենք տանում և ոչ պատուի, աշխարհքը կը ցանկանայ Հիւսէին Սարդարի աչքին հաճոյանալ Իրան Թուրանի խանները նորա ոտքը համբուրելով կը ցանկան իրենց աղջկանց բաղդաւորութիւնը. դորա համար է ասած «անիսլը Հայ». վաղը կը գանք քեզ էլ կը տանինք, լաւ պարգևների արժանի կը լինիս, Հիւսէին Սարդարին զոքանչ կը կոչուիս, մեր սուրբ օրէնքը կը պաշտես, Մուհամէտ մեղամբարի մօտ կերթաս։

ՄԱՐԻԱՄ Հիւսէինի ոտքերն էնկնելով

Ի սէր Աստուծոյ, ձեզ լինի և ձեր պարդևը և ձեր հա-

ՄԱՐԻԱՄ

Թաղուհի՛, աչքերդ բաց, եթէ ամաչում ես, ասեմ, որ այս բաղմութիւնը հեռանայ . . . մարդիկ, ի՞նչ էք կանգնել, հեռացէ՛ք . . . Թաղուհի՛, ինչի՞ ես քո մօրը անիծատ վշտի մէջ ձգում՝ ուզո՞ւմես քեզ հետ ես էլ թուլանամ, վեր ընկնիմ, որ երկուսիս 'ի միասին տանին : Ա՛խ կոյր բաղդ, մի աղջիկ ունէի աչքիս լոյսը, նրա՞ն էլ ես ուզում ձեռքիցս առնել. Թաղուհի՛, Թաղուհի՛ . . . Ձեր ոտքերը կոտրուէր, Թուրքեր, մեր երկիրը ոտք չը կոխէիք :

Ասում է եւ թուլացած աղջկայ վերայ ընկնում:

ԺՈՂՈՎՈՒՐԴԸ.

Ո՛վ Աստուած, ո՞վ աղէտալի տեսարան :

ԱԼԻ.

Հիւսէին, հիմա ժամանակ է, մօտ արի՛ վերցնենք, սրանց բաժանելն անհնարին է, այս տեսարանը վերջ չունի, արի՛ երկուսին 'ի միասին տանինք Սարդարի մօտ, ինչպէս կը հրամայէ, իրեն կամքն է, ամբողջ Երեւանը հիմա մեղ է սպասում:

ՀԻՍԷԻՆ.

Շատ բարի, տանինք, տղայ.ք, մի երկուսդ գնացէ՛ք ձիանքը պատրաստելու, միւսներդ մօտ եկէ՛ք վերցնենք սրանց. Ալի, դու մօրը բռնիր, Մահմուտ, օգնիր դրան, վալի՛, ինձ մօտ արի՛, էս աղջկանը վերցնենք, Նազի՛, գնա՛, իմ ձին մօտ բեր, սրան վրէն ձգենք. դէ՛, շտապեցէ՛ք, քանի ուշքի չեն եկել, ձեռքերը կապեցէ՛ք, մի՛ դուցէ Ճանապարհին ուշքի գան եւ մեղ կրկին նեղացնեն, էս կինը ուրիշ կին է երեւում:

Թուրքերը մօտ են գալի, որը պարան է բերում, նուաղածների ձեռքերը կապում, որն էլ իրարից բաժանելու է աշխատում, դրսիցը լսուում է ձիանց տրոփիւն, Թուրքերը կարծում են, թէ իրենց ձիանքն են,

ՀԻՍԷԻՆ դէպի դուրս.

Պահեցէ՛ք էդ տեղ, մենք գալիս ենք :

Դղրդոցը չատանում է եւ ներս են մանում դրահաւորուած,

փորձենք, սա մի կոպիտ Հայ է, սորա վճիռը՝ վճիռ է, դու քաջ դիտես, որ սրան հարիւր մարդը հաղիւ կը յաղթէ. ուրեմն հոդուով սրան ի՞նչ կարող ենք առնել և այն այսքան տղայոց հետ. արի՛ դլուխներս ազատենք, տասնապատիկ աւելացնելով Սարդարին պատմենք անցքը, նա շուտով հազարաւոր զօրք կուղարկէ և քանաքեռը կաւերէ, աղջկանն էլ կը տանի, դրան էլ կսպանէ և մենք կազատուինք այդ հրէշեցը:

Թուրքերը իրար նշանացի առնելով, դուրս են փախչում.

ԱՂԱՍԻ դլուխը բարձրացնելով.

Թող այժմ գնան պատմեն Սարդարին ինչ և կամին: (Թագուհուն) Արի՛, Թագուհի՛, բաց աչքերդ, Աղասին կենդանի չպէտք է լինէր, նրա ոսկերքը փտած պէտք է լինէին, որ քո մազին անգամ յանդգնէին մերձենալ. վայ ինձ, ի՞նչպէս անշնչացել է. Թագուհի՛, զարթնի՛ր, քո խղճալի մօրը մխիթարէ. ով Արարիչ ի՞նչպէս մոռանամ սրան. օտարի աղջիկ, դուցէ ուշքի գայ և մի օտար ոք տեսնելով՝ աւելի վտանգուի:

ՄՈՒՍԱ.

Աղասի՛, դիտե՞ս որ մեր կեանքը վտանգի մէջ է, ինչի՞ չը խնայեցիր գոնէ քո զառամեալ ծնողացը, բոլոր քանաքեռը այսօր դերի պէտք է գնայ. ով ցէր, այս ի՞նչ պատուհաս էր մեր դլխին եկաւ, օգնիր մեզ ով անմահ Արարիչ:

ԿԱՐՕ.

Վայ մեզ Աղասի, դու այս ի՞նչ գործեցիր. Վաթօ, կանգնելու ժամանակ չէ, ի՞նչ ես ափշած մնացել, շտապի՛ր, հասի՛ր սոցա տունը, մեր իշխանացը յայտնի՛ր, ուրախութեան ժամանակ չէ, ասա Աբսվենց Օհանէսին, քո ճրագը հանգաւ:

ՄՈՒՍԱ.

Գնա՛ Վաթօ, գնա՛, շուտ յետ դարձի՛ր, մենք շատ գործ ունինք կատարելու: Վաթօն գնում է.

ՎԱՆԻ.

Մուսա, ո՞ւմ ենք սպասում, վերցնենք սրան, ազատուենք, հի-

ԱՂԱՍԻ·

Վ՛ երը կայ, թագուհի՛, քոյր իմ, ազատ ես թշնամիներից· Աղասին կենդանի՛ չպէտք է լինէր, որ քեզ տանէին, քանի կեանք ունիմ, չեմ թողուլ ոչ ոքի քեզ մերձենալու ։

ՄՈՒՍԱ·

Աղասի՛, խղճա մեզ, շտապի՛ր գնանք, ահա ոտնաձայն է լսուում, մի՞ գուցէ անօրէն ֆարրաշները շուտափոյթ լուրը հասցրած լինին Սարդարին և նորա զօրքը լինի գալիս ։ (Գնալով դէպի տեսարանի խորքը եւ դուրս նայելով·) Բայց ո՛չ, վա՛յ ինձ, ահա քո տարաբաղդ հայրը, ահա՛ մեր բոլոր իշխանները գալիս են· ո՛վ Աստուած, էս ի՞նչ ցաւ է որ մեզ վերայ եկաւ։

Դրսիցը հառաչանքներ է լսուում։

ԱՂԱՍԻ·

Հա՛յրս · · · · · ա՛խ · · · ·

ՏԵՍԱՐԱՆ Ե·

ՏԱՆՈՒՏԷՐ ՕՀԱՆԷՍ, ՑԱՐՈՒԹԻՒՆ, ԱԻԵՏԻՔ, ՎԱԹՕ ԵՒ ՄԻ ՔԱՆԻ ԻՇԽԱՆՔ·

ՏԱՆՈՒՏԷՐ ՕՀԱՆԷՍ·

Աղասի՛ · · · սուր խփի՛ր ինձ, վա՛յ իմ օրիս, տունս քանդուեցաւ, իմ երկի՛նք, իմ գետի՛նք, իմ հրեշտակ Աղասի՛, թո՛ղ քո ձեռքն ինձ սպանի, որդի՛, քանի աչքուս լոյս կայ, քանի բերանիս շունչ, ոտքդ դի՛ր բերանիս, թո՛ղ ես մեռանիմ յետոյ քո կամքն է· · · Ա՜խ, էս ի՞նչ ես արել, որդի՛, դու Սարդարի ֆարրաշներին անպատուութեամբ փախցրել ես, Սարդարի հրամանը ոտնատակ ես տուել, դու կամեցել ես քո պապերի վրէժը նրանցից առնել· լաւ ես արել իմ բարերար, հերիք էր, որքան սրանք մեզ չարչարեցին· ո՛վ երկնային թագաւոր, մինչև ե՞րբ մեր մեղաց պատժիցը չըպէտք է կարողանանք ազատուիլ

մինչև ԷՐբ չպէտք է գթաս այս հողի հետ հաւասարուած ազգին, բաւական է մեր մեղքը մեր երեսը հարկանես • • • Աղասի՛ • • • Աղասի՛ • • • որդի՛ ։

ԱՂԱՍԻ հօրը գրկելով.

Բաւական է, հայր, բաւական է մորմոքես իմ սիրտը, ես դեռ ափսոսում եմ, որ չեմ սպանել նրանց. ես հոգի եմ ազատել, ես հաւատոյ համար եմ արել, էս խեղճ աղջկայ (ցոյց տալով Թաղուհոյն) հաւատն եմ պահպանել. սա էլ շատերի հետ ակամայից մահմեդական կրօնքին պէտք է երկրպագութիւն տար. էս օր մեր Վարդանանց զօրավարաց յիշատակն է կատարել մեր սուրբ եկեղեցին, էս օր մեր փրկութեան օրն է, ես լաւ գիտեմ, որ էս օր Վարդանանց հետ ես էլ պէտք է նահատակուիմ ։ Բայց ո՛չ, մինչև որ քսան Պարսկի գլուխ չը կտրեմ և ո՛վ գիտէ, Սարգարին և Հասան խանին անպամ սատանի բաժին չանեմ, չեմ մեռանիլ, չեմ յաղթուիլ. էս օր ես պէտք է Վարդան դառնամ, Լուսաւորչու որուրը հաւատոյ համար պատերազմ բանամ մահմեդական սուտ կրօնքի դէմ. ահա իմ քաջ ընկերքը, սրանք իմ հետ ախոյեան կը հանդիսանան այս սուրբ պատերազմի մէջ, իսկ դուք էլ այդ պատուելի իշխաններովը դարձէ՛ք մեզ համար մի մի Ղևոնդներ, մի մի Յովսէփներ։ Չէ, հայր, չէ, Աղասին իր խօսքին հաստատ է, Աղասին քաջ Աբովի թոռն է, Աբովի արիւնն ունի երակներումն. դու էլ հայր, դու էլ չպէտք է հաճիս, եթէ ես կամենամ վատուութեամբ մեռանիլ. ես քաջութեան անունը քեզանից եմ սովորել 'ի մանկութենէ. Աբովը թէպէտ մեռած է, բայց նորա թոռը կենդանի է, կենդանի՛ ։

ՏԱՆՈՒՏԷՐ ՕՀԱՆԷՍ.

Աղասի՛, Աղասի՛, այս ալևոր հասակս քեզ բարեխօս եմ բռնում, ա՛ռ հօրդ վերջին օրհնութիւնը, հեռացի՛ր էս անօրէնների երկրից, գնա՛ փամբակ, Թիֆլիզ, Ղարս, կամ ուրիշ տերութեան երկիրներ ։ Ես քաջ գիտեմ, որ շուտով Սարդարի զօրքը կը գայ. քո փախցրած թուրքերը մէկին տասն էս աւելացնելով, բամբասած կը լինին քեզ Սարդարի մօտ, ուրեմն

գնա, որդի, թող ինձ սպանեն, ես յոժարութեամբ կախաղանի վերայ կը բարձրանամ և եթէ գերեզմանիս մէջ ես քո կենդանութիւնը լսեմ, կը փառաւորուիմ։

ՄՈՒՍԱ.

Աղասի, քո ծերունի հայրն է աղաչողը, լսի՛ր դրան, ահա ձիանքը պատրաստ են, փախչինք, ազատուինք, մի՛ վախիր, մահը միայն կը բաժանէ մեզ միմեանցից, մեր կեանքը պատրաստ ենք քեզ համար զոհել ամէն ժամանակ։

ԿԱՐՕ.

Գնանք Աղասի, քո ընկերքը յաւիտեան քեզանից չեն հեռանալ, արիւններս կը թափենք՝ միայն քո ազատութեան համար։

ՎԱԹՕ.

Աղասի, լսի՛ր մեր խնդիրքը, ոտքերդ ընկած աղաչումենք,

ՎԱՆԻ.

Աղասի, ձիանքը պատրաստ են, դու մեզ խօսք ես տուել, որ պյուխդ մեզ համար յետ դնես ամէն փորձանքում, մեզ էլ քեզ հետ պէտք է սպանէ Սարդարը, եթէ էս տեղ մնանք, մենք վըտանգի մէջ ենք, ինչի՞ մեզ չես կամենում ազատել, մենք եթէ առանց քեզ փախչինք, ի՞նչ կարող ենք առնելուր որ լինինք, մեզ կը դանեն և յետ կը բերեն։

ԱՂԱՍԻ.

Հայր, իմ սիրելի ընկե՛րք, ինչի՞ այդպէս հարկադրում էք ինձ, ես կամենում եմ Երևան գնալ մի քանի Պարսկաց գըլուխ կտրել և էնպէս մեռանիլ, տարաբաղդ ծնողք, թշուառ իմ Նազլու, տարաբաղդ Հայոց ազգ։

ԱՒԵՏԻՔ փաթաթուելով Աղասուն.

Իմ առիւծ Աղասի, մի՞թէ մենք չդիտենք քո սրի զօրութիւնը, մի՞թէ մեզ յայտնի չէ որքան հսկաների ես յաղթել Սարդարի առջևը, պատերազմի մէջ չնայելով գնատակներին և կրակներին՝ աներկիւղ վտանգաւոր տեղերն ես յառաջ

խաղացել և Օսմանցուի կամ Քրդի մազերից քարշ տալով, կենդանուցն Սարդարին ներկայացրել. գիտենք, քո այս անպատմելի քաջութեանց վերայ Սարդարը զարմանալով և ճակատդ համբուրելով՝ խանութիւն և մեծ մեծ բէգութիւններ էր խոստանում, եթէ իրանց մոլար կրօնքը ընդունէիր, բայց դու այն շառաւիղեցը էիր, որ քո սուրբ հաւատդ աշխարհիս ունայն փառքերի հետ փոխէիր. քո անմահ քաջութեանդ կենդանի վկայ ահա այդ ոսկեզօծ սուրը, որ ինքը Սարդարն է ընծայել այդ նժոյդ ձին, որ Նաղի-խանի պարգևն է, այդ Հայ սարվազների վերայ նայիրութեան աստիճանը, որ հասակիդ համեմատ չէ, բայց վեհանձնութեանդ համար դեռ շատ փոքր է. գիտենք այս ամէնը, բայց յիշիր, որդեակ, քո սերունդը, ես անզաւակ, դու հօր միւնուճար, մեր յոյսը դու ես և քո երկու մատաղ երեխայքը. լաւ իմացիր, եթէ էս տեղ մնաս, պէտք է հանդչի մեր տան ճրագը : Գնա՛ Աղասի, գնա՛, քո հօրեղբայրը քեզ հաստատ խօսք է տալի, ուր և լինիս դայ քեզ գտնի :

ԱՂԱՍԻ.

Ա՜խ, գուք իմ կռները թուլայնումէք, եթէ ես գնամ, կարելի է էս աննման աղջկանը կրկին տանին, և ի՞նչ թուրքերը պէտք է պարծենան, թէ Հայի տղայ Աղասին աւազակի նման սպառնալով փախցրեց և կնատ մարդոյ նման գլուխս աւաւ հալածուե՞ց, չէ՛, չէ՛, իմ վճիռս հաստատ է :

ՏԱՆՈՒՏԵՐ ՕՀԱՆԵՍ հատկլեալ ձայնիւ.

Աղասի՛, ահա հոգիս տալիս եմ. . . .

Դրսից լսուում է կանանց լացի ձայն.

Որդի՛, իմ ազնիւ որդի՛ :

ՏԵՍԱՐԱՆ Զ.

ՆՈՑՆԵ, ՄԱՐԴԱՐԻՏ, ՆԱԶԼՈՒ և մի երկու ուրիշ կանայք.

ԱՂԱՍԻՆ հօրը բռնած և ցաւելով դէպի դուռը նայելով.

Վա՜յ ինձ, ահա՛ մայրս և Նազլուն :

ՄԱՐԳԱՐԻՏ.

Աղասի՛, իմ ազնիւ որդեակ, էս ի՞նչ կրակ էր, որ քո մոր սիրտը ձգեցիր. (զրկելով) սա՛ իմ հոգիս, հոգւոյս հրեշտակ....

ՆԱԶԼՈՒՆ գլուխը կորացրած մօտ գալով.

Աղասի՛, ... իմ տէր ու տիրակա՛ն ....

ՏԱՆՈՒՏԷՐ ՕՀԱՆԷՍ.

Խղճա՛ որդի՛, քո պառաւ մօրը, քո անբաղդ Նազլուի՛դ, սա՛ մեր վերջին օրհնութիւնն ու բարեւը, հեռացի՛ր, գնա՛, գոնէ թո՛ղ մխիթարութեամբ դերեզման մտնենք :

ՄԱՐԳԱՐԻՏ.

Աղասի՛, քեզ գոնէ փրկի՛ր, հերիք է մեզ մեր ցաւերը, թո՛ղ ես Սարդարի բարկութեանը վրէժ լինիմ. աչքե՛ր, դուրս գաք, չտեսնէք էս վշտերը : Աղասի՛, Աղասի՛, եթէ ուզում ես այս բոպէիս քո մայրը հոգին տայ, մի փոքր էլ ու շացի՛ր. ի՞նչ, դու միաք ունիս մեր դուռը փակես մեր վրայ, ինչպէս փակուեցաւ, սպասում ես, որ Սարդարի զինուորքը գան քեզ բռնելու, էն ժամանակը դու ինքդ քո ձեռքով քեզ սպանե՞ս, չե՞ս իմանում, որ քո մայրը մինչև նրանց գալը ինքն իրեն կըսպանի, թէ էս տեղ մնալու լինիս :

ՆԱԶԼՈՒ.

Վա՛յ ինձ, էդ է իմ մխիթարանքը, ես ի՞նչպէս պէտք է մնամ առանց իմ Աղասուն, առանց իմ տիրոջը. նա ուր գնայ, ես էլ հետը կերթամ: Դու իմ մա՛յր, իմ սկեսո՛ւր, դու մայր դարձի՛ր իմ երեխայիցը, ես Աղասուն միայն չեմ թողուլ. (Աղասուն) տա՛ր, տա՛ր ինձ հետդ իմ տէր, երեսս ոտքիդ տակը :

ՄԱՐԳԱՐԻՏ.

Թո՛ղ տուր Նազլո՛ւ, մի՛ խափանիր Աղասու ճանապարհը, թո՛ղ նա գնայ. տեսնենք դեռ գլուխներս ի՞նչէ գալի, եթէ կենդանի մնանք, ես կուղարկեմ քեզ ուր և լինի նա :

ԱՂԱՍԻ.

Չէ՛, չէ՛, ես չեմ գնալ, ես պէտք է յետին շունչս տամ

իմ Նազլուի գրկումը, իմ Նազլուն չէ համաձայն գնալուս։

ՆԱԶԼՈՒ։

Դժուարին է ինձ քեզանից բաժանուիլը, բայց ճար չը-կայ, պէտք է վճռեմ այդ մահացուցիչ գործը, տէր ընդ քեզ, վեր կաց, գնա, մինչև Աստուած իր ողորմութեան դռները բանայ մեզ համար։

ՄԱՐԳԱՐԻՏ։

Էլ մի՛ ուշացնիր, որդի՛, արի՛, առ քո ծնողաց օրհնու-թիւնն ու հեռացիր մի քանի տարի էս անհաւատների աշ-խարհքիցը։

ԱՂԱՍԻ։

Ես ի՞նչպէս թողում էս անմեղ աղջկանը (ցոյց տալով Թա-գուհուն) զոհ լինել էն անիրաւ Պարսկի՝ էն անխղճմտանք Սար-դարի կրիցը։ Եթէ երբ և իցէ ես իմանամ, թէ Սարդարը բռնի տարել է սրան, իսկոյն հոգիս կըտամ։ (դառնալով դէպի Թագուհին) մի՛ հոգար, քոյր իմ, ես քեզ կազատեմ, ես քեզ խոստացել եմ չթողուլ ոչ ոքի ձեռասել քեզ, ես հաստատ եմ իմ ուխտին։

ԹԱԳՈՒՀԻ։

Իմ ազատարար, իմ պահապան հրեշտակ, քո ծնողաց և քո քաղցր Նազլուի հետ և ես երեսս անկեալ պաղատում եմ քեզ, գնա օտար երկիր, ես ուխտում եմ այդ սուրբ դաշն ինքս պահպանեմ, հետևիմ քո օրինակին, մեռնիմ քաջութեամբ և Պարսկաց ձեռք չընկնեմ։

ՄՈՒՍԱ։

Ահա Աղասի՛, և քո ազատած հրեշտակադէմ կոյսը և քո Նազլուն ու քո խղճալի ծնողքը. ամէնքը 'ի միասին քեզ են ձայն տալի, ինչի՞ չես լսում դրանց, տես այս աղէտալի տեսարանը, վեր կաց գնանք, հերիք է ուշանանք, թուրքերը հիմա կը դան մեզ բռնելու։

ԱՂԱՍԻ։

Ո՛վ թշուառութեանս, հիմա յաղթուեցայ, եղբարք, ձիանքը

պատրաստեցէ՛ք. իմ գորովագութ ծնողք, օրհնեցէ՛ք ինձ, Նաղ-
լու, մնաս բարեաւ յաւիտեան. Թագուհի, յիշէ՛ր Աղասուն և
իր քաջ ընկերացը. ա՛խ իմ մատղաշ ու անմեղ երեխայք, ձեր
տարաբաղդ հօրը չեն թողում գոնէ վերջին անգամ ձեր ե-
րեսը համբուրել, ո՛հ . . . ո՛հ . . . .

ԾՆՈՂՔ զրկելով եւ լալով համբուրելով.

Աստուծոյ սուրբ աջը քեզ հովանի լինի որդի, քո սուրդ
թշնամեացդ արեամբը ներկուի, ուր և լինիս, յիշէ՛ր քո տա-
բաբաղդ ծնողացը, քո թշուառ Նաղլուին և սիրուն երեխայիցդ:

ՆԱԶԼՈՒՆ գլուխը կորացրած.

Տեսութեանդ արժանի լինիմ կամ թէ ոչ երկնքանիս վերայ
մի քանի կաթիլ արտասուք թափես:

ՍՂԱՍԻ.

Մնաք բարեաւ իմ ծնողք, իմ Նաղլու, իմ երեխէ՛ք, Գա-
նաքեռի իշխանք, մնաք բարեաւ:

ՄՈՒՍԱ իր հօր զիրկն ընկնելով.

Մնաս բարեաւ իմ տարաբաղդ հա՛յր, (նայելով Թագուհուն)
Թագուհի՛ յիշէ՛ր խեղճ Մուսային . . . .

Մուսան և միւս ընկերքը չրջապատած Աղասուն, ամէնքին մնաք
բարեաւ ասելով, դուրս են գնում, բոլորեցունց աչքը մնում
է դռանը, որտեղից դուրս գնացին Աղասին եւ իր ընկերքը.

ՏԱՆՈՒՏԷՐ ՕՀԱՆԷՍ.

Ահա մեր սև օրը, մեր վախճանը մօտեցաւ, բաւական է
որքան լաց էլանք, հիմա Երևանումը մեզ սպասում է կախա-
ղան, կացին և այլ պատժելու գործիք. քանի Սարդարի մար-
դիկը չեն եկել, ցարութիւն, գնանք մեր դլխի ճարը տեսնենք,
գիւղը յանձնենք ուրիշի, մենք շուտով աշխարհքից կերթանք
դէպի յաւիտենականութիւն. Սարդարիս, առ Նաղլուն և դը-
նա տուն, դուստր իմ Մարիամ, դու էլ թող ձեր տունը և
գնա մեր ընտանեաց հետ, մինչև տեսնենք վերջն ի՞նչ կը լինի:

Ամէնքն սկսում են դուրս գնալ.

Վարագոյրն իջնում է.

ԱՂԲԻՒՐ

ԱԶԳԱՅԻՆ ԱՐԴԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ

ՊԵՏՐՈՍ ԴԻ ՍԱՐԳԻՍ ԳԻԼԱՆԷՆՑԻ

ՋՈՒՂԱՅԵՑԻՈՑ ԲԱՐԲԱՌՈՎ ԳՐԱԾ

*Շարունակութիւն։ **

57. ԹՈՒԻՆ 1723-ին Յունվարի ԺԳ. ու�ն կէս օրին Ամանոլայ խանն Ըսպահանայ դախիլ ելաւ։ Մամուդ շահն էլ էն օրըն իքինդին յուքմ արար՝ թէ Լոթվալի խանն ուր մարթ կանցօվն գոյ իմ զարշվումն սան յանցկայ։ Մամուդ ղուլի խանին մեծ ախպերն՝ որ դարուղայ էր՝ շահ Մամուդն կանչել էր կուշարն։ Ախտմայ դօլվաթըն և Ղօռչի բաշին ուրցէնց թարինօվն եկէլին շահ Մամուդին կուշարն։ Շահ Մամուդըն ավալ յուքմ արար՝ թէ Լոթվալի խանին դութուաղ արարէք դարուղին և իւր ախպօր գարդանն տվէք. և Լոթվալի խանին խետ օվ ուղումէր գընէր թարվէզ Շահզադէ կուշան՝ ոխչին էլ ուր զարշվումն գարդանն տալ արետ։ Էստոնք ոխչն էլ՝ Խան. Բէկ և Բէգզադայ ին և Ղօռչի բաշուն էլ կանչէց՝ դութսաղ արար և իւր թարինանցօվն ջարթել արետ. և յուքմ արար՝ որ Ախտմայ դօլվաթին վեզն էլ տան, էն պատճառիվ՝ որ իւր ախպեր Ղաղվին մնացէլայ։ Շահ Մամուդին կշտին Բ. Աղվանի սուլթան այ եկէլ՝ որ Ղաղվինու ան եկէլ եկած. կը ընկանեն շահ Մամուդին ոտն՝ ասայէլան՝ թէ

* Տես Դ. տարի թիւ Բ. երես 82։

57 Դախիլ լինել—ներկայանալ. իքինդին—երեկոյեան. Դարուղայ—քաղաքապետ. գարդան տալ—վիրը կարել. վաղխայնվիս—օրաղրապահ. Ջաբայդար—վառօդապետ. դաթլամ—կոտորում. դուզն—սոխածոթիւն. մալհայ բէ մահլայ—թաղէց թաղ։

սորայ տխքեր թէ Ղազվին չընէր՝ Ղազվինըցիք մեզ ոխ-
ջըս էլ կը ջառթին, սորայ ասպէր մեզ էլ և ուրիշանին էլ
մեռնելէ պրռձցուց. և ուզէց՝ որ մեզ խետ յետ դոյ Ըսպա-
հան, կարեցավ ոչ. եթէ ուզես Ախտմայ դօլվաթին սպանես՝
ավալ մեզ սպանե, յետոյ սորայ : Շահ Մամուդն էստոնց իլթ-
մազին ղաբուլ կառի՝ Ախտմայ դօլվաթին սպանում չէ. և
կասի՝ թէ էլ ուր Ախտմայդօլվաթութիւնն առի : Էս բէկ-
ղադէքն՝ որ սպանել այ ԱՃԽԸ. Ջան էր : Եւ յէքսըն Շահ սուլ-
թան ցուսէնին վաղեայնվանն և ջաբայդար բաշին սպանել
արետ : Էս ղաթլամն որ եղավ՝ խալին վախեցավ՝ ոչ քաղա-
քումն մարթ երևաց, ոչ քաղաքն էլ մարթ արեկ : Որ էլ ա-
ղուղ չըբերին քաղաքն՝ օմարէքն շահ Մամուդին արդ արա-
բին՝ թէ դու էսպէս աշկարայ ղաթլամ արարիր, մեչօվ էլ քա-
ղաքըս դամ և ազուղայ չեն բերում, մենք դըզնու ջառթ-
ման անք : Շահ Մամուդն էստուր վերայ էլ աշկար մարթ
չէր սպանում, ուզում լինէր՝ որ մարթ սպանէր՝ գոխտիկ կը
սպանէր. և մալհայ բէ մալհայ ման ին եկէլ՝ ինչ Ղզլբաշ՝ որ
դթելին՝ տաբելին՝ դօլվաթխանումն գոխտիկ սպանէլին, որ
ԱՌՋՃ. մարթ էսպէս սպանվեց :

58. Յունվարի ԺԵ. ումն Բաղդադայ Հասան փախին էլ-
չի արեկ Ըսպահան անուն Օսման աղայ, ԱՃԻ. մարթ ունէր
վերէն : Էս էլչին եկէլէր՝ որ Մամուդին Ըսպահան առուլն
մումբարաք առէր : Մամուդն մին գօնաղ Ճանայպար ուր մին
ուղբաշի ուր թաբինօվն ազարկէց էլչուն ղարշու՝ որ աղա-
թօվ բերին Ըսպահանայ քաղաքըն : Եւ էս ուղբաշին էլչուն
մեմանդար կը շինի : Էս էլչին՝ որ կըդոյ քաղաքն դախիլ գնի՝
մին լեվ տուն տվին և ուր խօրակին՝ որէ ուղ, պրինձ, խաց,
ոչխար, խավ, բարալաթ թային արարին, որ յամէն օր տան,
ամայ փող չըտվին : Շահ Մամուդն Մամադ նշանին աղար-
կէց էլչուն կուշտրն՝ թէ շահ Մամուդն նամէն ուզում այ,
տուր տանէմ : Էլչին էս ջուղաբն այ տվել Մամ նշանին՝ թէ
Հասան փաշէն ասացել այ, որ ես իմ ձեռն նամէն տամ շահ
Մամուդին : Մամադ նշանն գնացել այ շահ Մամուդին խա-

58 Փախին—սխալ պիտի ըլի փոխանակ ասելու փաչիին. մեմանդար—հիւրընկալ, ուղեցոյց. բարալաթ—պաչար. նամէն—նամակ. սամբուր—սամոյր, մուչտակ. մուֆտի—միւֆթի.

բար այ տարէլ : Էլչուն Ըսպահան դախլ լինելէն ի. օրէն յետ Մամուդն լեվ մէջլիս արար, յինքըն մէջլսումն նստելայ, էլչուն ուղեցելայ, էլչուն տարելան մէջլիս. և շահ Մամուդն յուքմայ արարէլ՝ թէ Ռ. աղվան՝ ոխջն էլ զառբաջի և սամբուր խադանեն՝ մէջլիսումն կանդընեն և շատ ուժօվ մէջլիս արար : Միան յինքն և էլչին այ մէջլիսումն նստէլ, էլ մեչում նստացուցել չէ և նամէն որ էլչուցն յինք այ առէլ՝ յետ մէջլիսին նամէն կարդացէլայ, ասացէլ այ թէ էտ էլչի չէ, ջաշուղ այ՝ուղեցէլայ՝ սր ընդանում դնի, դընու մեռցանի: Շահ Մամուդին մուֆթին ուղեցել չէ, ասացէլայ՝ թէ ինչ կուզի լինի՝ էս օր էլչի այ և էլչուն զավալ չկայ, էտ բանն առել մի՛ն և ի. սր էլչուն կը պախի. յետ ի. օրէն էլչուն փոքր ինչ փէշքաշ և խալաթ կը տան և նամին ջուղաբըն էլ կը գրեն՝ կըտան՝ թէ վերկայ գընայ :

59. Էս Յօսեփ Ալիսալայմիանն էլչուն ճանանչ այ եղէլ, ուր Շադիրվանին էս Յովսէփին կանչ ակարկէլ՝ թէ եկ իմ կուշան՝ որ քեզ խետ բան ունիմ: Էս Յովսէփին Յոմանլուվի շոր կը խադանի՝ կը նայ էլչուն կուշանն : Էլչին սրանէ Ըսպահանայ յաֆշալն կը խարցանի՝ թէ զու տեղս աս էլէլ, էս Ֆըթուրին խաքիսթն ինչպէս այ՝ ինձ տայ : Էս Յովսէփն ինչ որ անպէտք բան այ եղէլ՝ էլչուն ասացէլայ, ինչ որ պէտքական բան եղէլ՝ ասացէլչի : Քանի օրէն յետ մին էլ կը կանչի՝ կը տանի կասի՝ թէ բանդարին զոմբրուկն քանի այ. ասացէլ այ՝ թէ զումանք թէ տարէն ԺԵՌ. թուման այ, ամայ յալդայ էնչանք գէլուր չկայ. և յալդ այ բանդարն էլ նավ չի գոլվան, բանդարըն կապ այ նավէրն թամամ գընման ան. Պասրայ՝ որ գոմբրուկըն ձեզ այ գոլման : Էս Յովսէփըն ասայ՝ թէ ես էլչուն էսպէս ջուղաբ տվի, ամայ Ֆռանկից ըսելամ, որ էստի քանի տարվ հառէչ մինչի ԽՌ. թումանն այ եղէլ բանդարին զումրուկն, որ ես թիվը 1721 ընտեղէքն ամ եղէլ տարին ԺԷՌ. թուման բանդարին յիճարէն էր. և էլչին մին

59 Կանչ ակարկել—կոչ առնել. Ֆթուր—չիոթ. բանդար—ծովածոյ. զոմբրուկ—մաքս. զումանք—կարթիք. բարին—մարգարիտ հանելու տեղ. Մաչկատ—կղզի անուն է. թամիխ—հաստատ. մուղախել—եկամուտ. խոնթքար—սուլթան. խալամ—պատիժ, հրէշք :

էլ էս կը խարցանի՝ թէ Բարին մարդարբդիցն որչանք գէլուբ կայ։ Յովսէփին էս ջուղայն այ տվել՝ թէ Բարինու էլ գէլուբ չկայ, էս պատճառիվ որ Բարին քանի տարի Մաշկատին արապին ձեռնումն էր. մարդարթին վրասողանին վարթարաֆ ելան. էլ մարթ չի մնայ՝ էլ որ մարդարիթ վորսայ և Բարին խարաբ այ ելէլ. էս Յովսէփին ասայ՝ թէ ես էլչուն էս սուտ ջուղաբն տվի՝ որ չնի թէ գնայ Բաղդատ և տեղէն գնայ Բարին զաֆտի։ Ես թախիին լսելամ՝ որ Բարինու մարգարթին յիճարէն ԺԸՌ. թուման այ. և էլչին էս էլ այ ասայել՝ թէ Ղզլբաշի երկրին մուդախիլն շատ այ։ Յեսի գնացի Ըսատմբոլ՝ խոնթքարէն ՁՌ. մարթ յինք կառումմ կը գամ Ըսպահան և կը գնամ մինչի Ղանդայհար կը զաֆտամ։ Էս աղվանն Ա. մարթ չե, էս Ա. խաշամայ որ Աստուածանէ արեկ Ղզլբաշին վերայ։

60. Փեբրուարի Դ. ումն էս էլչուն ըռուսխաթ ելավ՝ որ վերկայ գընայ. և շահ Մամուդն զադաղայ արար՝ թէ էլչուն ասայէք՝ որ ուր խեռ Ղզլբաշի յէսիր մարթ և կընիկ չըտանէ, թէ տարավ՝ խավաթ կու քաշի։ Էլչին Ըսպահանայ վեր կալման օրն՝ աղվանին մին ուղբաշի ուր ասկարօվն գնացքաղաքէն յերդար։ Ա. աղաջումն էլչուն ճանայպարումն կանդնել այ և Ա. ուղբաշի ուր ասկարօվն թօխչուն դարվազումն էր կանդնել՝ որ էլչին դընաման էտ Բ. տեղն՝ էլչուն պշտրռատեն, տեսանն՝ որ Ղզլբաշ չինի տանում խտուրն։ Էս ուղբաշէքին էլչուն քշտին ԺԲ. Ղզլբաշ ին գտել. էս ԺԲ. Ղզլբաշին էլչուն քշտին վիզն տվել ին և Բ. Ղզլբաշի կնիկ կոխտիկ սանդղումն տարել ին։

61. Էլչին Ըսպահանայ գընացել էր Համադան. Համադանայ խանն էլչուն պախել էր, զասէ յքմօվն Խե. օր գօղ դութասաղն զախել էր, էլչնուն էնպէս էրնշանց տվել՝ որ յինքն շահին խայինութեան խամար չէ գնացել Մամուդին կուշտն. գընացել այ Ըսպահան տեսանի՝ թէ Մամուդն Ըսպահան ինչ-

60 Ռուսխաթ—թոյլտուութիւն, արձակումն. խավաթ—նեղութիւն. Թախչի—տեղի անուն է. դարվազայ—քաղաքի դուռ. կոխտիկ—ծածուկ.

61 Զասէ—չախզատէի. գօղ—աչք. գօղ դութսաղն—կասկածելի եղող մարդ. զախել—սխալ պիտի ընի փոխանակ ասելու պախել. դաղբմիչ առուլ—թողնուլ. չափարվար—չափարի պէս։

պէս այ զաՓտէլ և ինչպէս խաբխաթ այ յանցկացէլ։ Խե։օ-
րէն յետ շահզատիցն հրայման կը գոյ՝ որ Էլչուն բաց կրթո-
ղուն։ Էլչին կը գնայ Բաղդատ, տեսնել այ որ Ցասան փաշէն
ասկար այ աղարկում Համադանայ վերէն՝ որ Էլչին պռցուցա-
նեն բերէն։ Յետ Էլչին Բաղդատայ պախիլ գնի՝ ասկարին
դարպիշ կառնեն և Էլչին Բ։ օր Բաղդատ կը մնայ, Բ։ օրէն յետ
Ա.Ճ։ մարթ օվ Էլչին չապարվար կը գնայ Ըստամբոլ։

62։ Մամուդն դոստի առի Օսմանլվին խետ, ամայ Օս-
մանլուն Մամուդին խետ դոստի չէ առում և մինչի թարքը
Օսմանլուն Մամուդին Ա։ սէր չէ նշանց տվել։

63։ Մամուդն ասկար աղարկէց Շիրազայ գըմանն, արաղ
հաՃի Բաղէրին վերայ՝ որ էն գըմանին գէղարէնքն պախում
այ ելել։ Մամուդին ասկարն տվել այ՝ հաՃուն ասկարին կոտ-
րել այ և փախցուցել՝ որ տեղէքէն շատ ազուղայ ան բերէլ
Ըսպահան՝ որ Ըսպահան փոքր ինչ յեժանութիւն այ ընկել։

64։ Մամուդն Նասուրուլայ քօռ սուլթանին ԱՌԲՃ։ աղ-
վանով աղարկել այ Համադանայ վերայ։ Համադանայ խանն
ԵՌ։ մարթ օվ դարշու արարել։ Աղվանն էս ԵՌ։ Ղզլբաշին վե-
րայ երիշ արարել, Ղզլբաշն փախել այ գնացել քաղաքն։ Աղ-
վանն Բ։ խետ Համադանայ վերայ երիշ արարէլ Ա։ բան չէ
կարողացել շինել, յետ այ դառցել՝ եկել Դարդաշին։ Ղզլբաշի
գէղարէնքն խարաբ արարէլ, մարթն ջառթել այ, տպրանքն
տարել այ։ և ԵՌ։ տուն սունի ուրէնց օղուշաղօվ Դարդա-
շին ու ուրէնց խետ տարէլ այ Ըսպահան։

65։ Մամուդն որ Ըսպահան առէլ այ, թէ խայէրին, թէ
Ֆռանկանոցէն, թէ թուրքէրին, թէ Մլթանէքոցէն՝ որչանք
Ջառիմայ փէշքաշ որ յինք այ առել և որչանք խալաթ որ
յինք այ առել և որչանք Ջաբր որ արարել այ խալխին և այս
է որ թխթիս էն յիրեսուն՝ հաբ բէ հաբ գրած այ որպէս
լինելն։ Ջուղու խայէրոց վերայ Ջառիմայ ան գրՃել նադդ փող՝
Ջանն այ ՀՌ։ թուման, որ էստուր ԺԷՌ։ թումանը յինք ան

62 Դոստի—բարեկամութիւն։

64 Դարդաշ—տեղի անուն է։

65 Ջաբր—նեղութիւն, չարչարանք։ հաբ բէ հաբ—մի ըստ միոջէ։ դարդան—վիզ։ դայեայ բէ՝ թիլ—փչանալ։

առել և ԾԳՌ. Թումանն սանադ։ ՀՌ. Թումանն ան յինք առէլ չուն որ կարեցել չէն ժամանակին քարսաղի առել։ Դ. խոգու ղարդանն տվել ան՝ այս է քալանթար Խաչիկին, Խալդարէնց Գրիգորի որդի Սարատին, Սամբուրի Մանուկին, Կոլայկապախէնց Ակոբջանի որդի Սարատին. և ուզեցել ան որ Խալդարէնց Յովանի որդի Ակոբջանին էլ սպանեն, լաս մուայ-սինն շատ քսմակ այ արարել՝ Ակոբջանին սպանելէ պազրցուցել այ, ամայ Ակոբջանէն շատ փողայ դուս ելէլ. և Խայերն մինչեւ ԾԳՌ. Թումանին քարսաղին առեն ոչ՝ պռծման չեն։ Էտուր վերայ շատ նեղութիւն կըքաշեն և շատ շատ մարթ զաեայ գնի։

66. Ցընդվեց վերայ ԻԵՌ. Թուման Ջառիմայ եայ գձել ՈԻՌ. Թումանն տվել ան, ԻԵՌ. Թուման ԵԻՌ. Թումանին քարսաղին կարացել չեն առել, ոնչն էլ թաֆարղայ ան ելէլ՝ որն զար այ կերել՝ մեռել այ, որն զասաֆթուայ մեռել, որն փախելան փարայի յընդուայ մնայել։ Ցընդվելին որ քուրթից սանադօվ և դրավօվ, որ թալաբ ունին Ջուայիր, ոսկի, արծաթ և տան զինաթ. թամամին Մամուդըն յինք այ առել, փողն տվել չէ և Ջառիմին վերայ խսէբել էլ չէ։ Մլթոնէքոյէն որն մեռել այ, որն փախել այ, որ ուրէնց յօդինին ամրրած այ ելէլ՝ Մամուդն էն յօդինին էլ բացել այ՝ ինչ որ միջուն ելէլ այ՝ զաֆտել այ։

67. Յաքիմ պաշուն ԻՌ. Թուման Ջառիմայ եայ յինք առէլ պատճառն էս, որ ԻՌ. Թուման Մամուդն յիմացել այ որ շահին թամամի բանըն Յաքիմ պաշուն ձեռնուն այ ելէլ։ Էս ԻՌ. Թումանըն ԺԲ. օրուն այ յինք առէլ, ոսկին, Ջուայիրն և մարգարիդն՝ ոնչ մին տեղ քաշելայ. ֆի մնխալն ԱՌ. դիանոֆն այ վեռել։

68. Վալանդզի սարքարիցն թէ Ջառիմայ, թէ փէշքաշ այ յինք առէլ. այս է Մամուդն Ըսպահան որ առելայ՝ փէշ-

66 Ցընդվել—Հնդկացի, որք են կրակապաշտ Պարսիկներ. թաֆարղայ—ցիր ու ցան. զար—թոյն. զասաֆթի—հոգս, մտածմունք. փարայի—տեղի անուն է. քուրթ—մահմեդական. սանաթ—մուրհակ. ամբրած—փակած. օղա—սենեակ. օղինին—յոգնակի օղա բառի։

68 Վալանդզի—Հոլլանդացի. սարքար—սարդար. ջինս—նաղդ.

քաշ ան տարէլ ՉԻՆս ՁՌ. Թուման. Ըսպահան որ մուայսար այ եկէլ՝ շահ Վալանդիվլիցն ԾԵՌ. Թուման փողայ փոխ առէլ ԻՆՌ. Թումնի Ջուայիր ղրավայ դրէլ։ Ցեր Մամուդն քաղաքն առէլայ՝ լսէլ այ որ շահին էսչանք Ջուայիր կայ սոցայ քշտին ղրավ. յինք կառուս՝ կասի. փողն կը տամ էլ տալ-ման չէ ԺԷՌ. Թուման։ Մամուդն ԻՌ. Թուման փող փոխ կուզի սոցանէ, շատ Ջաֆօվ Մամուդին սէկրէտարին խետ կը շինեն ԸՌ. Թուման՝ կը տան, յետոյ էլ ԼՌ. Թուման ուզէց. տվին ոչ։ Քափտանին տարան՝ Թակեցին, դրուան ղարայուլ դրին, ԻՌ. Թումանը յինք առին և ուլէնցն դուԹսաղ տ-բարին՝ որ մնացեալն էլ տան՝ պռծանեն ԼՌ. Թուման։ Դ. վաֆայ Ջառիմին Ջանն այ ԿԱՌ. Թուման և քօլին Թիք Ջանն այ որ Դ. ղալամէ ԱՃԷՁՌ. Թուման։

69. Ինկլիզի սարքարիցն Ջառիմայ ան յինք առէլ ԴՌ. Թուման նաղդ փող. Ծ. բեռն մահուդ և քիֆի չուխայ՝ որ գինն այ ԴՌ. Թուման որ Բ. սին՝ Թիք Ջանն այ ԷՌ. Թուման։

70. Ֆռանկսիզի քափտէնիցն Ջառիմայ էն յինք առէ Կ. Թուման։

71. Շիրազեցի հաճի Նազարն Ըսպահանայ փոխէլայ, նօրայ յօդէն բայցէլ ան, Թէ նաղդ՝ Թէ ՉԻՆս միջումն դուս այ եկէլ՝ Ջայնն այ ՁՌ. Թուման, որ քօլ Մամուդին Ջաբրն՝ նաղդ և ՉԻՆս որպէս նմարայ 65-ից մինչի նմարայ 71 ըն ԱՃՁԹ. սկոց Թուման։

72. Քաղաքումն մնացած մարդիքն որ ունեսր ան ելէլ. Թամամուցն Ջառիմայ ան յինք առելը որ ԱՌ. Թումանէն մինչի Ծ. Թուման Ջառիմայ տվոզ այ ելէլ որ շատ բաֆիր փող Ջառիմայ յինք առին։

73. Եւ ինչ քուրթ որ մեռելէր կամ փախելէր, էնտոնց քափդան—նաւապետ. վաֆայ—սխալ պիտի ըլնի փոխանակ դաֆայ, որ նշանակում է անդամ. քօլ—ողջ. Թիք—ողջ։

69 Քիֆի—հատ չալի անուն է. Բ. սին Թիք Ջամ—երկուսին բոլոր գումարը։

70 Քափտէն—նաւապետ։

71 Ջաբր—զրկողութիւն. ՉԻՆս—չարժական մուլք. սկոց—чекань։

72 Ունեսրան—մէջն, նրա մէջ, նեքսեւ. բաֆիր—անչափ. յուՉրէք—հարուստ խանութներ։

յուջրէքն էլ բանալ արեան, շատ բաֆիր ապրանք դուս արեկ յօդինումն որ էլ Մամուդն զաֆտէց։

74. Դաֆայէլ թէ քաղաքին, թէ ջուղու վերայ ջառիմայ դձէց. քաղաքինն այս է՝ ԲՌ թօփ զառբաֆ՝ Ըսպահանայ, Քաշանայ և Եզտի բան. ԲՃ. թօփ գմին թիլայ և գմին նօղօրայ դիբայ զար ԱՃԾ. դանայ փաթանի զառ մանդիլ. ջուն որ քաղաքըն խարապ էր։ Էս վերջին շատ կէսն տվին, մնացեալն կարեցան ոչ տալ։ Ջուղայեցիք տվին այս է ԵՌ. դանայ աթլաղ, ղութնի, մահուդ և շալ կապայ, ԸՌ. ջուխայ կապայ առանց կար տվին թայերն որ կարեն ասկարին խմար և շատ լեվ լեսէբ, դօշակ, բարծ՝ որ ոխչն էլ զառ և ղումաշ այ ելէլ։

75. Մամուդն շատ մաղրուրացել էր, էս պատճառիւ որ շատ անչափ խաղինայ եայ բահամ արարէլ և խաղինէն օր ըստ օրէ էլ իվելանումայ. ուրն էնպէս այ համարում՝ որ աշխարումըս քան ըզիւրըն էլ մեծ չկայ։

76. Մամուդն Գ. դաֆայ խաղինայ աղարկէց Ղանդահարն այս է նմարայ 1 Նուր Մամադին խետ, 2 աղայ Մուսէ խետ, 3 Մամադ Նշանին խետ։ Վերոյ աղայ Մուսէ խետ Կ. խայի տղա եայ աղարկէլ որ համ խաղինին տիրութիւն առեն, համ Ղանդայհարումն ավադան, որ թախեխ Մամուդն Ըսպահան առելայ, ամայ էս խաղինէքն էնտուր աղարկէց՝ որ Ղանդահարէն շատ ասկար և խիզանօվ տուն գոյ Ըսպահան. ամայ Մամադ Նշանին խետ թախեխ ԺԴՌ. աղվանի ասկար պիտի գոյ փայիզին՝ որ Համադանայ և Ղազվինու վերայ գընան։ Էս թարեղումն Նասուր օլայ քօռ սուլթանին խիզանն և ԱՌԲՃ. տուն աղվանի խիզանն Սիստանայ եկին՝ Ըսպահան դախիլ ելան։

77. Գաղումն շահ ղալայ էր շինէլ Մամուդն քանի ան-

74 Դաֆայ—անգամ. Քաշան—քաղաքի անուն է. Եզտի—քաղաքի անուն է. գմին—տեղ, հող. թիլայ—ոսկի. նօղօրայ—արծաթ. դանայ—հատ. փաթան—Հնդկաստանի քաղաքի անուն է. մանդիլ—թաշկինակ։

76 Մաղրուրացել—հպարտացել. փայիզին—աշունքին։

77 Ղալայ—բերթ. դավռ—կրակապաշտ. լսղմ տալ-գետնափոր անել։

գամ վերէն այ գընացել կարացել չէ առուլ։ Էս վախտումն գավառէրն գնացին լաղմ տվին դալէն շուռ տվին։ Գաղն առին։ Թամամ մարդիքն ջառթեցին։ կանայքն։ ախչիկքն և ապրանքն քաշեցին՝ բերին Ըռպահանայ քաղաքն։

78. Խիղհուն և Վէնըսպահան աղվանն կարացել չէր առուլ։ Էս Բ. տեղն աղվանին խետ տիր շատ քալայ ան տվել։ Էս վախտումն տեսին որ էլ ճար չկայ։ ուրէնքն ուրէնցն տալվել ան աղվանին Թարի ան դառցել։

79. Աղվանն Վրացուցն շատ այ վախման։ չուն որ Էստի յառէչ Վրացուն զօռըն տեսել ան և Վրացիքոցն ասացել այ՝ Թէ դրեցէք ձեր երկիրն ձեր մարդկոցն՝ Թէ դիբի մեզ հարաքաթ չառէք։ Թէ որ դիբի մեզ հարաքաթ արարին՝ ձեզ ոխջդ էլ կը ջառթենք։

80. Մամուդին նիաթն էն այ՝ որ Թամամ Ղզլբաշի երկիրն զաֆտի։ յինքն Թաղաւորի և նիեաթ չունի՝ որ երկիրն Թալանի։ վեր կայ՝ յետ գընայ Ղանդահար։ և չուն որ Թարեզումն դալայբալուղայ՝ մեկն ադալաթ չունի և ադալաթի ֆիքրում չէ։ ֆիքրն էն այ որ Թշնամին ջառթի։ որ Թշնամին աչկըն վախի։ ապայ գումանք՝ որ յետ դառարելէն լեվ աղալաթ ունենայ։

81. Մամուդին Թարեզումն ասկար ունի այս է՝ որ ներքոյ գրած այ. ԶՌ. մարդ ասլ աղվան։ ԲՌ. մարդ Ղզլբաշ՝ որ են Թվանկչի ԱՌ. մարդ դավա։ ՁՃ. մարդ խայ Թվանկչի։ Լ. մարդ Վրացի։ Կ. մարդ Օսմանցի։ Ծ. մարդ մոլթանի։ Վերոյ է. դաֆայ ամենայն աղգից մարթիքին ջամն այ. ԹՌԷՃԽ. ։ Ղըզլբաշն։ խայն։ Վրացին՝ որ ղուլան գրվել՝ ուրէնց կամքովն չեն գրվել ուզուման եղէլ՝ որ գրվեն ոչ։ շատ չարչարէլ ան։ սոքայ էլ մնացել ան նաչար՝ ուրէնց նաչարութենէն ղուլ ան գրվել։ Մամուդն ուր ասկարին վերայ շատ ուժավ ղարիթ այ։ որ Մամուդին բերանէն ինչ խօսկ որ դուս այ գոլման և ինչ յուքմ որ առումայ՝ շուտ կատարումն տալման ան և ինչ սա-

78 Դիր—շատ. քալայ տալ—հակառակել. Թաբի—հպատակ։
79 Հարաքաթ առուլ—չուել։
80 Նիաթ—դիտաւորութիւն։
81 Զաբիթ—վերակացու։

հաթում որ ասում այ՝ թէ վերկացէք, էլ ան սահաթն վեր ան կալման։

82. Մամուդն ուր ասկարին յուքմ արար՝ թէ յամէն մարդ ուր խամար Դ. տարէն ազուղայ շինի։ Որ թամամ աղվանն Դ. տարէն ազուղայ շինեցին, որ Ա. տարին յանց այ կացէլ և ուրն էլ շատ ազուղայ ունի՝ որ ուր թամամի ազուղէն քաղաքին բերթն այ լցէլ և ղէյրիմասաղ նոքար՝ որ ունի ուրիշ թագաւորաց պէս՝ ադաթի ազուղայ չէ տալման, գայ բէ գայ ազուղայ եայ տալման և իւր ասկարին՝ որ է աղվանին՝ դօնլուղ չէ տալման, չուն որ վօլնայե այ արարէլ որ ինչ քէսիր առեն՝ ուրէնցն լինի. ամայ ղէյրիմասաղ նոքար՝ որ բռնել այ՝ տարէն Զ. թուման դօնլուղայ դրել. ամայ դառ տըվել չէ։ Քաղաքին խալին Աղվանին ուզում չի. ամայ աշկար ուզում այ։ Ղղլաշի մեծայմեծքն էլ էնպէս, ամայ էն ինչ կուվարարն այ՝ շատ ուզում ան Մամուդին, չուն որ շատ վօլնայ տվել ամենայն կողմանէ և շահն էստի հառէչ դավռէրին թուրքացուցել էր, յալդայ Մամուդն ասացել այ՝ թէ էլ ձեր օրէնքումն կացէք։ Էս Ջահդան դավռն Ջանօվն ղուլուղ առում։

83. Մամուդն Դ. մարթի փող այ շախօվ տվել՝ մարթայ-ղըլուս Բ. թումանէն մինչի Ի. թուման այ տվել՝ որ դուքանդարութիւն առեն, ֆի թուման ամէն Բ. դիան մուդաթի լինի, ամայ սանադն ղուլար աղասի ադայ Ալմասին անման այ յինք առման և Ջառ այ կանչել տվել՝ թէ օվ դուքանդարութիւն. կառի, որ փող կուղի՝ դայ տամ։ Էս փող վերողանին՝ որն որ դօլվաթայոր այ՝ Բ. Գ. թուման այ վերել Ջահաթն էս որ խալին տեսնէն, որ Մամուդին պարտական այ, ղօռ չառեն. օվ քասուբ այ շատ փողայ վերել։

84. Մամուդն Մայիսի ԺԹ. ումն խայերին էլ կը բռնի՝ թէ բաղի փողն էլ տվէք։ Խայերն կասեն՝ թէ ինչ ունէինք, տըվինք, էլ չկայ ընչէ տանք, խացայ դին էլ չունենք, մենք մին

82 Ղէյրիմասաղ—այլաղաւան. դայ բէ դայ—երբեմն երբեմն. քեսիր առել—ճարել. դառ—դեռ. Ջահդան—ճանապարհ։

83 Ջառ-հրատարակումն. Ջայհաթ-աշխատանք. մուդաթի-փողի չահ։

84 Բաղի—մնացեալ. միստաճ—կարօտ։

ՃՈԹ խացի տէր ինք, յալդայ խացի մխտաճ արարիք, գեռ-
պռճանք ոչ։ Մամուդն կասէ՝ թէ Խայն ինչ կառի փողն,
փողն մեր ըսպայուն պիտի՝ որ կռվարար այ, Խայն պիտի ը-
ռայաթութիւն առե և վար ցանք առի, էտ փողն և տուն
անդն որ ունէք՝ ձեզ պէտք չէ։

85· Մարտի Ա· Մամուդն շրու արար՝ թէ Զուղայ, թէ
զեղարէնքի Խայէրին և Ղզլբաշի թուրք ըռայաթին՝ ոխջին
մալջահաթն գձէց՝ թէ որչանք շահին էք ելէլ տալման՝ էն
զարարօվն ինձ էլ խարջ տվէք։

86· Ամանօլայ խանն էս ցօվսէփլոյն կը խարցանէ՝ թէ
Ըռուստն ինչպէս մարդ այ, Ֆռանկ ան, ինչ ան։ Ասացէլայ՝
թէ օրէնքն ջոկ այ, ամայ ուրէնքն Ֆրանդի պէս մարդ ան և
Գիլանայ ծօվին էն յիրէսուն Ա· ալիմ նշան թագաւոր այ·
Խարցուցէլայ՝ թէ ասկար շատ ունի։ Ասացէլայ՝ թէ կարող
այ Բճռ· մարդ խանի և լեվ կռվարար ան։ Ասացէլայ՝ թէ
մին փոքր դնջվինք· ձեր Ֆռանկսդին ֆիքրն էլ կառենք։

87· Էս ցօվսէփն՝ որ Ըսպահանայ վեր այ ելէլ կալման՝
աղուղէն էս կինն այ ելէլ խայն ֆի ղիդրն Զճ·դիան, պրինճն
ֆի ղիարն ԱՌԲճ·դիան, ուղն ֆի ղիարն ԴՌ·դիան, խանվն ֆի
դանէն Էճ· դիան, շաքարն ֆի ղիարն ԶՌ· դիան։ Էնտի յա-
ռէչ շաքարին ֆի ղիարն ԺԲ· թումանայ ելէլ յալդայ ԶՌ·
դիան այ դառցէլ ջահաթն էսայ՝ որ շաքարն եկէլ այ՝ քօմշայ
բանդ էր ելէլ յեփ· որ կռիվն խաղաղէլայ· քօմշայ առէլ ան,
էս շաքարն բերելան Ըսպահան, ծախս յեժանացէլայ։

88· Օգոստոսի Թ· ցամադանեցի Խայ Նուրիկէ որդի Ռա-
կանն ասայ՝ թէ ես Ղազվին ի՝ որ Ըսպահանայ մարդ էր փա-
խել՝ արեկ Ղազվին, ասայ՝ թէ Ինկլիզի նավէրն եկէլ ան բան-
դարն, ԶՌ· մարթ այ ելէլ միջումն, որ բանդարէն վեր ան կա-
ցէլ եկէլ ան Շիրազան խանսել։ Օգոստոսի Ժ· ումն Մկրտիչ
վարդապետան թարվիղու արեկ, ասայ թէ Ինկլիզին բանդարն
դոն թարվիղ էլ լսեցի։ Թիվն 1723։ Օգոստոսի 10 Զուղա-

85 Շրու առուլ—հրաման անել. մալջահաթ—հարկ.
86 Աղիմ—յայտնի, երևելի, պայծառ.
87 Դանէն—հատ. քօմշայ—լիկեանի անուն է.

յեցի Նաղաբի որդի Մկրտիչ վարդապետին Թարվիզու արեկ Ըռէշտ, Ներքոյ գրեալ խաբարանին ասաց ։

89· Թիվն 1722 Օգոստոսի ԺԸ· ու�ն Արզրումու փաշէն վեր էր կալման՝ որ գընէր Յարևան, ինչ որ ունէր՝ դուս էր գնացել ։ Էն օրն որ փաշէն ուզումէր Արզրումու վերկէր, Ըստամբօլու սուլթանէն ֆարման արեկ՝ թէ գընաս ոչ, որ Ղըզլբաշն Մամուդին խետ խաշտելայ և Ըռուստէն եկէլայ՝ մտելայ Ղզլբաշի երկիրն, դու տեղիտ բերթէն դայիմիր ։

90· Օգոստոսի ԺԵ· ուիմն փաշէյն մարդ արեկ Ղզլբաշի երկրին Խայէրին կուշան, խարցուց՝ թէ ձեր երկրիցն ինչ խաբար ունէք, աղորթ որ Ըռուստն եկէլայ ձեր երկիրն և նիաթն էն այ՝ որ դէս դոն ։ Մենք ասացինք՝ թէ մեզ էտպէս խաբար չկայ ։ Ամիս ԺԷ· ուիմն փաշէն յուքմ արար՝ որ Արզրրումու երլու թէ Խայից, թէ Գուրթից Գ.Ճ· մարթ բոլորեցին, որ բերթին քանդած տեղէրն շինեցին և բերթէն լավ դայիմեցին ։

91· Օգոստոսի Ի· ուիմն Տրապիզոնայ չափար արեկ՝ թէ Ըստամբօլու շատ նավայ եկէլ՝ որ Ջաբախանա եայ բերէլ· տավար և մարդ աղարկիր Տրայպիզոն՝ որ Ջաբայխանէն բերեն Արզրում ։

92· Արզրումայ փաշէն շատ մարթ և տավար աղարկէց Տրայպիզոն՝ որ Ջաբայխանէն կրեցին՝ բերին Արզրում՝ թօփ, ղումբարայ, թվանկ, թուր, դուլուլայ, բարութ, նիզայ, թին, տոպրակ ։ Ջաբախայնէն՝ որ արեկ խասավ Արզրում, փաշէն պաշլամիշ արար՝ թօփէրն և բոմբրն դձելն, որ փորձումէր՝ որ տեսնէր ինչպէս այ և Արզրում գոմբրուկի փողն յավալայ ելավ՝ որ փաշէն յինք առու՝ որ ազուզայ և սուխարի շինի ։

93· Արզրրումու փաշէն սուլթանին յուքմօվն սարասկար դարցավ Է· փաշայ ուր ղոլ բէկի և Բաեայզիդին բէկն էլ ուր ձեռնատակումն այ՝ որ յամէնու գրէց՝ որ ուրէնց ասկարօվն

90 Երլու—բնիկ։

92 Ղումբարայ—ռումբ, орудія· դուլուլայ—գնտակ. նիզայ—նիզակ. գոմբրուկ—մաքսատուն. յավալայ—հրաման դուս էկաւ, որ պահանջին։

93 Ղոլբէկ—հպատակ բ.գ։

յուզիր կան, որ յեփ Արզրումու փաշէն յուքմ առի, վեր կան՝ գընան Ղարս, ջամ լինեն Արզրումու փաշօվն :

94· Լեկզին որ եկած այ ելել Ղզլբաշի երկիրն, չափմիշ այ առելուզումայ ելել՝ որ գընայ Ցարևան էլ չափմիշ առեն : Արզրումու փաշէն Լեկզուն գրել այ՝ թէ յեփ Ցարևան կը խասանես՝ չնի թէ գընաս Էջմիածնան վանքըն թալանես, որ էն վանքն մերն այ, չուն որ փաշին նիաթն էն այ ելել՝ որ գոն՝ Ցարևան զաֆտեն, ուրէնցն մնայ. սուլթանն որ ֆարման այ աղարկել Արզրումու փաշին՝ թէ յեփ Ցարևան կառուս, չնի թէ Էջմիածնուն վանքըն թալանես, Արզրումու փաշէն վեր էր կայել՝ մեր կաթուղիկուսին գրել՝ թէ ես ձեզ էս լեվութիւնն արարի, ինձ ԺՌ. մառչիլ աղարկէս. կաթուղիկոսն ջուղաղ էր տվել՝ թէ ես մին կարդացողամ, ընչէ քեզ ԺՌ. մառչիլ աղարկէմ : Էստուր վերայ մեր կաթուղիկոսին շատ ախ էր տվել :

95· Արզրումու փաշէն յուքմ էր արարել՝ որ Օսմանցու երկրէն էլ ցորէն չը գընայ Ղզլբաշի երկիրն և գրել էր ուր Դ. կողմն քաղաքի գեղի՝ որ ազուղայ բոլորեն՝ աղարկէն Ղարս :

96· Սեկտեմբերի Ը. եկի Ղարս, տեսի՝ որ Ղարսու փաշէն թողման չի ցորէն գընայ Ղզլբաշի երկիրն և մարթ էլ չեն թողման գնայ, ազուղայ ան բոլորում, թունդ բանի վերայ ան և չուն մեր կաթուղիկոսն գրել էր Ղարսու մեր խայերին՝ թէ մեռոն պիտեմ օրհնել սուրբ խաչ օր եկէք յուխտ, Ղարսու փաշէն դադաղայ արար՝ որ Օսմանցուն ըռայեաթ խայ չը գընայ Էջմիածինն և ասաց՝ թէ ձեր կաթուղիկոսն Ըռուստին խետ միայվորվել այ և Ըռուստըն բերել այ Ղզլբաշի երկիրն՝ որ գոն մեղ վերայ : Ցալդայ էտ մահանօվն ուզէք գընէք՝ ձեր վանքումն աղօթք առէք, որ մենք վարթարաթ լինենք, դուք ուրախանէք, մենք ձեր կաթուղիկոսին էստոնք թողելց չենք :

97· Սեկտեմբերի ԺԴ. ունն եկի Էջմիածինն, տեսի՝ որ Ղզլբաշն թողման չի՝ որ ուր երկրայն պրինձ տանեն Օսմանցու երկիրն, չում դուք թողման չէք մեր երկիրն ցորեն բե-

94 Չափմիշ—կողոսպել. մառչիլ—փողի անուն է :
96 Թողելց—թողելոց :

բինք, մենք էլ չենք թողման՝ որ դուք էլ պրինձ տանէք ձեր երկիրն։

98· Թիվն 1725 Յունվարի ամսին Էջմիածնումն լսեցինք՝ որ Ղոտամբօղու սուլթանէն ֆարման այ եկէլ Արզրում փաշին՝ որ շուտով ուր ձեռնայտակին փաշինօվն և ուրէնց ասկարօվն վերկան գընան Ղարս։ Փաշէքն որ Արզրումու վեր կը կան՝ կը գընան Արզրումու դուռ՝ յառաջին դօնաղումն ասկարն փաշին յերես կը կանգնեն՝ թէ էս ձմեռնօվն՝ ձուն ուժով՝ կարել չենք գընալ։ Փաշէն շուտ սուլթանին արզ կառի, չափար կաղարկի։ Սուլթանն յուքմ կառի՝ թէ որչանք խարջ կը գընայ՝ տրայ, թուք լինի, որ շուտ գնէք Ղարս։ Շատ թին կը վեռուն, ճանապարն յիսատակելով՝ թամամ ասկարօվն կը գընան Ղարս և ուրիշ տեղայ էլ ասկար դողման գնի, որ շատ բաֆիր ասկար զրկոյ Ղարս ջամ գընի։

99· Արզրումու փաշէն Ղարսու մարդ աղարկէց Յարևանայ խանին՝ թէ գուք էք Ռուսին ճանապար տվել՝ որ ձեր երկրօվն ուզի մեր վերայ գոյ։ Յարևանայ խանն էս ջուզարն կը տայ՝ թէ չում մենք անք Ռուսին ճանապար տվաղն, նայ մին ղօռ օվ թազաւոր այ, ուր զօռօվն այ եկէլ նայ, մեզ կը լսի որ թողունք ոչ։

100· Մարտի Գ-ումն Արզրումու փաշէն Ղարսու մին էլ չի էր աղարկէլ Յարևանայ խանին վերայ՝ որ անումն այ Դարվիշ աղայ, որ արեկ Էջմիածնումն, մին օր կացաւ։ Մեր կաթուղիկոսն խարցուց՝ թէ ինչուր խամար աս եկէլ։ Ասաց՝ թէ մեր սուլթանն զրեալ այ՝ որ գընամ Յարևան ուզեմ թէ սիրօվ կը տան՝ էլ նոցայ Ա· փողի զարար չը տէք, եթէ սիրօվ տան ոչ՝ նոցայ խաղէք ոչ, գընէք՝ նոցայ մեծ և պատիկն ջառթէք և թալանէք, երկիրն զաֆաէք· էսպէս յուքմայ արարէլ յալդայ ես եկէլամ՝ որ էս Յարևանայ թամամ երկիրն ուզեմ թէ որ սիրօվ կը տան՝ լավ· թէ տալման չեն՝ յետ կը գնամ, ապայ էն չաղն ղղլբաշն մեր ձեռնումն շատ նեղութիւն կը քաշի· մենք Յարևան էնտուր անք ուզում՝ որ Ռուսաստն դէան գոյ ոչ մեր երկիրն· և Բաղդատայ Յասան փաշէն ԺԲՌ· մարդօվ պիտի գնայ՝ Համադան նստի՝ որ չնի թէ Մամուդն էլ գոյ Բաղդատ մանի։

101. Մարտ Ե. ումն էլչին Էջմիածնոյն վեր եկաց՝ գընաց Յարևան. Դ. շաբաթ Յարևան նստավ. շաբաթէն մին չափաբ էր գընաման Ղարա գոլման, ըսկի յիմացվեց ոչ՝ թէ գոցայ խորհուրդն ինչ այ, բաց միան էս լսեցինք՝ որ Յարևանայ Բ. աղայ վեր ան կացել՝ Արզրումու փաշէն գրել ան՝ թէ ինչէք նստել, դուք էլէք թուրք, մենք էլ: Էն որ մենք Ռուսստի ձեռն ընկանենք, ձեր ձեռնումն լինէք՝ լավ այ. ժամանակն էս այ՝ վեր կացէք, եկէք՝ քաղաքս զաֆտեցէք և Ռուսան թոզուլ մեք՝ որ քաղաքս մնի և էս էլ ինչ որ Յարևան ուզեցէլայ, ջուղաբ ան արարէլ տվել չէն: Էլչին ասացէլայ՝ թէ դուք էք գրել մեզ թէ եկէք, մենք ձեր գրածն անք եկել և էլչին գիր գրոգին անումն տվել չկ, էնպէս ծածկայ պահելն և էլչին ասացէլայ թէ դուք թաղաւոր չունէք, էս երկիրն մերն այ ելել, էլ մեզ տվէք. ինի թէ Ռուսսոյն գոյ՝ զաֆտի ձեզ վարթարաֆ առի և մեր գլխին էլ բալայ դառնայ, մենք էլ դուք էլ թուրք անք, չուտ նահախ գավուռի ձեռն ընկանենք: Ղզլբաշն էս ջուղարն այ տվել՝ թէ Աստուծոյ փառք, մենք թաղաւոր ունենք. մեր թաղաւորն թարվեզ նստած այ, իւր թաղաւորութիւնն այ առում: Էլչին կասի՝ թէ Բաղդատայ Յասան փաշէն գրել այ՝ թէ Մամուդն շահին բռնել այ, էլ ուրիշ շահ չկայ, էտ որ ասում էք՝ սուտ այ: Սոքայ կասեն՝ թէ յեվ դուք յավատման չէք որ մեզ շահ ունենք, մին մարդ մեզնէ, մին մարդ ձեզնէ ազարկենք թարվեզ գընան, տեսնէն խաբար բերէն՝ որ դուք յավատէք, որ մեզ շահ ունենք: Բ. մարդ կալարկեն թարվեզ, կը տեսնեն՝ որ շահ կայ՝ թարվեզ այ, ուր թաղաւորութիւնն առում այ: Էս Բ. մարդն յետ ին ընկել էլչուն ասացէլին՝ թէ գընացինք թարվեզ, շահն տեսինք՝ եկինք: Էլչին յավատացել էր. էլչին Ապրելի Ա. ումն Յարևանայ վեր եկաց, էն օրն էլ արէկ Էջմիածինն:

102. Ապրելի Բ. քումն էլչին մեր կաթուղիկոսին ասաց՝ թէ ես գընացի Յարևան, Դ. շաբաթ նստայ, շատ խօսկ խօսեցայ, իմն լսեցին ոչ, ամայ կը փոշիմանէն. և մենք էլ նոցայ չենք լսում, որ էս ամիս ախիրումն կամ թէ Մայիսի

102 Սուչ—յանցանք. բուխատան—գրախօսութիւն.

ավալումն վեր կը կանք՝ զը կոնք՝ էս երկիրն կը զաֆտենք և սոցայ մեծ խարաբի կը տանք. մին էլ մեր կաթուղիկոսին կասի՝ թէ դու էլ մեծ սուչի տէր աս, որ Ըռուստին խետ մին աս դառցէլ, էսչանք խայ աս կանդրնացուցէլ՝ որ ասում՝ թէ ԿՌ. խայ եարաղով հազիր ան՝ որ քոյ խոսկօվն ան խայէրն վեր ան կացէլ. դու էլ շատ նեղութիւն կը քաշես. էս պատճառիվ որ ուզես Ըռուստն էս ձեր երկրօվն բերէս մեր երկիրն: Կաթուղիկոսն էս ջուղաբրն կը տայ՝ թէ ես մին կարդացող մարթ ամ, իմ վանքումն նստած, ես ինչ բան ունեմ թագաւորայ բանի միջումն. էտ խոսկէրն որ լսել աս՝ զուր այ և բուխտան, եթէ ինձ կը հավատաս՝ լեվ թէ յավատման չես՝ ինչ Աստուծոյ կամքն այ: Էլչին Ապրելի Դ. ումն էջ միաձնէն վեր եկայ՝ գնաց, գիրայ Ղարս:

103. Թուրքն էս ղալաբալուղն որ առում՝ պատճառն էս այ՝ որ ջուն Ըռուստրն եկէլ այ, Ղզլբաշի երկիրն այ մտէլ, վախման այ՝ թէ չնի Ըռուստն ֆանդօվ Ղզլբաշի երկրօվն ուր երկիրն մտնի: Էս ջահտան Օսմանլվին՝ ինչ անօր որ Ղզլբաշին խետ ունի, ոնչն էլ պրկում՝ այ և ասկար այ դընում՝ որ չնի թէ Ըռուստն ղաֆիլ ուր երկիրըն մտնի:

104. Վրաստանայ Կախէթու վալի Մամատ ղուլի խանին ան տվել Ցարևանայ խանութիւնն՝ որ յինքըն Կախէթ այ նստած, ուր նայիպն Ցարևան այ նստացուցէլ: Մեր կաթուղիկոսն Հայոց ասկարին խետ մին այ՝ որ յամիշայ դաղտուկ մին ըզմինու գիր ան ելէլ գրում: Մեր կաթուղիկոսին մին գիրն կը բռնվի: Էս գիրն կը բերեն կը տան Ցարևանայ նայիպին: Էս նայիբն կաթուղիկոսին կանչել էր տարել՝ թէ դու էլ աս մեզնէ դօնմիշ ելէլ. էս քոյ գիրն այ՝ որ Հայոց ասկարին գրէլ աս: Ասացէլ այ՝ թէ էտ գիրն ես չեմ գրել. էտ թշնամու շինած գիր այ և կաթուղիկոսին էլ շատ խաֆայաթ կը տայ և Դ. ոսկի ջառիմայ յինք կառու, քանի օր կը պախի, յետոյ մարդ մէջ կը ընկանի, բաց կը թողու:

105. Ցարևանայ նայիպըն քանի օրէն յետ մեր կաթու-

103 Ջահտան—պատճառ. անօր—սահման. պրկել—դայիմացնել.

105 Դէկմիչ—դիպչել. մուղաղայ առուլ—խնայել. մախիլայ—ինչ եւ իցէ.

ղիկոսին կը կանչի՝ թէ ձեր Հայոց ասկարն շատ թուրք այ ջառթում՝ որ ուզեն՝ գոն Յարևանայ վերայ. դու մին գիր գրէ ձեր ասկարին վերայ՝ որ էս երկիրն չը գոն և մեր մարդին դէկմիշ չենն։ Կաթուղիկոսն կասի՝ թէ ես գիր գրելն մուզաղայ չեմ առում՝ ամայ գումանք չկայ՝ թէ նոքայ իմ խօսկին ը-սեն։ Նայիպն կասի թէ թամամ խայէրոց ղլխայորն դու աս՝ որ. յամիշայ քեզ կը լսեն՝ չում յալդայ քեզ լսում չեն՝ պի-տի որ գրէս։ Շատ որ զօռ կառեն՝ կաթուղիկոսն էլ նաչար մին մախիլայ գիր կը գրէ՝ թէ Յարևանայ մարդիքն մեզ զօսատ ան՝ էտոնց դէկմիշ չենք և գէք ոչ՝ էս երկիրն մըտ-նէք՝ խարաբ առէք՝ և գրին տակումն կը գրի՝ թէ դուք ինչ-պէս խերիաթ կը տեսնէք՝ էնպէս արրէք՝ ձեր գիտացածն ձեռաց տէք ոչ։ էս գիրն մին խայ չափարի խետ աղարկել ին Հայոց ասկարին։

106. Էս չափարն կաթուղիկոսին գիրն կը տանի Հայոց ասկարին մեծայորին կը տայ և նոքայ էս գրին ջուղաբն կը գրեն՝ յետ կաղարկեն՝ որ Յարևանայ նայիպին և աղայլարին կը գրեն՝ թէ մենք ուզում ինք գինք ձեզ վերայ՝ չումքի մեր կաթուղիկոսն մեզ գրել էր՝ թէ սոքայ մեզ բարեկամ ան՝ սո-ցայ դէքմիշ չենք և դէս չը դէք՝ մեր կաթուղիկոսին խա-թեր խամար էլ եկինք ոչ՝ յետ դառցանք՝ չուն որ մենք էս մարդայորութիւնն արարինք՝ պիտի որ դուք էլ մեր կաթու-ղիկոսին և իւր թամամ վանքերին և միայբանոցն և տեղետ խայէրին ջաֆայ չառէք՝ լեվ աղաթօվ պահէք։

107. Յամիշայ Յարևանայ նայիպին խարաբ այ ելել դոլ-ման՝ թէ խայի ասկարն օր ըստ օրէ թուրք ջառթելն իվե-լացանում այ։ Նայիպն կաթուղիկոսին կը կանչի՝ թէ քոյ խա-յէրն թուրք ջառթելն իվելայցուցել ան՝ քոյ գրած գիրն մա-խիլայ էր գրած՝ մենք էլ քեզ հավատման չենք՝ և էստոնք քեզ թողման չենք։

108. Բայեազդի քուրթի բէկին խարաբ կը տանեն՝ թէ Ռուսան եկել այ՝ Յարևան զաֆտել այ և էլչի այ աղարկել՝ որ էջմիածնումն նստած այ։ Էս բէկն վախութենէն մին մարդ կաղարկի էջմիածինն կաթուղիկոսի կուշան՝ թէ տեսնի՝ էս

108 էլ—ժողովուրդ, հասարակութիւն. սրա—ծածուկ խոչհուրդ։

խաբարն աղորթ այ, թէ սուտ, և կաթուղիկոսին էլ կասի՝ թէ մեր բէկն քեզ շատ բարև կառի, ասում այ՝ թէ յեփ Ըռուսաստն գոյ, թողուս ոչ՝ որ մեզ զարար խոսայանեն, որ ես իմ էլօվս խայ կը դառնանք, քոյ ժողովուրթանք և կաթուղիկոսն էս ջուզարն կը տայ՝ թէ Ըռուսստն էս երկիրն չէ եկել և ասել է՝ թէ էս տեղէքս այ գոլման և էտ խաբարանոցէն խաբար չունեմ և իւր քրիստոնայ դառնալէն խամար, ասես թէ եթէ Ըռուստի ախիրն աս քրիստոնայ դառման, ես Ըռուսաստին բանէրին մոչ խաբար ամ, մոնչ լսել ամ: Օսմանլուն էս ֆանդօվն ուզում այ եղել՝ որ մեր կաթուղիկոսէն սըռ. յիմանայ և մեր խեղջ ողորմելի Հայոց ազկրն կրակ գըձի և վարթարաֆ առի:

109· Յարևանայ նայիպն կաթուղիկոսին տարել այ՝ թէ խանիցն գիր այ եկել՝ որ դու դընաս ուր կուշան: Կաթուղիկոսն կասի՝ թէ ես մին կարդացող մարդ ամ, ի՞նչ բան ունեմ խանին քշտին: Նայիպն կասի թէ պիտի որ գնաս: Կաթուղիկոսն կասի՝ թէ ես կնալս՝ կը գընամ, ամայ տունս և միայբանս դոր մինէկ թողում, ես գընամ: Թէ ես տեղէս գնացի՝ միայբանս էլ ժողովուրդս էլ կը վախեն, ոնչէ էլ կուցրվեն, մեծ խարաբի գնի վանքիս էլ ժողովրդիս էլ և մեծ զալայբալուղ վեր կը կայ մեր ասկարին միջումն, որ շահ էլ խանն էլ զարուլ չեն առում: Նայիբն կասի թէ շատ խոսելն պետք չէ, գնալ աս պիտի: քոյ գնալէ պատճառն էս այ՝ որ գրել այ խանն, թէ կաթուղիկոսն գոյ՝ ինձ վախտանկ խանին խետ խաշտացանի. նայիպն էս խաբիեաթին խամար կաթուղիկոսին գ. խետ տարել այ՝ խոսացուցել այ. վերջումն նայիպն կաթուղիկոսին ասացել այ՝ թէ գնայ քոյ պատրաստութիւնն տես, յազիր կաց, ես քոյ խաթեր խամար խանին Ա. արզ կառեմ՝ թէ կաթուղիկոսն գոլէ դայիլայ, ամայ սայ տեղս մեզ էլայ պետք, թէ որ գնի՝ թող տեղս մնայ մեր քշտին:

110· Յարևանայ նայիպն քան օրէն յետ կաթուղիկոսին կը կանչի՝ թէ էլ ճար չկայ, որ պիտի գընաս, խանիցն էս օր գիր արեկ, որ քեզնէ բիդամաղայ եղել թէ ինչայ թաղա-

109 Դոր—ինչպէս։

110 Քան—քանի. թաղաֆուլ—ուշացնել. ծանտրոց—կայք։

ֆուլ առումն յալքաթ ինձ պէտք այ՝ որ ուզումամ, շուտ էտ մարդն աղարկիր՝ գոյ, որ ես դրայ ուզումամ, որ ինձ Վախտանկ խանին խետ խաշտացանե։ Կաթուղիկոսն կը ճնայ նաչար գընալէն, զայիլ եկայ, թէ ըռուսխաթ տուր՝ գընամ վանքը, վանքիս սահմանք դրըստեմ, վեր կամ գոմ գնամ խանին կուշան։ Ըռուսխաթ կը տայ՝ թէ գնայ, ամայ շուտ եկ։ Եթէ կաթուղիկոսն ուր գնալն զայիլ չեր կացել, շատ կերպ կերպ վազութիւն կառին և մեծ խարաբի էլ կը տին։ Կաթուղիկոսն յետ արեկ Էջմիածինն, վանքին ինչ ծանարոց կէր, ոխչն էլ լեվ զայիմ տեղ գաղէց, որ թէ Աստուած մի արասցէ, մին բան լինի, զալումի ձեռն չը ընկանի և ուր վանքին սահմանքն և պատվէրն տվեց, Բ. օրէն յետ Էջմիածնուցն վեր եկայ գնայ Ցարևան Նայիպին կուշան, թէ հազիր ամ և ուր խետ Սարգի Ոհանէս վարդապետան՝ որ աթոռակալն էր և քանի վիաբան տարավ խտուրն և շատ տրտմութեամբ լալով գնայ։

111. Կաթուղիկոսն Զ. օր էր որ Ցարևանայ վեր էր կացել՝ որ Ցարևանայ Նայիպին ասկարն գիշերով եկին Էջմիածինն, վանքն և գեղին անէրն լցվեցան, Զ. օր նստան։ Վանքումն էլ, գեղումն էլ շատ զարար ին տալման։ Խարցուցինք՝ թէ ձեր մաթլաբն ի՞նչ այ։ Ասացել ին՝ թէ եկէլանք՝ որ գնանք քըրտին վերայ, ամայ սուտ ասացին, ուրէնց թուրք մարդից լսեցինք՝ թէ չեր կաթուղիկոսն խանին կուշան կընաման, Ճանապարիցն Վախտանկ խանին գիր այ գրել՝ թէ ինձ տարան Մամադղուլիխանին կուշան, դու վերկաց եկ։ Էտ գիրն Ճանապարի բռնել ան, բերին Ցարևան, տվին Նայիբին։ Նայիբն կարդացանել արետ, գրին խորհուրդն յիմացավ, ուրէնց միջումն խորհուրդ տարին՝ թէ էս գիրն լեվ գիր չէ, մենք գընանք Էջմիածինն, թամամ խայէրն ջառթենք և ինչ ունեն՝ զաֆտէնք։

112. Կաթուղիկոսն Ճանապարի կը լսի՝ որ ուր գիրն բռնել ան տարել Ցարևան, շուտ մին գիր կը գրի Ցարևանայ Նայիբին՝ թէ չում իմ գիրն բռնել էք տարել, աղբրթ այ՝ որ էտ գիրն ես ամ գրել որ Վախտանկ խանն գոյ, ապայ ինձ

111 Մաթլաբ—միտք։

112 Ավին—սխալ սիսի բընի փոխանակ ասելու ավին։

ինչուր խամար էք աղարկէլ որ ես էտպէս գիր չը գրեմ Վախտանկ խանին։ Էս գիրն որ գը կոյ, կը խասանի Նայիպին՝ նայիսն յինքն Յարևանայ եկավ Էջմիածինն, արեկ վանքումն, խալխին խետ մասլահաթ արարին՝ թէ յալդայ էստոնց ձեռն չը տանք, մինչև Մամադղուլխանէն խաբար գոյ՝ թէ որ կաթուղիկոսն գնացել այ խանին կուշան՝ լավ, թէ որ գնացել լինի Վախտանկ խանին կուշան կամ թէ գնացել լինի Խայի ասկարն, էն չաղն թէ սոցայ ջառթենք, ինչ ունեն թալանենք։ Նայիպն մեզ կանչեց՝ թէ վախել մեք, ձեզ մոնչիչ չենք առում։ Է. օրումն Նայիպըն ուր ասկարօվն յետ գընացին Յարևան, մեզ թալանեցին ոչ, ամայ գեղին էլ վանքին էլ զարար շատ ավին։

113. Քանի օրէն յետ Մամուդ ղուլի խանն Կախէթու գիր էր գրել Յարևանայ Նայիպին՝ թէ կաթողիկոսն արեկ, իմ քըշտիս այ, դու Էջմիածնան նեղութիւն չը տաս և թալանես ոչ, էտ վանքն լեվ պահես։

114. Պապանէ որդի Ամամշէն՝ որ Մամուդ ղուլի խանին սանդուղդարն այ, Կախէթու արեկ Յարևան, ասայ՝ թէ Մամուդ ղուլի խանն ինձ էլչի դաստուրի աղարկեց Հայոց ասկարին մեծայորին կուշան՝ թէ խանն ասում այ՝ էտ ինչ բան այ՝ որ դուք առում էք, եկէք ինձ հնազանդեցէք, ինչ որ ձեր մաթլաբն այ, ես կը տամ մեծութիւն, փող, երկիր, ձեր ամենայն մաթլաբն ես հասել կառեմ, թաք լինի՝ ինձ հնազանդէք և իմ խօսկն լսէք։ Հայոց ասկարին մեծայորն էս ջուղապն արետ՝ թէ մեզ մոչ մեծութիւն, մոչ փող, մոչ երկիր այ լաղում, մենք քեզանէ մոչինչ չենք ուզում և քեզ ճանանչում չենք, մենք մեծ եփռայդօր թագաւորին խամարանք բոլորվել, մենք նորայ ծառայ էնք, նորայ ուղուրով ճանապարն անք ականում և նորայ մարդն անք, Աստուծոյ ողորմութեամբն՝ թէ մեծ եփռայդօրն արեկ էս երկիրն, կը գնանք ուր կուշորն, կամ թէ ինչպէս յուքմ կառի՝ էնպէս կառենք։ Եթէ Աստուած մի արասցէ՝ թէ մեծ եփռայդօր թագաւորն գոյ ոչ էս երկիրն կամ թէ մեզ խամար մին բան չը գրի, որ ուր ողորմելի ծառէքն մռանայ, մենք ինչպէս որ բոլորվել

114 Դաստուրի—какъ, նման. լաղում—հարկաւոր. եփռայդօր—կայսր.

անք, էլ էնպէս կը ցրվինք, յամէնք մեր տեղն կը գնանք, Մամուդ ղուլի խանն էտ ֆիքրն առի ոչ որ՝ մենք նրայ հնազանդող չենք։

115. Ա Թամշէն յետ կը դընայ կախէթ՝ Մամադ ղուլի խանին կասի՝ թէ Հայէրն էսպէս ջուղաբ տվին։ Մամուդ ղուլի խանն շատ նեղացէլ այ, յուքմարար՝ ցարեանայ ասկար եկավ, կախէթու ասկարովն դընացին թայի ասկարին վերայ, կարեցել չին բան չենել, փարայի սոցանէ ջառթվել էր, բաղեն յետ ին փախել՝ եկել գեղապունու երկիրն։ ԲՌ. Ջանիցն իվել թէ մեծ, թէ պստիկ կին, մարդ, մինչի կաթնայկեր արախայ թային ջառթել, որչանք ապրանք, կին, խիզան կը քաշեն՝ կը բերեն ցարեան։ Էս ասկարն որ գեղայգունի խարապ դընի արարէլ՝ յեփ եկել ան ցարեան, էս խաքիեաթն նայիբին ասացել ան։ ցարեանայ նայիբն և թուքերն՝ որ կը լսեն՝ թէ թայի ասկարն ուրէնց ասկարին ջառթել այ, ինադիվ պաշտայմիշ արարին՝ թէ գեղի թայերին, թէ քաղաքի թայերին թալանելն, կին, երեխայ և խիզան քաշելն և մարդ սպանելն, որ թայերն ցերէկով կարել չեն ելել տանէ դուս դոլ, որ շատ նեղութիւն կրուան խեղջ ողորմելի թայերոցն։ Էս ողորմելի թայերն կը տեսնէն՝ որ էլ ճար չկայ, նեղութիւնն օր ըստ օրէ լվելման այ, շատ գեղ և շատ մարդ խիզանով փախան գընացին Օսմանցու երկիրն։

116. Վերոյ Ա թամշէն մին էլ ասայ՝ թէ Մամադ ղուլի խանն մարդ աղարկեց Վախտանկ խանին կուշան՝ թէ ի՞նչ այ քոյ մաթլաբն, եկ խաշտենք՝ ախպօր պէս միայվորվենք, մեր երկիրն պախենք և շահին էլ օգնութիւն առնենք՝ որ նայ էլ խեղջ այ. մին էլ որ ուզեմ յիմանամ՝ թէ դու ի՞նչ ֆքրում աս և քոյ սրտին ինչ այ և ի՞նչ մասապումաս. ինձ ասայ՝ որ ես էլ էն մասապն պախեմ, եթէ քուրթ աս՝ քեզ խետ քուրթ ամ, եթէ քրիստոնեայ աս՝ ես էլ քեզ խետ ամ. ի՞նչ այ քոյ կամքն՝ ինձ ասայ։ Վախտանկ խանն էս ջուղաբն այ տվել, թէ ես քեզ խետ խաշտման չեմ և քոյ խոսկին էլ ըխտաղայ չեմ առում։ Ինչ մտկի տէր որ կամ և ինչ ֆքրի վերայ՝ որ

115 Բախին—մնացեալ. թուքերն—սխալ է փոխանակ թուրքերն։
116 Մասապ—հաւատ. ըխտաղայ—հաւատալ։

կամ՝ քեզ պէտք չէ՝ որ խարցանես։ Էն դորձկին վերայ որ ես կամ, էնտուր վերայ շատ հասատատամ և Աստուծոյ շաղավաթօվն քոյ ֆիքրն էլ կառեմ։ Մամադ ղուլի խանին էս խաբարն էր աղարկել։

117. Մամադ ղուլի խանին խաբարն որ կը բերեն, ասկարօվ վեր կը կայ կը կնայ Վախտանկ խանին վերայ, պասխուն կուտի՝ յետ կը դառնայ, կը գրի Ցարևան՝ թէ Վախտանկ խանին նեղ տեղ ամ քցել՝ ասկար աղարկեցէք և Ցարևանայ քանի մեծ աղայ էլ կուզի։ Էս քանի աղէն ասկարօվն կը գնան Կախէթ խանին կուշտն՝ որ խանն էս ասկարօվն էլ գնացել էր. Վախտանկ խանին վերայ, էլ կոտրվել էր՝ յետ ին փախել։

118. Մամադ ղուլի խանն տեսել այ՝ որ ուր ղօշունն բան չէ կարում շինել գնացել այ՝ Լէկզուն ասացել այ՝ թէ Վախտանկ խանն ուզում այ գոյ ձեզ վերայ, ձեզ վարթարաֆ ասի, եկ միայվորվենք՝ գընանք Վախտանկ խանին վերայ։ Լէկզին զարուլ կառի։ Մամադ ղուլի խանն և Լէկզին միայվորվելան՝ գընացելան Թիֆլիզու վերայ, ամայ էստոնց ինչպէս լինելն՝ մեկն խաբար չեմ, զբայ կերպ կերպ բանէր ամ լսում։

119. Մամադ ղուլի խանն շահին սուտ գրում այ ելել՝ թէ Վախտանկ խանին շատ նեղ տեղ ամ քցել կարող ամ սաղ բռնեմ, կուզես սաղ կաղարկեմ, կուզես գլուխն կտրեմ՝ աղարկեմ։ Էս խօսկն տիր շատ կը գրի շահին։ Շահին զահիր գընի՝ որ սուտ այ գրում, Մամադ ղուլի խանիցն էլ ինչ չափար որ գընամանայ ելել թարվեղ շահին կուշտն՝ շահն գրին ջուղաբն գրում չէ ելել և չափարն պախում այ ելել թէ տեսնի՝ էս գրէրն որ գրում այ վերջումն սուտ դուս կը գոյ թէ աղորթ, չուն որ Մամադ ղուլի խանն շահին յամիշայ գրում այ ելել՝ թէ Վախտանկ խանն քեզ թշնամի այ և քեզանէ դօնմիշայ ելել Ըռուստի խետ այ միայվորվել և քրիստոնութիւն այ առում և վադն շատ կը գրե։

117 Պասխուն—խաբա տալ։

118 Զրայ—պատճառ։

119 Տիր—չատ. զահիր—յայտնի։

120· Վախտանկ խանն կը յիմանայ՝ որ Մամադ զուլի խանն ուր վարքն հասի շայ շահին գրուտ այ, յինքն էլ մին չափար աղարկէց շահին՝ թէ ես քեզ դօստ ամ, քեզ թշնամի չեմ, ինչ որ ինձ խամար քեզ գրելան՝ ոսքն էլ սուտ ան գրելը. աբայ իմ քեզանէ բեդամաղ լինելս արդ առեմ. դու ինձ սարասկար շինեցիր, ասացիր՝ թէ գընայ Լէզկու վերայ, յետ ես իմ պատրաստութիւնքս տեսի, ասկարս բոլորեցի, քաղաքիցս դուս գնացի, գրեցիր՝ թէ Լէկզուն վերայ մի գընալ. յետ դառցիր, ես էլ յետ դառցայ։ Լէկզին ետես՝ որ ես յետ պառցայ, էս չափ երկրիս խարաբի արեա՝ որչանք դեղ գավառ վարթարաֆ արարին և որչանք Ջան Ջառթեցին և որչանք յէսիր արարին և մեզ որչանք մարխարութիւն ելավ։ Էս չափարն որ կը դայ Յարևանն կը խասանի, Յարևանայ նայիպն չափարին կը բռնի, գիրն ձեռնէն յինք կառու, չափարին զընդանում կը դնի և թամամ ճանապարէրն կը կապի՝ որ չնի թէ Վախտանկ խանէն մարդ գընայ շահին կուշտն՝ որ շահն էս խաբիաթնէրն ճշմարիտն յիմանայ ոչ։ Վախտանկ խանին նիաթն էն այ, որ ուր մեկնութիւնքն շահին յիմացանի, որ յինքն ուրն թշնամի չէ, դօստ այ. Մամադ զուլի խանքն խոյ թողման չէ՝ որ Վախտանկէն գիր և մարդ խասանի շահին։

121· Մամադ զուլի խանն կը գրի Յարևանայ նայիպին՝ թէ Վախտանկ խանին ըռայաթ, բաղերդան և կամ կռվարար մարդ լինի՝ հաեղէրքտ բաղրկանէրին թալանէք, կռվարարին ջառթէք։ Էս գիրն որ կը դայ Յարևանայ նայիպին, էս նայիպն թէ Յարևան, թէ Էջմիածնումն՝ որչանք որ Վախտանկ խանին ըռայաթ, սովտայգար գընի, թամամուն էլ կը բռնի՝ կը թալանի և Վախտանկ խանին Ա. Թավադ՝ որ անումն Պապոնայ բէկ այ ելէլ Ակիլիգու Ծ. մարդով կը դայ Յարևանայ միջովն յանց կը դայ կը գնայ դիբայ Թիֆլիզ։ Նայիպն կը լսի՝ որ Պապոնայ բէկն Ծ. մարդով յանց եկաց գընաց, շուտով Դ. մարդ կաղարկի էստոնց յետանէն, կը գնան Ը. աղաջումն կը խասանեն Բաբակայ ձորումն։ Պապոնայ բէկն

120 Մարիաթութիւն—ինաս։

121 Բաղիրդան—վաճառական. կլդոյ—սխալ գրի փոխանակ ասելու գը գոյ. կըդայ։

ձորօվն գընաման գընեն ։ Էս Դ՚Ճ՚ մարդն վերևիցն Դ՚ կողմն կը պառնեն, շատ կուիվ կառնեն, Պապոնայ բէգը ԼԱ՚ մարդօվ կպառնեն, ԺԵ՚ մարդն վեր կը գցեն, Դ՚ մարդն կը փախի ։ Էսոտոնց խետ շատ փոդ և իքմին գընի՝ կը տանեն և ուրէնցն էլ յետ կը տանեն Ցարևան, դուրթսաղ կառեն ։

122՚ Ցարևանայ նայիպն Վրացու զավակ այ, շրայե այ Օսմանրցուն խետ դօստ չէ և Ցարևան ասկար փոքր կայ տեղ ին երլուն էլ փարայքանդայ այ ելէլ՚ տեղէս տեղն ան փախել՚ երլու էլ ըռայաթ էլ փոքր այ մնացել՚ որն շահին ան ուզում՚ որն Օսմանրցուն ան ուզում՚ Ցարևան բարութ չէ ելէլ՚ ուզեցել ան որ բարութ շինել տան՚ բռնել ան երլուիցն մարդայգլուխ Ծ՚ դիան ան յինք առէլ՝ որ բարութ շինողանոցն վարց ան տվել ։

123՚ Վարդայպետն որ եկէլ այ Թարվէզ՚ շահն Թարվէզ այ ելէլ որ Ֆիրիդի խանն ԲՌԵՃ՚ մարդօվ աղարկել այ Ըսպահանայ վերայ՝ որ գնայ Աղվանին վերայ ։ Լոռստանայ Վալի Ալիմարդան խանն ուր որդին Ծ՚ մարդօվ աղարկել էր շահին կուշտն՚ թէ դու ինձնէ խաթրջամ չես և ինձ քեզ դօստ չես համարում՚ էտ իմ որդին քեզ գրավ՚ որ ինձանէ խաթրջամ լինէս և ինձ հրաման տուր՝ որ ես գնամ Մամուդին վերայ կռիվ՚ էս ղվլօվն՚ որ ինձանէ խաղինայ չուզես ։ Շահն գըրել՚ այ ես Ալիմարդան խանին՝ թէ դու վերկաց գընայ Մամուդին վերայ՚ ես քեզանէ խաղինայ չեմ ուզում ։

124՚ Բայեազիթին քուրտն ԵՃ՚ մարդօվ գնացել՚ այ Մակու բերթն՚ ֆանդօվ խաբէութեամբ առել՚ այ ։ Ցեփ շահին խաբար կը բերեն՝ թէ Մակու բերթն քուրտն առէց՚ շահն հուքմ կառի՚ որ ԵՌ՚ մարդ թայեար գնի՚ որ կաղարկի Մակու բերթին վերայ՚ որ քրաչցն յետ յինք առուն ։ Ցեփ էս ԵՌ՚ մարդն Մակու կը մօտանայ՚ քուրդն կը գնայ Ղզլբաշի ասկարին զարշու՚ կասի՚ թէ չում դուք էտչանք մարդօվ եկել աք՚

122 Շրայ—թշնամի, անհաւատարիմ՚ երլու—ընակիչ՚ տեղացի՚ փարայքանդ լինել—ցրվել՚

124 Ցապաս տեղն—ունայն՚ բի թաբդիր—անպատրաստից՚ սուտեն—սխալ պիտի ընի փոխանակ ասելու ուտեն՚ ֆարաղաթ—հանդիստ՚ տալղամ—սրամերկ անել՚

մենք էլ անք ձերն, բերթն էլ այ ձերն, յապաս տեղն ձեզ ջաֆայ մէք տալ։ Ղզլբաշն խաթրջամ գնի, բիթաբդիր վեր կը գոն՝ ուրէնց կերայկուր գընեն շինում՝ որ սուտեն, հարամն յետ կառեն, արիալըղլացի նստած գընեն։ Քուրան կը տեսնի՝ որ Ղզլբաշն ֆարազաթ նստած այ, ուրէնքն տալղլիճ գընեն կը կոն Ղզլբաշին վերայ, շատ մարդ կը ջառթեն և մնացեալ Ղըզլբաշն յետ կը փախի։ Ղզլբաշին ինչ ելել այ, Քուրան կը զաֆտի։ Էս խաբարն որ արեկ Թարվեզ շահն էլ Մակու բերթին ֆիքրն արար ոչ, ամայ սարդարին վեզն ուղում էր տեր, շատ փող արետ շահին՝ պուծավ։

125· Օգոստոսի ԺԲ· քում Էյվազն քաղաքէն արեկ ասաց՝ թէ աղայ ցուսէնն քարվանսարում ասաց՝ թէ գասկառայ մարդ արեկ, ասում այ՝ թէ գասկառ փոքր ասկար էր եկել և Աստարու ցադար խանն շահին արզայ արարել՝ թէ ես կարողամ ԺԲՌ· ասկար բոլորել՝ որ ԸՌ· մարդն թալիշ, ԴՌ· մարդն Ղզլբաշ, մարթայգլուխ մին թուման փող տուր՝ որ ինչ տեղ յուքմ առես՝ գնանք կամ թէ Ըռուստն վարթարաֆ առնք։ Շահն ցարդար խանին գրել այ՝ թէ դու սարդար լինէս, ըռէշտու մուդախիլն ԺԲՌ· թուման այ, դու յինք առ՝ տուր Ըռուստին՝ ըռազի արայ՝ վեր կան Գիլանայ գընան, թէ որ Ըռուստն ԺԲՌ· թումանն յինք չառու և իմ երկրիցն գնայ ոչ, ԺԲՌ· թումանն տուր քոյ ասկարին՝ գնացէք Ըռուստի խետ կռիվ արրէք, խոշի կամ նայխոշի իմ երկրիցն դուս արարէք՝ գընան։

126· Օգոստոսի ԺԸ· ում Համադանցի մղդսի Սահակի որդի մղդսի Մարկոսն Գասկառայ ինձ Պետրոսիս գիր էր գրել՝ թէ Գասկառայ խանն ԱՌԵՃ· մարթ ասկար բոլորէց և էլ բոլորում այ և Գիլանայ սարդարութիւնն էլ էս խանին ան սըվել և Գիլանայ երկրիցն տունայղլուխ մին մարդ այ ուղում կռվի խամար։ Եւ Աստառու Հաղար խանն և Ըռէշտու վէզիրն Օգոստոսի ԺԵ· ում եկին Գասկառայ՝ դախիլ ելան, որ

125 Էյվազ—յատուկ անուն է· Թալիշ—տեղի անուն է· խոշի կամ նայխոշի—կամայ ակամայ։

126 Կոլէց—գալոց· տարդաղան առուլ—ցրուել· փոխանակ դարբաղաղան ասելու։

ուրէնց խնամ փոքր ասկար կէր՝ որ Բ՚Ճ՚ մարդ թվանկչի գնի, ամայ ասում՝ թէ յեանէն էլ ասկար կայ կոլէց շատ՚ և էս Գասկառայ խանին մէջտու

ասացէլայ՝ թէ ի՞նչ առեմ՚ շահն թողման չե՚ թէ չե՚ ես մին գիշերով ղաֆիլ Ռուսաստին վերայ կը թափվի՚ ոնչն էլ տարդաղան կառի՚ էս խաբարն մին դոստ արեկ՚ ասաց թէ խանն էսպէս ասաց և նիսթն էլ էս այ և խանն էս Մարկոսին կը կանչի կը տանի՚ խարցմունք կառի թէ Ռուսաստն մեզ խամար ինչ այ ասում՚ էս ջուղարն այ տվել՝ թէ ես Ռուսաստին կուշան չեմ գընաման՚ ամայ էսպէս ամ լսում՚ որ ասում՝ մենք շահին դոստանք՚ մեր խարջովն եկել անք շահին քոմակ առենք և կը խարցանի թէ աղորթ այ՚ որ Ռուսաստից օրէն Լ՚ մարդ այ մեռաման և Փիրայբաղարու պոտպոլկովնիկն էլ մեռել այ և Բրդայդերն էլ ուժով նաչաղ այ՚ էս մզդուսի Մարկոսն խանին ջուղաբ կը տայ՚ թէ ես էտանք լսել չեմ՚ էտանք ոնչ սուտ խաբարանի այ՚ որ խալխն գոլման ան՝ քեզ խոշայ մարտի առում՚ սուտ խաբարանի այ բերում՚ խալխն ասացէլայ՝ թէ դու բանի խաբար չես՚ և Օգոստոսի ԺԴ՚ ումն խաբար արեկ՚ որ Է՚ նավ այ եկել Սոկլանայ անց այ կացէլ և Բաքուայ առուն էլ թախեխ յիմացան՚ որ Ռուսաստն առել այ՚ Գասկառու խալխն շատ դասփաչայ ելան՚ ինչ խիզան որ կէր՚ թամամին քաղաքէն դուս աղարկեցին և Գասկառ Թ՚ թոփ կայ՚ Ե՚ ըն թուջէ՚ Դ՚ ըն արկաթէ՚ Ա՚ թուջէ թոփն շատ ձիք և լիվ թոփ այ՚ Դ՚ էլ զամբուրակ կայ և խանն յամէն օր ասկարին Սան այ յանցկացնում՚ և Թարվիզու Օգոստոսի ամսին շաթիր արեկ Ե՚ օրում ասաց՚ թէ շահն Թարվիզու վեր եկայ՚ գնաց Վասպինճ՚ որ Թարվիզու մինչև Վասպինճ ԺԵ՚ վերստ այ՚ որ ասացէլան թէ գընայման այ Առղավել՚

127՚ Օգոստոսի ԺԸ՚ ումն Փիրայբաղարցի՚ Փիրայքամանն խաբար խրեր՚ թէ քանի Ռ՚ մարդ Գասկառայ գիշերով գոլէց ան Փիրայբաղարայ բերթին վերայ՚ չուն որ լսել ան՚ որ Փիրայբաղարայ Ռուսաստանին ոնչն էլ նաչաղ ան՚

128՚ Օգոստոսի Ի՚ ումն Մամադ ղուլի խանն Լէկզոնն միայտեղ թիֆլիզ առել այ՚ Լէկզին շատ ապրանք և յէսիր այ

127 Փիրայքամանն—յատուկ անուն՚

տարել Թիֆլիզը. յետոյ Օսմանցին այ եկել, Թիֆլիզն առել, որ մոչ մարդ կը Թալանի, մոչ յեսիր կառի՝ էնպէս նստած այ։ Էս խաքխաթն ոչ Թէ մին մարդից անք լսել, օվ գոյման այ՝ էս այ ասում և վախտանկ խանն փախել այ՝ գնացել այ Բաշաչուղ։

129. Վերոյ Թարեղումն խաբար արեկ՝ Թէ Օսմանցին գնացել այ՝ ցարևան առել այ՝ որ մինչի Նախչիվան զաֆտել այ։ Էս խաբարն չեռ ճշմարիտ չե։

130. Վերոյ Թարեղումն որ խաբար արեկ՝ Թէ Ղզլբաշն գնացել այ Ղափանստան այ մտել, Ղափանայ խայէրին՝ որչանք սիլայ, բուսաթ, բարուԹ, գուլայ որ հլել այ՝ յինք ան առել։ Էս խաբարն էլ դէռ ճշմարիտ չե։

131. Վերոյ Թարեղումն Ղափանեցի ցարուԹիւնն Թարվիզու արեկ՝ ասաց՝ Թէ խայի ուզբաշի զանլու Շապանն և դուզաղու Ավետարանոյ գեղին մելիքբաշուն տղին խետ փարխաշտի կունենան, կը խաշտացնեն էլ մելիքբաշուն տղէն զանլու Շաբանին պատիվ կը կանչեն։ Էս ուզբաշի զանլու Շաբանն Գ.Ճ. խայօվ կը գնայ էս մելիքբաշուն գեղն պատիվ։ Էս մելիքբաշուն տղէն յառէջ ուր գեղին խալխին պատվեր կնի տվել՝ Թէ զանլու Շաբանն քանի խոգով կը տանեմ իմ տունս, նրայ մարդիքն Ե.Զ. խոգով տարէք ձեր տներն, յեվ մին Թվանվի ձէն լսէք. յամէն մարդ ուր զենաղն սպանի։ Էսպէս կը տան զանլու Շաբանին և իւր Գ.Ճ. մարդին կը սպանեն։ Էս ողորմելի նորընծայ խայի ուզբաշի զանլու Շաբանն ուր Գ.Ճ. մարդօվն կը սպանեն, էնպէս ան արարէլ՝ դոր որ խիվիցիքքն ազբէքվիճին արարին։

132. Օգոստոսի ԻԱ. ումն Թիֆլիզեցի խայ բարիքալայ ցարուԹիւնի որդի Բէջանն Թարվիզու եկավ՝ ասաց՝ Թէ Թիֆիզու շատիր արեկ, որ գրել են՝ Թէ Օսմանլուն որ գը կոյ՝ Թիֆլիզու կը մտնայ, Մամադ զուլի խանն բերԹի քուրԹերօվն կը գընայ Փիշվազ Օսմանլուն կը բերեն Թիֆիզ. Օս-

130 Սիլայ—զէնք. բուսաթ—գործիք։

131 Փարխաշտ—վէճ։

132 Փիշվազ—ընդ առաջ. զայեխ—նաւակ. զայվուխ—փաս. Թաջ-Թօմար—պսակ. Թաքլիֆ—հրաւէր։

մանլուն Թիլֆիզն զանֆտել է, Գ. օրէն յետ Մամադ ղուլի խանին դուԹսաղ կառի Վանդակին որդի Շանավազխանին էլ բռնել գընեն՝ որ Թիֆլիզու խանուԹիւնն տվել ան Շանավասխանին։ Էս Շանավասխանն Մամադ ղուլի խանին կը փախցանի, էսպէս որ մին ղայեխ կը բերի՝ Քուռումն կը կանկնացանի, Մամադ ղուլի խանն չվանով վերևէն ներքև կը կախեն՝ կը դնեն ղայեխի միջումն կը փախցանեն և Օսմանլուն Շանավազխանին կասի՝ Թէ պիտի որ ղայվուխ դնես գլխիտ և Օսմանցու շոր խականես, սայ կասի՝ Թէ շահն ինձ ԹաջԹօմար այ աղարկում, դու ղավուխ աս Թաքլիֆ առում։ Էս Շանավազխանն գիշերով կը փախի՝ կը գընայ ՕսէԹ։ Օսմանլվի Գ. փաշայ ուր ասկարօվն կը գընան՝ որ Շանավազխանին բռնեն։ Շանավազխանն ՕսէԹու ասկարօվն դուս գըկոյ՝ Օսմանցին փիս տեղ գնի, կը տան շատ ասկար կը ջառԹեն և Գ. փաշէն կը սպանեն, Ա. փաշէն սաղ կը բռնեն և Վախտանկ խանն էլ ՕսէԹումն գնի՝ որ կը տայ Գօրկի ԵրէսԹավին կը խնխտի և Վախտանկ խանն նիաԹ այ ունեցել՝ որ էլ ասկար բոլորեն, գնան Թիֆլիզու վերայ, որ Օսմանցուն Թիֆլիզու դուռ առնեն։ Վերոյ Բէջանն ասաց՝ Թէ ես Թարվեղ էի, որ Գանջու չափար արեկ՝ խաբար իրեր, որ Լեկզին եկել այ, Գանջու դովն բըռնել այ։

133. Հայր սուրբ՝ մեր խեղջ ողորմելի Հայոց ազկրն տիր շատ նեղուԹիւնումն այ, Գոխտան դավառ՝ որ Ղղլբաշն այ Թալանում և կերպ կերպ փալինքանի ան բերում գլուխներանին, որ նման չէ ամենան խօսկն գրել, քաշկայ Թէ ես էլ մեռած լինի՝ որ չի լսի։ Ղափան էլ բի դաստուր որ նեղուԹիւնումն ան՝ որպէս Թխտիս էն յիրէսումն նմարայ **130** ումն գրած այ՝ Թէ ինչպէս այ Ցարևանայ Խայերին և վանքերին էլ շատ նեղուԹիւն ան ելել տալման՝ որ մին գիր ան գրել փարսադամ բէգին՝ Թէ էսպէս նեղուԹեան միջումն անք, մեր ֆիքրն ապայ։ Փարսադան բէկն շահին արդ այ արարել շահիցն ըռա-

133 Փալինքանի—փորձանքներ. ըռադամ—հրաման. դիլնաման—սրտակից. քօԹ—նաւակ. բէզռասա—մէկ տեսակ հաստ չուխայ. բիլան—հասկացող. ալիշ վերիշ—առուտուր. դար մէ դար—դուռնէ դուռը. բանդայ—ծառայ. սամն—փայ. յաջալ աման—կեանք տայ։

դամ այ խանել ազարկել Ցարևան՝ որ էլ Խայէրոց խետ քան չի ունենան և մեր Հայոց ասկարն որ բոլորվելլան՝ ասում ան՝ թէ կՌ. մարդ այ, Գ. բոլկ ան, որ Գ. տեղ նստած ան՝ նոցայ մին աչին Աստուծոյ լուսին այ, մին աչքն մեծ թագավորին ճանայպարին այ՝ որ տիր շատ այ նոցայ դիլնաման պիտի՝ որ հրամանքըտ նոցայ ֆիքրն քաշես՝ որ թամամ Ղզլբաշն և Օսմանլուն նոցայ արընին յեռանէն ան և նոցայ պատչառիվ ամենայն տեղի Խայէրն նեղութիւն ան քաշում: Ցավատայ, որ Հայքն վարթարաֆ ելավ քանի պատչառիվ. Ա. ասում ան՝ թէ Հայքն թամամ չառթել պիտի՝ որ էս երկիրն վարթարաֆ արարին, էսպէս որ Ռուսան բերին կոխեցին Ղզլբաշի երկիրն, Ազվանն տարան Ըսպահան և. կՌ. Խայ էլ բոլորվել այ՝ որ Ռուսին խետ միայվորվեն՝ որ մեզ վարթարաֆ առեն: Հայր սուրբ, էն խեղչ խայէրն՝ որ բոլորվել ան՝ մեծ Եփրատոր թագաւորին անման ան բոլորվել: Վասն Քրիստոսի սէրն Կստոնց ֆիքրն արայ՝ որ գառան պես բոլորվել ան, չնի թէ գայլն յափըշտակի, զըայ նոցայ Դ. կողմն թշնամին բռնել այ: Ես փոքր գրեցի մեր ասկին խատար, հրամանքըտ շատ իմացիր: Էն գրերն՝ որ ինձ աս տվել՝ մին գիրն չեմ աղարկել, թամամին էլ ինձ խետ այ, մնացել ամ ֆքրում՝ թէ աղարկեմ, ճանայպարներն կապ այ և խայի թշնայմին շատ այ, թէ չաղարկեմ՝ գոր բիդի լինի: Հրամանքըտ խոյ գրերն մհրաց աս տվել, քանի խետ գրել ամ՝ թէ գրիր որ բանամ, սավագն աղարկեմ, ասըն պահեմ, որ Աստուած մի արասցէ՝ թէ մինն կորի, միուսն մեր ձեռնումն լինի: Հրամանքըտ խոյ էտ գրերին խատար մին բան չես գրում և Օդոստոսի ԺԶ. ումն ԺԱ. նավ արեկ Աշտարխանայ, հրամանոցէտ գիր չկեր, մեզ աղարկել աս տեղս, մին գիր չես գրում՝ որ յիմանանք՝ թէ մեր ախիրն գոր այ, ինչանք դառնալէց: Սենք խոյ եկել անք տեղս, մինչի էս օր սաքայ մին յարաքաթ չեն արարել, էսպէս նստած անք, աշխարիս խարջն ուտենք: Էս խարջն որ առում անք՝ հրամանոցըտ գլուխն ոխջ կայ, ամայ պիտի որ մեզ մին գիր գրես, մեր սրտին մին մխիթարութիւն լինի, վասն Քրիստոսի սէրն և հոգուդ խատար մեզ մոռանալ մի և մեր ֆիքրն արայ: Սենք խեղչանք, մենք հրամանոցըտ ապավինեցանք՝ թէ մեզ

տէր աս և տիրութիւն կառնես։ Էս օր թէ խայ՝ թէ թաթար որ գոլման այ՝ ոնչէն էլ Ի. Լ. թուման ան տալման աղարկում, որ ուզեն լեզվով մեր կարդայնօղներն ըսկի մին ընտակի ա-բարմունք չունեն։ Մենք ժ. անք ջաֆայ քաշում, նոքայ մին էլ չեն քաշում։ Էս օր մեր տէրն հրամանքատաս, պիտի որ մեծին յիմայ անես՝ մեր ֆիքրն առես, մենք խապլենի վերայ չենք, մին քանի թուման փող ունինք որ կերանք դնաց, յա-խիրն ինչպէս պիտի լինի։ Ցուս Աստուած՝ որ հրամանո-ցըտ սրտոցն լինենք՝ որ մեր ֆիքրն քաշես։ Պարոն Էյվազին փողն՝ որ ուր տղէն զողայելէր փախել, տղէն էլ բռնվեց և թամամ փողն էլ դուս արեկ, և Պարոն Էյվազն թարեղումն զօսպօտին բրդայդերէն և զօսպօտին պօլկօվնիկէն ըռուսխաթ յինք առէց՝ թէ իմ տղէն Աշտարխան այ, ապրանքս քշին այ, քանի դրումամ՝ թէ ապրանքս վեռ եկ, ոչ գոլման այ, ոչ ապրանքս աղարկումդայ։ Պարոն Էյվազին ըռուսխաթ տը-վին, որ տեղէս բսթօվ կընայ Բաքու, տեղէն գոյ Ղալաղաս, գումանք կայ՝ թէ մեր մեծայորէրն հրամանացատ էլ և զօս-պօտին զուրէռնաթ Արթեմ Պետրովիչին էլ ան գրել՝ որ շու-տով Էյվազին յետ աղարկէս։ Հայր սուրբ՝ նահախ տեղն է էս մարդին ապրանքն սորայ տղէն աղարկէլ չէ, թարեղումս բէզռատատ չուխէն ֆի գաղն ԵՌ. գիան այ՝ որ յամիշայ էտ չուխին գաղն ԲՌԸՃ. ԳՌ. գիան դնէր, թէ էս մարդին չու-խէն տեղտ մնայ էս ձմեռն, ՀԷ. թուման Ղզլբաշի փող գա-բար կառի. սայ էլ խեղջայ, թալանած մարդ այ և Գ. ախպէր ան, մին մեծ քուլֆաթի տեր ան, էլ մանչինչ չունեն, գէյրի էտ ապրանքն որ Շամախու ախպերքն գիր էն գրել՝ թէ մենք տեղս դառն ախկատ մնացէլանք, որ ջուլխակութիւն անք ա-ռում յանց կալման։ Հայր սուրբ՝ կը խնդրեմ որ շաղավաթ առես՝ Էյվազին ֆիքրն շուտով առես աղարկես, որ չնի, թէ տեղէս մեծայվորաց կշտին սուտ դուս գոյ՝ որ մանչ ուր խը-մոր այ լեվ, մանչ մեղ խմոր. ողորմութեամբն Աստուծոյ՝ որ Պարոն Էյվազն գոլման լինի, խատուրն քանի լէվ բիլան տղէք աղարկես՝ որ տեղս տղայ շատ կան, տանայ բանի պետք չեն. և էն տղէքն որ Պարոն Էյվազին խօսկ ին տալել՝ մանչ մեկն մեր ֆանդն չեն, որ յինքըն հրամանոցըտ կասի և ըստեղես խա-

յէրն որ կան՝ մոչ մէկն մեզ օգնութեան պետք չեկին, որ ոչչն էլ լալման ան՝ թէ թալանած անք՝ խեղջ եղած։ Ինչ ունենք՝ որ ձեզ ինչ օգնութիւն առնենք և ուրիշ տեղած խոյ իսկի ումիդ չկայ, զրայ ոչչն էլ թալանվել ան և ճանայպարներն կապ այ, որ նման չե գիր աղարկելն, և մենք էլ մին ծախ տեղ անք ընկէլ որ մոնչիչ կողմէ մեզ Ա. օգնութիւն առող չկայ, և մեր տրտում սիրտն ուրախացանող չկայ, իշալայ հոգի Սուրբն մեր տրտում սիրտն ուրախացանի և այլ։ Էս էլ արզ առեմ՝ որ թարեղումը մեր Հայոց ազգէն օվ փոզայտէր այ՝ փախել այ՝ եկել էտ երկիրտ և որն գնացել այ Բաղդատ։ Հայը սուրբ՝ ճշմարիտն գրեմ՝ որ աեղէքիս մարդ կոցէն ումիտ չկայ։ Տեղիտ վաճառականն ձեռաց տաս ոչ, ինչ յինք առելեց առ՝ գոցանե յինք առուս, որ Հայոց ասկումն քան. զ դոքայ փոդայտէր մարդ չկայ։ Հայը սուրբ՝ ինձանէ բեդամաղ չնես՝ թէ էսչանք վախտ այ գընացել այ, իքմին չե աղարկում. մինչի թարեղս խոյ քաղաքքս կապ էր. յալդայ որ բացվել այ՝ Աստուծով ինչ որ լաղումայ՝ կառում նավէրուն կաղարկեմ։ Պարոն Եյվազին խետ էնտուր զատ չը աղարկեցի, որ փոստի բոթայ վեռման չեն։ Աստուծով նավէրն շուտ վեր կը կայ, էնատցում ինչ որ լաղումայ՝ կաղարկեմ և խնդրեմ հրամանոցը ողորմութենէն՝ որ Պ. Աւետին, Պ. Սիմոնին խետ լեվ սեր առես, ողորմութիւնտ ոչչիս վերայ պախես։ Աստուած վըկայ լինի, որ մեզ պէս որդի և ծառայ չես կարել գտանել, հրամանոցտ զահիր այ որ սուտ չեմ գրել։ Աղորթ այ՝ բաղի վախտ մեր անդիտութենէն հրամանոցտ բիդամաղ անք արարել, ամայ պիտիլ չե, որ սիրտըտ գձես, զրայ մենք սովդաղար անք ելէլ ալիշ վերիշի աէր։ Էս օր ԺԶ. ամիս այ, որ մեր սովդագարութենէն ձեռն անք վեռել, Ա. սատակ գէլուբ չունենք, գէյրի խարջելն։ Դեռ խաբար չենք՝ թէ ինչ անք կամ թէ ինչ դառնալէց անք։ Ափսուս որ մեր ձենքն թամամ Ղզլբաշի երկիրն և Օսմանցու երկիրն յըռչակվեց՝ թէ Ֆլան Ֆլան Խայէրն Ըռուստի թագավորին ղուլ ան դառցել՝ որ առունանիս ծրծուման։ Եթէ Աստուած մի արասցէ՝ մեզ մին բանի վերայ չը գրիր, որ մեզ ըռուսխաթ ելավ՝ էլ կարել չենք էս երկրումն ման գոլ, որ թէ ձեռն ընկանք՝ մարդի պէս չեն

ըսպանումշան պէս կը ըսպանեն, որ պիտի Ըռուսաստի երկրումն դար բէ դար մնանք, ում ունի՝ ուտի, ում չունի՝ ողորմութիւն բոլորի յանցկայ։ Եվ յուսացեվ անք Աստուած և սպավնեվանք հրամանոցտ՝ որ մեզ կորցանեվք ոչ և էվ ինչ հրամանոցտ կամքն այ՝ բարի այ։ և քանի անդամ խնդրեվամ հրամանոցեվտ՝ որ Պարոն Ավետին էվ ամ դրեվ՝ որ բանդիս խսեբն դրի, որ մակ՝ մեռնեվ կայ, և բարութ կայ կշտին՝ իմ սանն մին բոչկայ եայ, ումիդ որ աղարկեվ լինեվք, եթե աղարկեվ չնեվք՝ շաղավաթ առեվք՝ աղարկեվք՝ որ ըսկի բարութ չունենք, յաղբաթե բարութքն, առաձիձն սեվք Պարոն Եյվազին որ բերի, և մին էվ խնդրեվամ՝ որ մին դիր յինք առուս աղարկես զօսպօտին բրղայդերին վերայ, որ մեզ թե բարութ պետակ լինի՝ տայ։ Եւ այս է մեր տղեքն։ Ղումպրե որդի Երեմիայ։ Մուրատի որդի Խալաֆ։ Տէր Գասպարի որդի Պետրոս։ Գրիգորի որդի Կարապետ, Լէցի Ըստեփան Եակովլեվ Մնայցականի որդի Ցարութիւն Գանջեցի, Ըստեփանի որդի Բէջան։ Դվարի որդի Միրզայ, Միրզէ որդի Յակոբ, Գասպարի որդի Ըստեփան, Ալավերդէ որդի Ըստեփան, Շվէտ Մաքսիմ Ալեքսանդրովի, որ էս ԺԲ։ տղէն հրամանոցտ աչն կը համբորեն։ Էստուր Ժ։ ըն տղէն ինձ խետ ի բերել։ Բ։ տղէն Պարոն Եյվազին քշտին էր որ Պարոն Եյվազն արեկ՝ Ղալաղադ, Երեմիէն և Յակոբն էվ իմ կշտին այ և Երեմիէ տուն ականես և որդին կշտիտ պախես՝ որ շատ ողորմորման այ և աչդ կը համբուրի։ զօսբօդին բրղայդերն և զօսբօդին պօլիցիկին հրամանոցտ շատ բարև կառեն։ Պարոն Գրիգոսին եվպայր Գէվորքին շատ բարև առես։ Ամենայն բանն Պարոն Եյվազիցն յիմանաս, Աստուած հրամանոցտ հերդար ումդր տայ և մեզ յաջալէ ամանն որ բարով ուրախութեամբ ոտդ համբուրեմք։

Փոքր ծառայ ոչինչ Պետրոս

Դի Սարգիս Գիլանէնց։

ՏԵՂԵԿԱԳԻՐ

ՎԵՐՋԻՆ ԱՐԿԱԾԻՑ ԶԷՅԹՈՒՆԻ *

Զէյթունի մէջ պատահած դէպքերուն պատմութիւնը սկսելէն առաջ, հոս նոյն նահանգին վրայօք տեղական ծանօթութիւնմը տալու հարկ կը համարիմ։

—

Զէյթունի քաղաքը կամ մեծ գիւղաքաղաքը՝ որ նոյն անունը ունեցող նահանգին գլխաւոր տեղն է, Մարաշու հիւսիսային կողմը, և այս քաղքէն ուրթ ժամ հեռաւորութիւն ունեցող դաշտավայրի մը մէջ շինուած է։ Ճիհան չայ ըսուած գետը (ըստ հնոց Պերամոս), Ալպիստանի կողմերէն և Զէյթունի ետևէն սկսելով, անոր մինչև արևելեան կողմը զուգակից հեռաւորութեամբ կերկննայ, և Մարաշի արևմտեան կողմէն անցնելով, այս Զէյթունի սահմանը կորոշէ։ Անմատչելի լերանց դօտի մը աս գետիս հետ զուգաչափ հեռաւորութեամբ երկննալով և Զէյթունի արևելեան կողմը դառնալով, այս նահանգին մէկ անառիկ պատնէշ մը կը կազմուցանէ։ Գերթմինի և Պէշլինի գիւղերը՝ որոնք այս եաքի պատահարներուս մէջ մեծ մաս ունեցան, Զէյթունի արևելեան կողմը Ճիհան գետին քովերը և Զէյթունէն հինգ կամ վեց ժամ հեռաւորութեամբ շինուած են։

Ալապաշ գիւղը Զէյթունէն ուրթը ժամ հեռաւորութեամբ անոր հարաւային կողմը, և նահանգին սահմանին մօտ մէկ գիւղն է։ Զէյթունի հիւսիսային և արևմտեան կողմ-

* Այս յօդուածն, որ մի ուսումնական օրիորդի աշխատասիրութիւնն է, Տաճկաստանէն է մեզ ղրկուած՝ մեր ամսագրոյն մէջ հրատարակելու, ուստի մենք նոյնութեամբ այս տեղ յառաջ կրկրինք։

մերը գարձեալ ներանց մէկ ուրիշ շարքովը պաշտպանուած է։ Այնպէս որ այս նահանգին մէջ մտնելու համար, միայն անցք մը կայ Ալապաշ գիւղին կողմանէ, այսինքն հարաւէն։

Այսպէս Զէյթունի սահմանը գլխաւոր քաղքէն սկսելով՝ չորս կողմէն ալ մինչև տասնը մէկ կամ տասներկու ժամուան տեղ կը տարածի։

Նահանգը երեք քէհեայութեան բաժնուած է, այսինքն Զէյթունի, Ալապաշին, Մուխալին, որ արևմտեան կողմէն և Զէյթունէն երեք ժամ հեռաւորութիւն ունի։ Այս երեք գլխաւոր քաղաքացս կառավարութեանը տակ կը գտնուին այլ գիւղեր։

Նահանգին գլխաւոր կառավարութեան կեդրոնը Զէյթունն է, և որոնք չորս երևելի հայազգիներու ձեռքն է։ Որոնց անուններն են։

Ա. Աստուածատուր Եէնի տիւնեա.
Բ. Մարտիրոս Սուրէնեան.
Գ. Ղազար Շովքեան.
Դ. Մկրտիչ Յակոբեան։

Մնացած երկու քէհեայութիւնը, այսինքն Ալապաշին և Մուխալին, քէհեաներու յանձնուած է։ Բոլոր այս նահանգիս բնակիչքը Հայազգի են, վերոյիշեալ Պէշէնի և քերթմինի գիւղերէն զատ, որոնք այլազգի գիւղեր են. այլ այսու ամենայնիւ Զէյթունի կառավարութեանը կը հնազանդին և արքեպիսկոպոսը կը նստի Աստուածածնայ վանքը, որ Զէյթունէն մէկ ու կէս ժամ հեռու է ըստ արևելս։

Միւս վանքի մը մէջ որ Փրկիչ կը կոչուի, և Զէյթունին հարաւային արևելեան կողմը կիյնայ, և անկից երկու ժամ հեռաւորութիւն ունի, վարդապետներ կը նստին։ Այս նահանգին արևմտեան սահմաններէն դուրս է միւս այն նահանգը, որ նմանապէս անկախ է, զոր և կը կառավարէ հռչակաւոր Գոզան Ողլու ըսուած անձը։

Զէյթունի նահանգին բնակչաց սկզբնաւորութիւնը Հայոց Կիլիկիոյ աթոռին թագաւորութիւնը կործանմանէն կառնէ։ Այս միջոցին ազնուազարմ Հայազգիք՝ Եգիպտացւոց բռնութիւններէն և սրէն ազատելու համար Տաւրոսի վրայ ե-

դող այս լեռնային վայրս ապաստանեցան ու ժողովեցան, ուր որ իրենց սովորութիւնը, իրենց լեզուն և բնաւորութիւնը և իրենց ազգային ծէսը պահած են. և այսպէս դլխովին մեկուսացեալ ու անկախ վիճակի մէջ պահած են զիրենք, օտարաց հետ ամէն որ և իցէ յարաբերութենէ կամ հաղորդակցութենէ խուսելով: Մինչև այս վերջին դարս այս նահանգիս Օսմանեան տէրութենէ ունեցած անկախութիւնը կատարեալ էր, բնաւ տուրք մը չէր հատուցաներ. բայց եաքի տարիներս Մարաշ խրկուած Ոսմիկանները Բարձրագոյն դռնէն հրամաններ ընդունեցան Զէյթունը նուաճելու: Գրեթէ ամէն կուսակալ փորձ մ' բրած է զայս նահանգն դրաւելու, այլ ամէնքն ալ յաղթուած են: Եուսուֆ փաշան, Քէօսէ փաշան և մօտ տարիներս Խուրշիտ փաշան, ամէնքն ալ Ջանացած էին Զէյթունի նահանգը նուաճելու և ամէնքն ալ յաղթուած էին:

Զէյթունցիք բնաւ իրենց նահանգէն դուրս անիրաւ յարձակում մը չեն բրած և տէրութեան դէմ ապստամբ չերևնալու համար, բաւական ժամանակէ ի վեր Մարաշի ոստիկաններուն տարուէ տարի որոշ գումար մը կը հատուցանեն: Եւ երբ քանի մը անգամ իրենց վրայ եղած յարձակումը սպառնալից եղաւ, այլազգի Միւտիր մը իրենց երկիրը ընդունելու խոստացած են, այլ Միւտիրը հոն բնաւ հաստատ բնակութիւն մը չէ բրած: Զէյթունցիք թէև իրենց խիստ բերրի եղող երկիրը կը դործեն, այլ այսու ամենայնիւ ցորենը դրսէն առնելու պէտք ունին: Իրենց դլխաւոր բերքը երկաթ է, որ Զէյթունի կռնակը եղող լերանց մէջ դտնուող հռչակաւոր հանքէն կելլէ: Զէյթունի նահանգին բնակչաց Հայազգի ընտանեաց արդէն թիւը շուրջ երկու հազարի կելլէ, այս բնակիչքս արի և քաջամարտիկ անձինք են ու միշտ այլազգեաց երկիւղ ու սաստ եղած են: Հոս պէտք է նաև նկատել թէ մերձակայ նահանգաց քրիստոնէից վիճակը այս լեռնաքաղաքէս կախուած է. անգամ մը այս նահանգն Օսմանեան զօրքերէն նուաճելու ըլլայ նէ, բոլոր այդ վերոյիշեալ նահանգաց քրիստոնեայները սասսիկ դերութեան տակ պիտի ճնշուին: Եւ ահա այս է պատճառը, որ Մարաշի նահանդին այլազգիքը Զէյթունի անկախութեանը դէմ սրտերնուն

մէջ մեծ ատելութիւն մը ունեցած են։ Մարաշի կուսակալնե-
րուն միշտ իրենց պատերազմացը մէջ Զէյթունէն յաղթուիլը
այս ատելութիւնս աւելի ևս բորբոքած է։

Զէյթունի բնակչաց թիւը օր քան զօր աւելնալու վը-
րայ է, բայց իրենց գլխաւորները անոնց ճիշդ թիւը Մարաշի
կուսակալաց բնաւ չեն տուած։ Ասոնք միշտ 78,000 անձանց
չափ ցուցուցած են իրենց թիւը, միայն Զէյթունի քաղաքը
վեց մեծ եկեղեցի և չորս աղ մատուռ ունի, նաև մէկ եկե-
ղեցի մըն ալ Ալաբաշի և մէկ մըն ալ Մուխալի մէջ կը գտ-
նուէր, այլ այս եաքիններս վերջի յարձակման ատեն քայքայ-
ուած են, դարձեալ Զէյթունի քաղաքին մէջ հինգ նախա-
կրթութեան դպրոց կը գտնուին, այս կրթութիւնը չէ կրցած
մինչև ցայժմ յառաջանալ անընդհատ յարձակմանց պատ-
ճառաւ։

Այս համառօտ ծանօթութիւնէս եաքը ահա այս վեր-
ջի պատահարաց պատմութիւնը։

Քէթմէնցի այլազգի մը Բէլթէք Ալի անուամբ չորս հինգ
տարիէ ի վեր իր եղբօրորդւոցը մէկուն՝ որ Խպրահիմ կը կոչ-
ուէր, կինը յափշտակած էր։ 1862-ին Յունիս ամսուան այս
երկու ազգականներս արտի մէջ մէկզմէկու հանդիպեցան, ու
այն արտին սահմաններուն վրայօք միջերնին վէճ մը բացու

անանկ զատասխան տուին, թէ աւելի յարմար էր այս բանիս համար իրենց կրտնակից եղող Պէշինի այլազգի բնակիչները դիմել, եւ իրաք ալ՝ Իպրահիմ և ազգականքը Յիշեալ այլազգի գիւղը կերթան և իրենց աղաչելով՝ նոյն գիւղի այլազգի քէհեան, որ Կէօնճէ կը կոչուէր, ուրթ կամ տասը անձանց հետ, որոնք նմանապէս այլազգի էին և իրեն գիւղակից, դէպ ի Քէրթմինի գիւղը կերթան Իպրահիմին ու ազգականացը հետ Իպրահիմին մեռելները թաղելու համար։

Ալի Պէշինցի այլազգիները իրեն եղբօրը ու ազգականացը հետ միատեղ տեսնելով, անոնց վրայ կրակ կընէ և Կէօնճէ քէհեային եղբայրը միւս քանի մը Պէշինցի այլազգի կը մեռցնէ։ Պէշինցիք Իպրահիմին հետ միատեղ նորէն Ալապաշցիներուն արտը կը գառնան և գարձեալ կաղաչեն, որ իրենց մեռելները թաղեն։ Ասոր վրայ Հայ քէհեանները քանի մը Ալապաշցի Հայոց հետ այդ կուռոյն տեղը կերթան և Իպրահիմի մեռելները կը թաղեն։ Սոյն Իպրահիմն ալ արդէն վերաւորուած ըլլալով՝ իրեն ընտանեօքը Ալապաշցի Յակոբ քէհէային վրաններուն տակ ապաստանուած էր։ Յասնը-չորս օրէն եւ դարձեալ թախանձելով՝ կաղաչէ նոյն քէհեային, որ իր եղբօրը Ալիին հետ գինքը հաշտեցնէ, որպէս զի կարենայ ինքն ալ երթալ իր արտերը բանիլ։ Իպրահիմին ըրած աղաչանացը կը միարանի նաև Պէշնի այլազգի քէհեան, բայց Հայ քէհեան միշտ իր միջնորդութիւնը կը գանայ և քանզի երկու կողմանին ալ այլազգի էին, անոնց խրատ կուտայ՝ որ երթան Մարաշի կուսակալ Ագիզ փաշային քով ու անոր ձեռքը իրենց դատը վերջացնեն, և անոնց իրեն միջնորդութեանը համար խոստացած վարձքը չընդունիր։

Այլ այլազգեացս կրկին ու կրկին ըրած աղաչանքներէն շարժելով՝ երկու Հայ քէհեանները Յակոբ ու Կարապետ, կորոշեն որ գանենք հաշտեցնելու Ջանան և Պէշինցի այլազգեաց պէս Ալիին մէկ դարանին մէջ չինկնալու համար իրենց հետ միատեղ կառնուն նաև Պէշինի այլազգիները՝ որ հան կը գտնուէին և Ալապաշի Հայերէն մէկ քանի հոգի ալ և Զէյթունէն ալ ուրթ կամ տասը հոգի, որոնք նոյնպէս իրենց արտերուն մէջ կը գտնուէին, և այսպէս կերթան Քէթմէն Ալին

դանելու, և թշնամութեան մէջ եղող երկու այլազգի կողմանը հաշտեցնելու համար։

Քէրթմէն մօտենալու ատենին Յակոբ Հայ քէհեան հեռուանց Ալիին կը կանչէ ու կը ծանուցանէ, թէ խաղաղութեան պատգամաւորութեան մը կուգայ, և թէ ինքը անոր համար եկած է, որպէս զի Քէրթմէնի իրեն կրօնակցացը ու ազգականացը հետ հաշտութեան մէջ միջոց մը դնէ։

Ալի ձեռքը հրացանով կը պատասխանէ, և Հայ քէհեային տուած կրկին և կրկին ապահովութեանց դէմ իրեն կողմնակից այլազգիքը կը ժողվէ և Յակոբ քէհեային վրայ կրակ կը-նէ, զորն որ կը մեռցընէ միւս մէկ Հայազգիի մը հետ։ որ Պարսամ կը կոչուէր և երեք ալ կամ չորս Հայազգի կը վիրաւորէ։ Պէշենցի այլազգիները և Խպրահիմը Ալիին այս բարբարոսական գործը տեսնելով, անոր ու իր կողմնակցացը վրայ կը յարձակին և այսպէս պատերազմը կսկսի։ Քէրթմէնցի այլազգիք՝ որոց գլուխը Ալին կը կենար մէկ կողմանէ, այս պատերազմին մէջ դաշնակից կողմը ինն հոգի կը կորսնցընէ, և Ալիին կողմը տասնըհինգ հոգի, որոնք իրենց թշնամեաց դէմ չի կրնալով դիմանալ, ամէնքն ալ փախչելու կըսկսին և ձիհան գետը անցնելով, նոյն գետին միւս եզերքը գտնուող Ալիշայ անուամբ այլազգի գիւղի մը մէջ կապաստանուին։ Իրենց այս փախստեանը ատեն հինգ վեցի չափ Զէյթունցի հովիւներու կը հանդիպին, որոնք բնաւ այս կռուոյն մէջ մաս չէին ունեցած, և անոնց վրայ կրակ կընեն, անոնց մէկը կը վիրաւորեն, ու զանի գետը կը նետեն, միւս Զէյթունցիները կազատին։ Ալիին փախստականէն վերջը դաշնակիցները անոր ինչ-գերը կը գրաւեն։

Այս կռիւս ինչպէս ըսինք, Զէյթունէն վեց կամ ութ ժամ հեռաւորութիւն ունեցած տեղ մը եղած էր, որուն մինչև ան ատենը Զէյթունի գլխաւոր անձինքը բնաւ տեղեկութիւն չէին ունեցած։ Մարաշի մէջ շատ կողմնակից և ազդեցութիւն ունեցող և խիստ կրօնամոլ այլազգի մը Կիւլ Ալի կոչուած, այն օրերը Պէշեն կը գտնուէր, և դաշնակիցներուն ստացած յաղթութեանը վրայօք խիստ դժկամաց ըլլալով և Ալիին հետ ազգականութիւն ունենալով, կերթայ Ալի-

շայ գիւղը Ալին գանելու, ուր որ ապաստան եղած էր և զանի կը զրդռէ Զէյթունի Հայոց վրայօք Ազիզ փաշային ընդհանուր գանգատ մ՝ ընելու ։

Յիրաւի Ալին, կիւլ Ալին, և Մարաշի վիճուհները (մեծամեծները) որոնք ամէնքն ալ կրօնամոլ մարդիկ էին, Ազիզ փաշային գանգատ կընեն ըսելով՝ թէ Զէյթունի կեավուռները զ՝այլազգիները ջարդեր են ։

Առջի բերան Ազիզ փաշան մէկ քննութեան մասնաժողովը զնել կուզէր Ալին գանգատն ստուգելու համար, բայց կիւլ Ալին ու տեղւոյն մէճլիսը վերջապէս կը համոզեն Ազիզ փաշան, որ Զէյթունը առանց քննութեան զարնէ ։ Ազիզ փաշան անոնց խօսքերուն կը հաւատի և հրապարակաւ մունետիկ կանչել կուտայ, և ամէնուն կը ծանուցանէ՝ թէ ուր որ Զէյթունցի գտնուի, բռնուի, և ինչքերը գրաւուին ։ Եւ յիրաւի երեք Զէյթունցիք՝ որ այն օրերը Մարաշ կը գտնուէին, բանդ կը դրուին ։ Նոյն օրը Ազիզ փաշան զիրանց պահապան եղող ձամբզ Օղլուին հրաման կուտայ, Ալապաշի Հայ գիւղը, որ Զէյթունի նահանգին մէջն է, զարնելու ։ Այս ձամբզ Օղլուն իր 50, 60 հպատակներովը՝ և նոյն չափ մըն ալ նոզայիներով ձիհան գետը կանցնի, ու Ալապաշի եղող Թօբալ Օղլու Հայ գիւղը կը զարնէ ու կաւերէ. Թօբալ Օղլուի բնակիչքը Զէյթուն կը փախչին ու ձամբզ Օղլուին ըրած յարձակմանէն գանգատ կանեն։ Զէյթունի գլխաւորները նոյն միջոցին ըսած ըլլալով նաև, թէ Զէյթունի Հայոց դէմ Քէրթմինի մասնաւոր մէկ դէպքին պատճառաւը Ալին անիրաւ գանգատներ կը լսէր միւս երեսէն անձանց, և Տէր Մովսէս քահանային հետ իրենց Փրկիչ կոչուած վանքին մէջ կը ժողվուին, հետևեալ անձանց նամակներ կուղղեն, այսինքն մէկ մը Ազիզ փաշային, և մէկ մ՝ ալ Տուլ Գատէր Օղլու Սիւլէյման Պէյին. դարձեալ՝ մէկ մը Պայազիտ Օղլու Ահմէտ փաշային, և մէկ մ՝ ալ Միրալային (հաղարապետին), որոնց մէջ ձամբզ Օղլուին ըրած յարձակմանէն գանգատ կընեն. և Քերթմինի կառուցն դալով՝ կը ծանուցանեն, թէ իրենք անոր մէջ բնաւ մաս մը կամ գործակցութիւն մը չեն ունեցած ։

Դարձեալ նամակ մ՝ ալ կը գրեն Մարաշի Առաջնորդ կա-

բասկետ վարդապետին և ուրիշ մ՚ալ Կաթողիկեաց Հայ Արքեպիսկոպոսին, Գաղղեոյ Հիւպատոսի փոխանորդին (վիզիքօնսոլէին) և Մարաշի Մէճլիսին Հայ անդամներուն, որպէս զի իրենց դատին արդարութեամբ պաշտպանելու համար Ազիզ փաշային առաջին բարեխոս ըլլան։

Բայց Ազիզ փաշան իր կրօնամոլութենէն և այլազգեաց դիւանաւորներուն տաւած խորհուրդներէն բոլորովին գրգռեալ՝ Զէյթունցւոց նամակը չընդունիր, Կաթողիկեաց Հայ արքեպիսկոպոսին և այլոց աղաչանացը ականջ չի կախելով, զօրք ժողվելու և ժողովուրդը զինուորելու պատրաստութիւն կը տեսնէ։ Այս ըներուս վրայ Զէյթունցիք նորէն մէկ աղերսագիր մ՚ալ կուղարկեն կուսակալին, այլ այս եռքինն ալ նոյնպէս չընդունուիր։ Սոյն այս կուսակալն ամէն կողմը գորձակալներ կը ղրկէ զօրք ժողվելու, և մինչ Սեբաստիոյ կողմերէն Նօղայիները կը ժողվէ, և Տուլ Գատէր Օղլուն Քէրթիշ կը խաւրէ այն տեղւոյն լեռնաբնակ մարդիկը ու Քիւրտերը ժողվելու համար։

Զէյթունցիք այս վերջին լուրերս առաւ տեսնին՝ պէշինի այլազգի քէհեա կէօնճէն կը յորդորեն, որ երթայ Տուլ Գատէր Օղլուն համոզէ, թէ Զէյթունցիք Քերթմինի դիպաց մէջ բնաւ մասնակցութիւն մը չունէին։ Եւ թէ քանի մը Հայեր անոնց օգնականութեանը եկած էին նէ ալ ասի անոնց կրկին ու կրկին թախանձելովը և միայն Այիին հետ զանոնք հաշտեցնելու մտօք եկեր էին։ Իրօք ալ այլազգի քէհեան իւր կիւղին չորս երեւելի անձանց ընկերակցութեամբը Տուլ Գատէր Օղլուին կերթայ և վերոյիշեալ տեղեկութիւնները անոր կը հաղորդէ։ Բայց Տուլ Գատէր Օղլուն կը պատասխանէ՝ թէ Քէրթմինի դէպքը միայն պատճառանք մըն է Զէյթունը զարնելու։ Եւ Ազիզ փաշան ալ (ծածկաբար զանի զարնելու հրաման ընդունած ըլլալով) ուրիշ բան մը չէր փնտռեր, բայց միայն այսպիսի առիթ մը։ Դարձեալ Տուլ Գատէր Օղլուն անոնց խրատ կուտայ, որ ճիհան գետին միւս եղերքը անցնեն, որպէս զի մերձակայ եղող յարձակմանը տտեն հոն չի զըտնուին։ Սոյն այս ճամբդ Օղլուն նորէն Ալապաշի Հայ գիւղերուն վրայ յարձակուած էր, և երկու կողմէն ալ երկերկու

անձինք ինկած մեռած էին. մինչև այս միջոցս Աղիզ փաշան շուրջ տասներկու հազարի չափ զօրք ժողված էր, և Յուլիսի 26-երրորդ օրը (ըստ հնոց տօմարի) Մարաշէն կելլէր Զէյթունի վրայ երթալու համար իր զօրացը գլուխը ելլելով:

Եւ ձիհան գետոյն կամուրջը անցնելով՝ նոյն ամսոյն 27-ին Ալապաշի մօտերը իր բանակը կը դնէ, և երկու հոգի կը զրկէ այն գիւղը, բոլոր գիւղը կործանել կուտայ և աւելի սպառնալով՝ Գերմինի մարդասպանները կը խնդրէ անոցմէ: Ալապաշի Հայերը Աղիզ փաշային կը խաւրեն Իպրահիմը ու Պէշինի քանի մը նշանաւոր այլազգիները, որ Գերմինի դիպացը մէջ գտնուած էին: Անոնք Աղիզ փաշային կը ներկայանան և անոր կը ծանուցանեն, թէ Ալիին բուն թշնամիքը և հակառակորդքը իրենք են: Աղիզ փաշան զանոնք կը ճամբէ և իմանալով՝ թէ Ալապաշի Հայերուն թիւը խիստ քիչ է, ասոնց չի կրնցընելով՝ նոյն ամսոյ 28-ին երկու թնդանօթով Ալապաշի վրայ կը յարձակի և նոյն գիւղն և մերձակայ եղող 15-ի չափ մանր գիւղերն ալ կը քանդէ կը կործանէ, շուրջ 200-ի չափ Հայ ալ կսպանէ. Ալապաշի եկեղեցին ալ նմանապէս կը կոտրտեն կը կործանեն այս զօրքերը: Միւս մնացածները Զէյթունն կը փախչին և Աղիզ փաշան իր գունդերովը և Սիւլէյման Պէյ իր Բրդիշոյ կողմերէն ժողված 3, 4000 քիւրտերովը և լեռնականներովը Զէյթունի վրայ կը քալեն, իրենց անցած տեղերը ինչ բանի որ հանդիպեցան նէ, զամէնքն ալ կողոպտելով ու կործանելով: Փրկչայ վանքը մօտեցած ատենին, որ Զէյթունէն երկու ժամ հեռու է, հոն գտնուող ամէն քահանայները կը ձգեն վանքը ու Զէյթուն կը փախչին և կապաստանեն: Բայց մէկ վարդապետ մը Մամբրէ, մէկ աշխարհական մը և մէկ անտես աղախին մը իր որդւովը հոն կը մնան: Աղիզ փաշային գունդերը վանքին վրայ կը յարձակին, ու ներս կը մտնեն և հոն գտնուող վարդապետին քիթն ու ականջները կը կտրեն, և հոն գտնուած 40,000 ղուրուշ պատրաստ դրամը կը յափշտակեն, որոնք ժողվուած էր իրենց վանաց և անոր կից եղող եկեղեցւոյն նորոգութեանը համար, զոր սկսած էին: Վերջապէս զանի կը մորթեն և բերնին վրայ շան մը դիակը կը դնեն, զոր հոն նոյն միջոցին սատկեցուցած

էին։ Նմանապէս հոն գտնուող մէկ աշխարհականը և մէկ տղան կը մորթեն կը մեռցընեն և աղախինն ալ կը յափշտակեն և բանակը կը տանեն, որ դեռ մինչև հիմա ողջ է։ Ուրեմն դիտելիք է լսելը, թէ անոնք բոլոր վանքը կողոպտած ու կործանեցին, և եկեղեցւոյ բոլոր ինչքերը և սպասները տարած ա՛ռին, և ամէն տեսակ բարբարոսութիւն և անզգամութիւն կատարեցին։ Եկեղեցւոյն կողոպտուած ինչքերուն մէջ հնութեամբ կարի պատուականագոյն և խիստ մեծագին սուրբ անօթներ և սպասներ կային։ Նոյն ամսոյն 29-ին Զէյթունցիք Ազիզ փաշային մէկ քահանայ մը և 13 Հայ ծերունիներ ուղարկեցին, որպէս զի ապաչեն անոր, որ իրենց խնայէ, ինչ պայման և առաջարկութիւն որ իրենց դնելու ըլլայ, զամէնքն ալ ընդունելու խօսք տալով։ Այս պատգամաւորներն Նոզալիներէն ծանր նախատինքներ ընդունելով՝ Ազիզ փաշայէն ետ դարձուցան, որնոր իրենց ծանոյց, թէ Զէյթունը զարնելու հրաման ունէր։ Սոյն ամսոյն 30-ին գունդերը կը շտապային և անոնց մէկ մասը Աստուածածնայ վանքից կռնակը բարձր տեղերը դրաւելու կերթար։ Այս տեղաշարժութեանս վրայ պզտիկ կռիւ մը տեղի ունեցած էր։ Նոյն օրը Օսման Պէյ, Սիւլէյման փաշային որդին չորս հազարի չափ թէճերցի այլազգեաց գլուխը՝ Արևմտեան կողմանէ Զէյթունի վրայ կը քալէր և Միւրալ գիւղին վրայ, որ Զէյթունի երեք գլխաւոր քաղաքներէն մէկն է, յարձակուելով՝ և զանի դրաւելով՝ բոլորովին քանդեր կործաններ էր, տները և եկեղեցին կողոպտելով և հրոյ ճարակ ընելով։ Յուլիս 31 օրը Ազիզ փաշան Ահմէտ աղա ըսուած մէկը Զէյթուն կը ղրկէ և առանց թէուրեան անձնատուր ըլլալնին կը պահանջէ։ Տէր Մովսէս քահանայն և չորս գլխաւորները այն պատգամաբերին պատասխանեցին, թէ Զէյթուն բնաւ յանցաւոր չէ, և թէ որ Ալապաշցի Հայեր Գերթմինի գիւղաց մէջ գտնուած էին նէ, այս իրենց ըրածին ալ խիստ ծանր պատիժն ընդունեցան, մինչ իրենց բոլոր գիւղը և բոլոր իրենց արտերը ամէնքն ալ աւրուած և կործանուած են։ Այս պատգամաբերս 500,000 ղուրուշ պահանջեց Զէյթունը փրկելու համար, իսկ Հայերը պատասխանեցին, թէ իրենք 128,000 ղուրուշէն աւելի չեն կրը-

նոր տալ 25,000 դուրուշը պատրաստ դրամով, իսկ մնացածը ապրանքով: Այլ այսու թէ ուրեմն, որ Ազիզ փաշան իր բանակը Զէյթունի նահանգէն բոլորովին ետ քաշէ: Պատգամաւորները գնաց և վերստին դարձաւ Զէյթունցւոց առաջարկութիւնը ընդունելու պատասխանովը, ապահով ընելով զանոնք, որ հետևեալ օրը Օսմանցւոց գնդերը պիտի քաշուին, և թէ ինքն ալ պիտի ընդունի իրենց տալիք գումարը, զանի Ազիզ փաշային յանձնելու համար:

Այսպէս վայրկենի մը չափ կարծուեցաւ, թէ խաղաղութիւնը վերստին հաստատուած ըլլայ և պատերազմը ետ դարձած. բայց նոյն իսկ այն, երբոր Զէյթունի գլխաւորները և Տէր Մովսէս քահանայն Ահմէտ Պէյին իրենց բարեմաղթութիւնները և խնդակցութիւնները կը մատուցանէին՝ իր պաշտօնին այսպէս յաջողաբար ի գլուխ ելլելուն, ահա մէկ նոր գնաի մը ալ արշաւանքի ձայնը լսուեցաւ, որ Ահմէտ փաշային և ձերիտ Հասան Պէյին կառավարութեանը տակ կրնակի կողմանէ Զէյթունի վրայ կը թափուէին: Այս գունդս որ երեք չորս հազար զօրքէ բաղկացեալ էր, բոլորն ալ Ալպեստանի այլազգեացմէ ժողուած էր: Զէյթունի գլխաւորները տեսնելով, թէ Ազիզ փաշային խաղաղութեան վրայօք բացած խօսակցութիւնը ուրիշ բան մը չէր, բայց եթէ նենգութիւն մը, որպէս զի մինչև այս Ալպեստանի գնդին հասնելը առնն վաստակի, որ Զէյթունը ամէն կողմանէ կարևնայ զօրքով պատել, անոր համար պատգամաւորներին այս անհաւատարմութեան գործքերը ցուցընելով, դժկամակութիւնին ցուցնելը բաւական սեպեցին: Նոյն իսկ այս միջոցին Ալպեստանի գունդը իրենց անցած տեղը ինչ որ կը գտնուէր, զամէնքն ալ կը կործանէր ու կաւերէր: Բայց անխոհեմաբար լերանց մէկ կրճի մը մէջ մտնելով Հայերէն բոլորովին ջարդուեցան կատաղի և սաստիկ պատերազմէ մը ետև: Հայոց անոնցմէ առած տասներեք գերիներէն ու թը հատը հետևեալ օրը Ազիզ փաշային յանձնուեցան, իսկ միւս հինգը վերաւորուած էին: Օղոստոսի երկրորդ օրը առաւօտուն կանուխ Ազիզ փաշան Զէյթունի վրայ յարձակելու նշանը տուաւ. այլազգեաց բանակին առջևէն երբ 150 մոլլաներու և շէյխերու մեծ գունդը կերթար, և անոնց

ամէնուն ալ առջևէն մեծ Մկիթին։ Զէյթունէն կէս ժամի չափ հեռաւորութիւն հասած ատենին մէկ բարձր դաշտավայրի վրայ ժողվուեցան և աղօթելու կեցան և Զէյթունի վրայ անէծքներ կարդացին։ Մի և նոյն ատեն Զէյթունի կղերը թափօր ելած էր Մոլլաներու գնդին դիմացը դէմ առ դէմ, և սուրբ խաչը և սուրբ պատկերները, և ձեռագիր խիստ հին և մեծայարգ Աւետարան մը ձեռքերնին անդաստան ընելէն ետքը, Ապաշխարութեան շարականները կերգէին։ Այլազգի բանակը կէս ժամու չափ աղօթելէն վերջը, Զէյթունի վրայ յարձակեցաւ։ որուն առջին ժայռերու ետին տեղ տեղ Զէյթունցիք պահեստի մէջ կեցած էին իրենց չորս գլխաւորներուն հրամանատարութեանը տակ։ զատ 200 Զէյթունցիք ալ Անտուածածնայ վանից մէջ ամրացած էին։

Այս արշաւանացս մէջ այլազգեաց զօրքերը ՏԷր գալուստ Հայ քահանան և այլ ուրիշ գիւղացիք, որ ամէն կողմանէ փախչելով՝ Զէյթունի մէջ պատսպարուելու կուգային, անոցմէ որուն որ հանդիպեցան, զամէնքն ալ սպանեցին։ Ան ատենը Ազիզ փաշան հրամայեց, որ Զէյթունի և անոնց զօրացը վրայ թնդանօթներ արձակեն, տասն և ութը գնտակ ինկան քաղքին վրայ, և անոր մէկ քանի տները կործանեցին։ Այլազգեաց գնդերուն մօտենալու ատեն մէկ Զէյթունցի կնիկ մը Նոզայի մը ձեռք ինկաւ, բայց անիկայ իրեն գիւղակիցները օգնութիւն կանչեց, անոնց ապաչելով որ զինքը Նոզայի անզգամի մը ձեռքը թողելու տեղ, իր վրայ հրացան պարպեն և զինքը մեռցնեն։ Այս ձայնս լսելով՝ Զէյթունցիք Նոզային վրայ կրակ ըրին և զանի հոն սատակացուցին։ Այս միջոցիս պատերազմը ամէն կողմը բորբոքած էր, Զէյթունի զանազակաց հնչումը բոլոր Հայոց ի դէն դիմելու նշանը տուած էր։ Կռիւը խիստ կատաղի եղաւ։ Հայերը ամուր տեղեր բռնած ըլլալովնին՝ այլազգիներուն ազէկ ջարդ մը տուին և զանոնք ետ վռնտեցին և մինչև Ազիզ փաշային բանակատեղին հասան, որնոր հաղիւ կրցաւ մազապուր խալըսիլ։ Ասոր նըման ջարդ մը կերան նաև Անտուածածնայ վանից կողմը եղող այլազգի զունդը։ Զէյթունցիք լերանց կիրճերը ու նեղ անցքերը ամրացած ըլլալով, մեծ վնաս հասցուցին այլազ-

դեաց բանակին. կռիւը առտուանց մինչև կէս օր տևեց և Ազիզ փաշային զօրքերը սկսան անդին ցիր ու ցան փախչել։ Զէյթունցիք մինչև իրիկուն անոնց ետևէն ինկան և հալածեցին անոնցմէ շատ մարդ ջարդելով։ Այս զօրացս մէկ մասը Մարաշի ճամբան բռնած էր, որոնք իր փախստեանը ատեն մեծամեծ կորուստներ ընելէն վերջը՝ հազիւ հազ դիշերը հոն կըրցաւ մտնել։ Միւս մասը աւելի կարճ ճամբէ անցնելով՝ փախչելու համար Զէյթունի աջ և ձախ կողմերը ուղղած էին իրենց ընթացքը, այլ անոնց մեծ մասը լեռներու, կիրճերու և ձորերուն մէջ ջարդուեցան, մեծ մաս մ՚ալ դետին մէջ թափուելով՝ խղդուեցան։ Այսպէս այլազգեաց կորուստը վեց կամ ութը հազարի չափ կը հաշուի։ Նօղայիններէն 18 պէյ և գնդերու գլխաւորները պատերազմի մէջ ինկած են։ Հետևեալ օրը, Օգոստոս 3-ին, Զէյթունցիք այլազգեաց դիակունքը փոսերուն մէջ նետելու զբաղած էին։

Ազիզ փաշային բանակին մէջ նաև շատ ձիաւորներ ալ կը գտնուէին։ Զէյթունցւոց մեռելներուն թիւը 100—150 հոգւոյ չափ կը հաշուի։ Պէտք էր նաև նկատել թէ Ազիզ փաշան ստիպած էր, նաև և Քէրմինի և Պէշլինի երկու այլազգի գիւղերը Զէյթինցւոց դէմ պատերազմելու։ Պատերազմի ատենը Զէյթունցւոց կանայքը և տղայքը Եկեղեցւոյ մէջ ժողուած էին և պատերազմի յաջողութեանը համար կաղօթէին։ Յաղթութենէն վերջն ալ մեծամեծ ուրախութիւններ ըրին և Աստուծոյ մեծ շնորհակալութիւն մատուցին։ Հետևեալ օրը սկսան մէկիկ մէկիկ Զէյթուն հասնիլ բոլոր այն Հայազգիքը, որ այլազգեաց յարձակման ատեն զօրքերէն վիրաւորուած կամ ծեծ կերած էին և լերանց այրերու և քարանձաւներուն մէջ ապահովուած էին. որոնց ոմանց քիթն ու ականջները կտրած էին և Մելքիսեդեկ կոչուած մէկը դեռ մինչև հիմա այսպէս անդամատեալ Զէյթուն կը գտնուի։ Ալապաշի գլխաւորն քաղաքին մէջ այլազգեացմէ բրած ու կործանած տներուն թիւը 400-ի չափ կելլէ, և Մուխալի գլխաւոր քաղաքին մէջ եղածն ալ 200-ի չափ։ Ասոնցմէ զատ այլազգի զօրքերէն կործանուած են նաև Փրկչի վանքը, երեք

եկեղեցիք, տասնըմեկ ջրաղացք, դրեթէ 1500 կալք, 600 վերան և անթիւ անհամար ջրքոտանիք։

Բովանդակ վնասը միայն կարծեօք հաշուելով՝ քանի մը միլիոն ղուրուշի կելլէ։ Նօղայիներուն գլխաւոր պէյերուն գրպանները Մարաշի այլազգեաց գլխաւոր ու երևելի անձինքներէն և այն քաղքին միւս տէրութեան պաշտօնատարներէն գրուած թղթեր և վկայագիրներ գտնուեցան, որոնց մէջ անոնց կը խոստանային Զէյթունը իրենց պարգևելու, եթէ Զէյթունցիքը բնաջինջ ընել կարենային։ Այս միջոցիս Ազիզ փաշան ամէն կողմը հրամաններ հանեց, որով ամէն այլազգւոյն և ամէն պաշտօնակալին հրաման կուտար ամէն իրենց հանդիպած Զէյթունցիները զարնելու, կողոպտելու և բանտարկելու։ Եւ գործակալ մը խաւրեց Զէյթուն, և իրեն խալասել չի կրցած երկու թնդանօթները պահանջեց։ Զէյթունցիք հաւանեցան զանոնք ետ տալու, եթէ կուսակալն ալ պաշարման վիճակը, յորում կը գտնուէր Զէյթուն, անկէց վերցնելու խօսք տալու ըլլար։ Աւելորդ է հոս յիշել քրիստոնէից դէմ եղած այն դէպքերուն պատմութիւնը, որ այլազգի զօրաց մեկնելէն յառաջ, և անոնց ջարդուելէն ետև, Մարաշի մէջ եղան։ Դիմումնագիրս հաստատ որոշուած էր, այսինքն Զէյթունը զարնելէն վերջը Մարաշի բոլոր քրիստոնեաներն ալ սրէ անցնել։ Եւ արդէն քանի մը տներու վրայ յարձակելու և զանոնք կողոպտելու սկսած էին։ Բայց քանի մը կանոնաւոր զօրաց հասնելը և Բերիոյ Անդղիայի հիւպատոսին գալուստը, Մարաշի քրիստոնեայները այս վտանգէն և Օսմանեան տէրութիւնն ալ աւելի մեծ դժուարութիւններէն ազատած էր։

Ազիզ փաշան նոր մէկ պատգամաւոր մ՚ալ ղրկեց Զէյթուն Հայ քահանայի մը հետ, այդ երկու թնդանօթները ուղելու համար և անոնց ապահովութիւն տալով՝ որ եթէ մի և նոյն ատեն քիչ մ՚ալ ատակ տալու ըլլանք՝ պաշարման վիճակը կը վերցնէ։ Այս ապահովութեամբ վստահանալով՝ Զէյթունի արքեպիսկոպոսը և Տէր Մովսէս քահանայն և այլ գլխաւորները 30,000 ղուրուշ ժողվեցին և թնդանօթներն ալ հետերնին առած՝ Մարաշ եկան և զանոնք տէրութեան պաշտօնէից յանձնեցին։ Բայց Ազիզ փաշան պաշարման վիճակը

չի վերցնելէն զատ՝ Բերիայէն եկած կանոնաւոր զօրաց հրամանատար Հասան փաշային հետ միաբան Զէյթունցոր հրամաններ խաւրած էր, որպէս զի Զէյթունի չորս գլխաւոր անձինքը իրեն յանձնեն և Տէր Մովսիսին ալ պատուիրած էր զանոնք իրեն բերելու։ Եւ իրաք ալ Տէր Մովսէս Զէյթուն կերթայ, ուր փաշային խաւրած պաշտօնեայները կը գտնէ, և Զէյթունի երկու գլխաւորները և Ալա պաշի Կարապետ քէհեան Մարաշ բերելու ձեռնհաս կը գտնուի, որոնք Մարաշի արքեպիսկոպոսին երաշխաւորութեամբը Հայոց հասարակութեանը կաւանդուին։ Ասոնց Ազիզ փաշայի պալատէն ելլելու առաջին նոգայք վրանին կը յարձակին, բայց անոնք Հայոց տները մտնելով հազիւ կրնան խալըսիլ։

Այս դէպքերս անցելու առաջն Ազիզ փաշային պաշտօնէն ինկնալը և տեղը Աշիր փաշային Մարաշի կուսակալ ընտրուիլը լսուեցաւ։ Եւ Հասան փաշան ալ քննութիւն սկսել ուզելով՝ Տէր Մովսիսի և Զէյթունի գլխաւորաց հարցուփորձ ըլլալը հրամայեց և անոնց ամէն խոստովանութիւնը արձանագրի առնուեցան։ Այլ քանզի Զէյթունցւոց վրայ բնաւ յանցանք մը չէր կրնալ սաւգուիլ, անոր համար Հասան փաշան ուզեց Տէր Մովսէսին աչքը վախցնել և անոր հրամայեց, որ Զէյթունի չորս գլխաւոր անձինքն ալ իրեն բերէ, ապա թէ ոչ, իր կանոնաւոր զօրքերովը Զէյթունի վրայ կրկին յարձակումը ընել սպառնացաւ և անոր յաւելցուց, թէ Աշիր փաշան նոր կուսակալն ալ Զէյթունի դէմ ելլալու համպէլն իրեն գիւրին էր, և գալուստին ինքը աղէկ մը անոր ականջը պիտի լեցներ Զէյթունցւոց դէմ։

Նոյն օրը իրիկուան դէմ Աշիր փաշան Մարաշ կը հասներ և Տէր Մովսէս քահանայն և Զէյթունի գլխաւորները զինքը դիմաւորելու գացին։ Առջի բերան Աշիր փաշան կարի յոժարամիտ կերևայ Զէյթունցւոց, բայց հետևեալ օրը Հասան փաշայէն և այն քաղքին Մէճլիսէն գրգռեալ՝ Տէր Մովսիսին կսպառնայ, որ եթէ Հասան փաշային նշանակած այն չորս Զէյթունցիքը չի բերէ իրեն չի յանձնէ, անմիջապէս Զէյթունի վրայ պիտի յարձակի։ Նոր կուսակալին խոստմանը վստահելով, որ այս չորս գլխաւորները բանտ չի պիտի նետուին, Տէր Մովսէս քահանայն Զէյթունցի երկու գլխաւորաց հետ կը

վերադառնայ Զէյթուն և իր քովինները հոն ձգելով՝ այդ վերոյիշեալ իշխանները Մարաշ կը բերէ և երկու արքեպիսկոպոսաց ընկերութեամբը զանոնք Աշիր փաշային կը ներկայացնէ, որոնք անոնց թոյլ կուտայ ազգին երաշխաւորութեամբը այդ արքեպիսկոպոսաց քովը բնակելու։

Իրօք ալ այս Զէյթունցիքն Հայոց եկեղեցիներուն մէկուն վանատանը մէջ կը բնակին, բայց հետևեալ օրը Աշիր փաշան 40—50 զապտիէ կը խաւրէ զանոնք բանտ դնելու համար և այն երկու արքեպիսկոպոսաց գանգատանացը և միջնորդութեանը չի նայելով՝ վանատանս մէջ եկեղեցին կը կոխեն և այդ չորս Զէյթունցիքը և Տէր Մովսէսն ալ միատեղ բանտ կը նետուին, բայց Տէր Մովսէսը քիչ մը ատենէն վերջը թոյլ կը տրուի։ Աշիր պաշան հետևեալ օրը հարցաքննութիւն կսկսի և առջև նիստերուն, որոնց մէջ կը գտնուէին նաև Հայ արքեպիսկոպոսները, այդ չորս Զէյթունցի բանտարկեալներն ալ ժողովքի կը կանչուին։ Եւ թէպէտ անոնք մի ըստ միոջէ իրենք զիրենք արդարացուցին և անոնց դէմ բնաւ զօրաւոր ամբաստանութիւն մը չի կրցաւ մէջ բերուիլ, այլ այսու ամենայնիւ Աշիր փաշան զանոնք նորէն բանտ դնել տուաւ, և բոլոր ժողովքին առջև Ալապաշցի Կարապետ քէհեային սպառնացաւ շղթայի զարնել և տանջանքներով չարչրկել, և թէև բան մ՝ալ զանիկայ յանցաւոր ցուցընել չի կրցաւ նէ ալ, նմանապէս անիկայ ալ բանտ դրուեցաւ։ Այս դէպքերուս վրայ երկու արքեպիսկոպոսները իրենց հրաժարականը տուին և ծանուցին՝ թէ իրենք ալ ասկէ ետև յանձնաժողովին ներկայ չի պիտի գտնուէին, մանաւանդ որ իրենց խօսելու հրաման չէր տար փաշան։ Աշիր փաշան քրիստոնէից ըրած կրկին և կրկին գանգատներէն շարժեալ՝ Փրկչի վանքին մէջ գտնուող քահանային սպանիչ եղող Իսպիշ ալայ կոչուած այլազգին և Պէշինի այլազգի քէհեան բանտարկելու հարկադրուեցաւ, բայց ասոնց առաջինը քանի մը օր բանտարկուելէն ետև ազատ թողուեցաւ։ Կուսակալը Տէր Մովսիսի դարձեալ հրամայեց, որ ուրիշ չորս Զէյթունցիք ևս իրեն յանձնէ, բայց այս քահանայս զլացաւ, պատճառ ցուցընելով այս քննութեան ժողովոյս մէջ հանապազօրեայ տեղի ունեցած անիրաւութիւնները։ Բայց վասն զի Աշիր փաշան այն ատեն զօրայ

զէնք առնելու և պատրաստուելու հրաման հանեց Զէյթունի վրայ յարձակելու համար, երկու արքեպիսկոպոսները անոր ա-ղաչեցին, որ իր բերնէն երդմամբ խոստում առնէն, թէ այս չորս նոր Զէյթունցիքը հարցափորձի համար կը խնդրուէին և թէ ասոնք յանձնելու ատենին պաշարման վիճակը պիտի վերցնէր:

Այս խոստմանցս վրայ ապահով ըլլալով, այս չորս Զէյ-թունցիք ևս Մարաշ բերուեցան: Բայց ասոնք ալ առաջին-ներուն պէս բանտ նետուեցան: Եւ թէպէտ Աշիր փաշան պաշարման վիճակը առ ժամս ինչ վերցնելու հրաման ըրած էր նէ ալ այլ այս միջոցիս իրենց նահանգին սահմանէն դուրս ելլող բոլոր Զէյթունցիքը կողոպտուեցան և բանտ դրուեցան:

Կուսակալը բոլոր մինչև հիմա եղած բաներուն ալ գոհ չըլլալով՝ պաշարման վիճակը նորէն ամրացուց և Զէյթունի չորս մեծերը խնդրեց: Բայց Զէյթունցիք ծանուցին իրեն, թէ այս իրենց չորս մեծերը միայն երկու երկու կրնային ի-րեն յանձնել, այլ չորսը մէկէն ոչ բնաւ, մանաւանդ մինչև այն ատենը գործածուած այնչափ անիրաւութիւններէն վեր-ջը: Եւ բնաւ բանի մը մէջ պակասաւոր չի գտնուելու հա-մար իրենց մեծերէն երկուքը ղրկեցին, և քիչ մը ետքը 40 ալ Զէյթունի ծերունիներէն ղրկեցին, որպէս զի կուսակա-լին տղաչեն, որ այս Զէյթունի դէմ եղած թշնամութիւն-ներէն դադրի: Ասոր վրայ Աշիր փաշան Տէր Մովսիսէն և իրեն հետ եկող երկու մեծերէն խնդրեց, որ իրենց ստորա-գրութեամբը գիր մը տան, թէ Զէյթունի մէջ Միւտիր մը պի-տի ընդունեն և տուրքերը պիտի տան և պատերազմին ծախքն ալ պիտի հատուցանեն, Տէր Մովսէս և այն երկու մեծերը իշխանութենէ երկնչելով, այս յայտագիրս ստորագրեցին և թէպէտ Տէր Մովսէս կծանուցանէ, թէ իր կնիքը քովը չէր, այլ այսու ամենայնիւ Աշիր փաշան անմիջապէս անոր կնիք մը պատրաստել տուաւ: Ասոր վրայ Սիւլէյման Պէյը իբրև Միւտիր Զէյթուն ղրկուեցաւ և հոն արժանավայել յարգանօք ըն-դունուեցաւ և քանի մը օրուան ետքը տուրքի անուամբ 25,000 ղուրուշի գումար մը իր ձեռքը յանձնուեցաւ: Պաշարման վիճակը միայն սոսկ անուամբ վերցուած էր, քանզի Զէյթուն-ցիք Միւտիրին մտնելէն վերջը իրենց սահմաններէն դուրս ել-լելով, ամէնքն ալ ամէն տեղ կողոպտուեցան և բանտարկուե-

ցան։ Հասան փաշան և Մարաշի միւս երևելի այլազգիքը տեսնելով, որ Զէյթունցիք Աշիր փաշային իշխանութեանը դէմ ամենևին յանցանք մը չի գործեցին, Միւտիրը ընդունեցան և տուրքը հատուցանելու սկսան, կուսակալը դրդուեցին, որ Միւտիրը ետ կանչէ և Զէյթունի չորս մեծերը ամենքն ալ միասին յանձնուելուն վրայ պնդէ, որպէս զի ասով այն նահանգը առանց կառավարութեան ձգեն։ Եւ յիրաւի ութ օրուընէ վերջը Աշիր փաշային մէկ հրամանագրովը Միւտիրը ետ կանչուեցաւ։ պաշարման վիճակը կրկին աւելի հաստատուեցաւ, Զէյթունի չորս մեծերուն անմիջապէս Մարաշ դրկուիլը պահանջուեցաւ, ապա թէ ոչ Զէյթունի վրայ յարձակելու սպառնալիք։ Զէյթունցիք բացայայտ իմանալով, թէ Աշիր և Հասան փաշաներուն բուն դիտմունքը զանոնք յանձաւոր ընել էր, որպէս զի անոնց վրայ նորէն մէկ յարձակում ընելը և իրենց դէմ եղած այնչափ անիրաւութիւնները արդարացնեն, Ընդհանուր ժողով մը գումարեցին Զէյթուն և որոշեցին, որ Տէր Մովսէս քահանայն և նահանգին երկու իշխանները Կ. Պոլիս Բարձր դուռը դրկեն, Օսմանեան Ինքնակալին դատերնին յանձնելու և բոլոր աշխարհք բողոքելու համար։ Ամենք ծածկաբար Զէյթունէն ելլելով, 21 օրուան ճամբորդութենէ ետև, գաղտագողի ճամբաներէն Կ. Պոլիս հասան։ Պատրիարգարան Տեղապահին և Կ. Պոլսոյ արքեպիսկոպոս նախագահին ներկայանալէն ետև, դարձեալ տեղապահին ընկերութեամբը բարձրագոյն Աբի փաշային ներկայացան, որուն Տ. Մովսէս քահանայն վերջին դիպաց պատմութիւնը ըրաւ, ինչպէս որ ներկայ տեղեկագրոյս մէջ արձանագրուած է։

Հոս պէտք է արձանագրել, թէ Զէյթունցիք այլազգի զօրքերէն պաշարուած ատեն Բերիայ նստող Գաղղիոյ հիւպատոսին աղերսագիր մը ուղղած էին, մի և նոյն ատենը, երեք պատգամաւորներ, որոնց մէկը եկեղեցական էր, Փարիզ դրկուեցան Գաղղիոյ Օգոստափառ Ինքնակալին դիմումը հայցելու համար։

Տէր Մովսէսին հոնկից մեկնելու ատենը, պաշարման վիճակը դեռ կը տևէր և վեց Զէյթունցիք դեռ բանտն էին, և Զէյթունի վրայ յարձակելու պատրաստութիւնը և զինաւորումը կը տևէր։

* * *

Կ. Պոլիս 31 Դեկտեմբեր 1862։

ԶՈՒԱՐՃԱԼԻՔ*

Թարվիզեցւոյ անէծքաթուղթն գրած Ղարադաղցւոյ վրայ.—Ղարադաղցւոյ գրած պատասխանը.—Թարվիզեցւոյ գրած օրհնէնքաթուղթն Ղարադաղցւոյ վրայ.—Ղարադաղցւոյ շնորհակալութեան պատարագն եւ Գոհութեան յաւելուածը։

ԹԱՐՎԻԶԵՑԻՈՅ ԱՆԷԾՔԱԹՈՒՂԹՆ ՂԱՐԱԴԱՂՑԻՈՅ ՎԵՐԱՅ

ՇՆՈՐՀԻՒ 200 չարփառանոց (չափ գինւոյ) կարասի, 14 թասանոց փաթակի (չափ), օրհնութեամբ հարիւր յիսուն տալեկան քարով կրով շինած հնձանի, զօրութեամբ էջմիածնայ վեց խալվարանոց Մարաղու սուրբ բաղի, և օգնութեամբ գինւոյ մաղայ Մուշու Սուլթանու սուրբ կարապետից եկած տարեկի, ես Թադէոս առաքելոյ բայրախտար Տէր Սրապիոն աւագ քահանայ մայրաքաղաքիս Թարվիզու, որ օխտասաներ-կու էս տարեկան եմ, եռասուն տարի է օխնված եմ։ կեանքումս Թարվիզէն ՃՇմարիտ է՝ դուրս չեմ գնացած, և ոչ էլ վարպետի մօտ կարդալն և գրելն եմ սովրած. բայց ամենայն բանն՝ թէ երկնքումն լինի, քնած եմ։ թէ գետնի տակին, չափած եմ։ գետնի երես եղողները խօ առանց այլ և այլի դիտեմ, որովհետև 9 տարի փաքարու թիւն (գզիր) եմ արած, ու հիմի 30 տարի է, մէ յխանաչու թիւն (գինեպան) եմ անում։ 30 տարուն մին օր առանց գինի արաղ խմելոյ չեմ մնացած, օրն որքան քիշմիշից շինած գինի քուրդերին եմ ծախած, էնքան էլ խաղողից քամածէն ես եմ վայելած, բայց իսկի խելքս գլխից չեմ կորցրած, բաց ի էն օրերէն, երբ քառասունք եմ պահած, էն էլ մինակութենէս էր պատահած։ Ո՛չ թէ մինակ որդիս

* Էին ձեռագրից հանած։

է քահանայ, տէրտէրականս հէրն էր քահանայ, այլ և իմ ի Քրիստոս հանգուցեալ հէրս, բարեյիշատակ պապերս, պապական տասն պորտից քահանայի ցեղից եմ եկած, նրանք էլ երևելի երևելի իշխաններէրի ազգից են ծնած եղած, ինչպէս մօրս մէրն կը պատմէր։ Նրանց ամէնի մէջն երկու աշխարհական, երեք էլ քահանայ են մինակ քուրդացած, և ոչ ասելի։ Ես ինքս քանի որ օխնված եմ, երկու անգամ եմ գնացել քուրդանալու, էն էլ բարեպաշտ մէյլանաչիքոնց վերայ էի բարկացած ու սրբազան առաջնորդէն խնդրված, թէ և ժողովրդիս երևելի գլխի արաղ ծախող իշխաններն եկած են ինձ խընդրած, ղնամիշ արած, խրատած, աղաչած ու յետ բերած։ Տասն անգամ իմ կեանքումս մեծ պաս եմ կերած, ոչ գլխէ գըլուխ, այլ ամէն մեծ պասին մին քանի շաբաթ է պատահած, էն էլ կամ հարփած եմ եղած կամ քուրդէրի տանն եմ պատահած, կամ թէ տանս ծածուկ եմ կերած։ Կեանքումս 27 անգամ եմ ժամարար եղած, 3 հարփած, 4 դամաղով (քէփէվ), մի քանիսն ղահֆալթի (նախաճաշիկ) արած, մնացածն մոռացած եմ ինչպէս է պատահել։ Երկու հարիւր պսակ եմ արած, վաթսունն հեռի չհաս, քսանն մօտիկ աղգականն ազգականի հետ, ամէնն էլ յայտնի համարձակ. մնացածների համար իսկի չեմ էլ հարցրած, ընտուր համար ծածուկ և թոնրի վերայ կամ մուրթն օթախումն կամ բաղէրի միջին եմ պսակած, խաչախաչերնէրն էլ քուրդ են եղած։ Սրանց ամէնի ապաշխարանքն ես եմ քաշած, որ ոչ թէ մեռել չեմ թաղած, այլ և գերեզմանի վերայ էլ չեմ դնացած. բայց տասն նստած ալդիւնքս եմ ստացած. համ էլ ոչ օրի չեմ խոստովանցրած, որ չըլնի թէ մինի մեղքն իմանամ, մին օր հետն դուշան դառնամ, գնամ ուրիշներին յայտնեմ, ու հոդիս մարմինս դժոխքի փայ լինի։ Իսկ ուրիշի կնկանը և աղջկանը վատ մտքով չեմ նայած։ Ճըշմարիտ է, լաւ կարդալ չգիտեմ և լաւ ժամասացութիւն չունիմ, ամմա ինչ ժամակարգութիւն ու փոխեր գիտեմ, ամէնն անդիր ջրի նման բլբլալով կասեմ առանց կզկզալոյ։ Ամէն ժողովուրդն ինձ էնքան կը սիրեն՝ ինչպէս իրենց փորիցն դուրս եկած, էնդուր համար էլ էս օր ինձ վէքիլ են արած, որ ես նրանց քացախած, թթուած, լեղեացած, դառնացած, էրված,

խորված, սրտէն բղխած անէծքն ու հայհոյանքներն զրով զբ-
րել տամ ուղարկեմ հասցնեմ անիծած Ղարադաղցւոցն, որ
եկան էս քաղաքումն երեխայութենից մեր աշբաղխանէքանց
ամանլվայ ջրերումն գլխէրնին պահեցին : Մեր հին հին պա-
տրաստած շորերն հագան, անկրունկ աներես սօլերումն (կօշիկ)
մանեկան, յետոյ դուրս գնացին մին մին ղաղբիով (սև փող)
փող հաւաքեցին, հարստութիւն ժողովեցին, մալի հալի տան
և տեղի, կնկայ՝ որդւոյ աէր դաւան, մեր հացն մեր բերնիցը
խլեցին, մարդի կարգ շարք ընկան, հէրիք չէր, սկսեցին քուր-
դէրի մէջն անդուռն բերանով մեր դինւոյ վատութիւնն ա-
սել. թէ Թարվիզեցի Հայերն քիշմիշեցն գինի են քաշում ու
ձեղ ծախում և այլն :

Ես էլ որքան էս անիծած Ղարադաղցւոցն խնդրեցի,
խրատեցի, աղաչեցի, թէ էտով են մեր Թարվիզեցիք, քահա-
նայք, խանք, իշի-խանք, արհեստաւորք, աղքատք, հարուստք,
որբեվարիք, մեծ պատիկ իւրեանց գլուխն պահում, լաւ չէ մի
խօսաք, լեզվընեներնիդ ձեղ քաշէք, չէլաւ, չուզեցին իմ խօս-
քիս ականջ դնել, էստուր համար ես էլ էս օր նաշտով ոչ ա-
բաղ՝ ոչ գինի խմած, բերանս բաց արի, աչքերս խփեցի, պետ
պետ, լաւ լաւ անիծեցի, նղովքի տակ քցեցի Ղարադաղցւոց
սրականէն ինչքրի խարուր տարեկանը, գեսանի տակի գօռպա-
ղօռները, կնանքոնց փորումն եղած էդն ու որձը, մեծն ու
պստիկը, տէրտէրները, սարկաւագները, մոնթերը, փոխ ասող-
ները, ժամակոչները, մէլիքները, քեօհէքը, տանուտէրները, երկ-
բաղորձները, դղերները, ջաղացպանները, ջէհիլները, կնանիքը,
հարսնացուքը, տան աղջիկները, Թարվիզումն, ուրիշ երկրումն
եղած սաղերն ու սատկածները, ի սկզբանէ աշխարհի մինչև
ցայսօր խատածներն, էսօրվանից մինչ աշխարհքի վերջը Ղա-
բաղաղցիքն նղովեա՛լ լինին : Ա՛խ, Թարվիզեցի եղբա՛ր, ջեր-
մեռանդ սրտով իրեք երեք անդամ ասացէ՛ք, ամէն, ամէն, ամէն:

Ա՛խ Ղարադաղցի՛ք, ա՛խ, Ղարադաղցի՛ք. դուք մեղ բիէհ-
տիբար արիք, գլխերնիդ շատ մեծ մեծ քարերումն տուիք.
Աստուած ձեր ոչինչն ոչինչ անի, ինչն էլ ոչինչ, ոչ ձեր որդիքն,
ոչ դուք, մարդոյ շարք չխառնուիք. Թադէոս առաքելոյ աջն
համբուրելոյ արժանի չլինէք, էնպէս գժվիք, յիմարանաք, որ

ոչինչ չի հասկանաք, ձեր երեխէքն քաղցած ծարաւ զկռտան, տկլոր ու բոբիկ ձմեռն շան նման վընկվնկան, ձեր կնանիքն ու աղջկերքը հարիր(ապրշում) փարչի երես չտեսնեն։ Ագա Խանի նման մարդոյ ձեռքն գերի գնան։ դուք էլ Զալաբիանցոց ձեռի տակին խաչվիք, չարչարվիք, տանջուիք. ձեր եղուն տապակվիք, ասացէ՛ք ամէն։

Ա՛խ, Ղարադաղցիք, ախ Ղարադաղցիք, ինչպէս դուք մեր կարասների անունն կոտրեցիք, դուք էլ կարասուն գինուոյ նաստելոյ արժանի չլինէք, կասիկներդ թրջելու գինի չգտնէք։ ձեր երեսը առաջի Աստուծոյ լինի սև, հոգին սատանայ գև։ ոչինչ մարդուց չատանաք ողջոյն բարև, ձեզ խոով կենայ սուրբ Տաթև, էս կեանքումն մնաք առանց լուսին ու արև, չկարողանաք նայել վերև, դլխերնուդ թափի կրակն իբրև ի Սոդոմ Գոմոր եղև, ասացէ՛ք ամէն։

Ա՛խ, Ղարադաղցիք, ախ Ղարադաղցիք։ թէև մեղ վերայ վատ խօսացիք, բայց ձեր անուն մեղ մօտէլ սատանի մօտէլ կոտրեցիք, համէլ սևերես մնացիք։ միշտ սարերի միջին կենաք, ինչպէս կաք։ քաղաքի երես չտեսնաք։ ձեր գիլասը չհասած ուտէք։ գկեռն ու մամասուրն ձեր ջանը քցի քոսն ու քորն։ կաղինն ու տիոդինն ըլնի ձեր կերակուրն։ մարիով, մոշով կշտանայ ձեր փորն, չորանայ մեր Աճու գետի նման ձեր գետերն ու աղբիւրներն։ մկներն ուտեն ձեր ալուրն։ թիֆանկներնիդ, թափանչէքնիդ թրջի անձրևի ջուրն։ փէտ դառնայ ձեր սուրն ու թուրն։ կուրանայ ձեր կոյրն։ երեսներնուդ քսեմ մեր սևն ու մուրն, խոզի կաշկին կարէք ձեր երեխանց շորն։ առաջի նման ձեր բնակութիւնն լինի սարն, փոսն ու ձորն, ասացէ՛ք ամէն։

Ա՛խ Ղարադաղցիք, ախ Ղարադաղցիք, ինչ որ իմ մեղնուոր բերանէն, երվաճ խորվաճ սրանէն դուրս գայ, մինին խաղար, խարուր խաղար գայ հանի ինչպէս կէծակ ձեզ վերայ, որովհետև քանի ամիս այ ձեր խօսքումն մեր գինու անունն կոտրվել այ, էլ չի ծախվում, մնում այ, էստուր համար խընդրում եմ ջերմեռանդ սրտով, որ քանդվի ձեր տեղն ու տունը, ամէն խոզարունը, ոռնայ ձեր շունը, քաղցրանայ ձեր տոիպ և թթու հունը, տանրվէկին ասէք տասնրմունը, ձմեռն գառ-

նայ ձեր ամառն ու գարունը, զլխէրնուդ թափուի ձունը, ասացէք ամէն :

Ձեր ժամերումն մրթմրթան, կղկնձան, կղկղան տէրտէրներն, ճռճռան, կոկնջան ձեր սարկաւագներն, մզմզան, վրդվրզան, հավհավեն ձեր տիրացուներն, ճնկճնկան, կռկռան ձեր մոնթերը, ձեր մեռելները մնան անպատանք ու անթաղ, ժամէրնիդ անճաղ, մատաղնիդ անաղ, ժամի մոմէրն անվարաղ, չայիր չեմաննիդ անցօղ և անշաղ, ջէհիլներն անեարաղ, դամաղնէրնիդ չբնի չաղ, մէջլիսներնիդ մնայ անտաղ, ալուր ունենաք՝ բայց ոչ մաղ, անէրնիդ՝ անօճաղ, կերակուրնիդ ուտէք սառն ու պաղ, ձիերնիդ, կովերնիդ, եզեր նիդ՝ երեք ոտանի ու կաղ, գործքերնիդ ամէն վաղնայ գնայ ձախ, ումոր ծառայէք՝ մնաք անհախ, արտերնուդ չպակասի ահն, դոզն ու վախը, ասացէք ամէն :

Ա՛խ Ղարադաղցիք, ա՛խ Ղարադաղցիք, մեղ ու մեր սիրտն դուք էրեցիք, արորեցիք, խորովեցիք, մեր լուսութեանց տեղն պատիժ սատնաք, ցուրայ մասնիչ դառնաք, դուք էլ անժամ ու անպատարագ, վանքերնիդ՝ անեղանգակ, ժամէրնիդ՝ անտաղտակ, հարսու վիսէն՝ անթաղ ու անդպակ, տղամարդիկն՝ անդտակ, կնանիքն՝ անլաչակ, ձեր կովերն դառնան ալապտրակ, էծերն ու ոչխարներն պզտիկանան ինչպ՛ս մնծակ, որք ոչ կաթն տան, ոչ մաճուն ոչ կարաղ, ձեր խոխէքն էլ մնան նրանց հասրաթ ամէն ժամանակ, ասացէք ամէն :

Ձեր վարուցանն ուտի մորեխն, քոսոտվի վեր թափի ձեր թոփ թոփ միրուքն ու բեխն, աչքով չտեսանիք գինու մաղայ տարեխն, սանամաններնիդ ընի միշտ արեխն, չհասնի ձեր բոստանի ձմերուկն ու սեխն, աւերվի քանդուի ձեր տունն ու տեղն, գժվիք, խելագարուիք, չգտնէք նրանց դեղն, հատատայ, զերան դառնայ ձեր աչքի ծեղն, սուրբ անէծքս նզովէ ամէնիդ ցեղն, որ էլ մեղ վերայ չգնէք ձեր մեղն, թուր թվանկի տեղն, բանայնէք նեռ ու անեղն, ասացէ՛ք ամէն :

Ղաքաղաղցիք ժողովեցան, իւրեանց մէջն խորհուրդ արին՝ գտան մին տիրացու զրոց տեղակ, որ ինչպէս փիլիսոփայ մտածեց՝ մրատածեց, զրիչն վեր առաւ՝ էս պատասխանը գրեց Թարվիզեցւոց։

Բարձրագագաթ իրրև Արարատ, երկնասլաց ինչպէս Արագած, վեհաձեմ որպէս սուրբն Եփրեմ, գինեձան, արաղսաձան, քացախաձան Տէր Սրապիոն, Տէր Սիմոն, Տէր Անտոն և Տէր Ահարոն քահանայիցդ, գեադութիւնով մարդ դառած, եկեղեցուն նզոված, սերմնացած, չարահամբաւած Պարոն Վասակ Խանիդ, գինեծախ, արաղածախ իշի-խաններուդ Թարվիզու մեծիդ և պստիկիդ, մեր անտառախիտ, մացառախիտ, Սև քարի գիւղօրէից մէջն բնակող սրբափայլ Տէրտէրներից, անմօրուս ժողովրդից, սպիտակամօրուս մէլիքներից, սև-մօրուս քեօխեներից, պառաւներից և երիտասարդից, ի կենդանեաց և ի Քս հանգուցելոց. երկնաչուս, խորանագարդ, նափորակերտ օրհնուիր դայ հասանի ձեր Թարվիզու մեռոնաօծ պատկերներին, Քրիստոսաօծ մասունքներին, սրաբաօծ վանքերնուդ, մարդարէօծ անապատներուդ, մարտիրոսաօծ եկեղեցիներուդ և ժամերուդ, նոցա միջի խաչվառներին, շուրջառներին, փիլոններին, Ջահերին, մոմերին, մոմակալներին, հողաթափներին, բուրվառներին, քշոցներին, ձեր տնէրի պատերին և բերդի պարսպին, փողոցներուն և շուկայներուն, տան և տեղին. մառաններուն, կարասներուն, արաղի փաթակներուն, խալիչէքանց, կարպետներուն և հասիրներուն. թոնիրներին և օջախներին, փէտին, ցախին, գեավանին (փուշ), քակորին (կտաւոր), սէյմին և ամէն վառելիքին, խմորին, տխտրմորին, տաշտին և վարդանին, դալեանին և չխալուխին, թուրթունին ու թամբաքուլին, չվալներին և պարկերին, նոցա միջի ցորէնին, կորէկին, ալուրին, լոբուն, բակլին, մաշին, լապին, ձավարին, ղաղաններին ու կճուճին, աղին, փլփլին, քուրսիքանցն և նոցա վերայ փռոցներին, մաղալին և կրակ քշրքրոցին, ասացէ՛ք ամէն։

Դարձեալ նաև, այլև, Պարոն Թարվիզեցիք, ձեր սրբազան պատուական մատանց գրած նզովոց՝ անիծօղ, բանադրօղ կոն-

դակն ցեցակեր, բորբոսնած, թթուած սրաէն բղխած, ճեպով, շուտով, փութով եկաւ մեզ հասաւ, մեք էլ հոգեխառն մը-տերմութեամբ, անթերի սիրով կարդացինք, ընթերցանք, իմացանք և ի միտ առինք, վասն որոյ, սրայ ազագաւ պարտաւորեցանք պատասխան տալ անգդամին ոչ ըստ անգդամութեան իւրում, որպէս գրէ հանճարափայլ, բարձրաստիճան, արեգակնափայլ իմաստունն, որովհետև դուք մեր երկնաքաղաքացիքն էք, մեր իշխ-խաններն էք, մեր բերանի շունն էք, մեր գլխի տէրն էք, մեր ականջի եղն էք, մեր կռան տակի մաղերն էք, մատների մէջի կեղտն էք, մենք ձեզ պէտք է պատուենք՝ մեծարենք էնպէս՝ ինչպէս մեր փորիցն դուրս եկածն, յարգենք, փշի փշի, քուսի քուսի, քուչի քուչի անենք, ներբողենք, գովենք, լուսաբանենք ամէն տեղ, ամէն հեղ, դուք խօ էստանք ամէնքն գիտէք, ուրեմն ինչի՞ ձեր պայծառափայլութիւնն, ազնուակերպութիւնն, գերաստիճանութիւնն, բարձրաստիճանութիւնն անմեղ անտեղ մին քանի ջահիլ ջհուլի, տռհաչվայրահաչ խօսքերիցն մեզ վերայ նեղացած, դժգոհած, բարկանալով, բամբասելով, պղտորվելով, դառնանալով, լեղիանալով ու աղիանալով վեր էք առել ձեր գլխին, ձեր մեծին, ձեր պստկին, ձեր խելքին լայեղ էնպէս կոնդակագիր էք եղած ու մեզ անէծքի տակ քցած :

Յայտնի է որ մենք առանց ձեզ ոչինչ ենք, ինչպէս առանց շերի չենչն, առանց երեսի պենչն, այբուբենն առանց եչն, թուղթ ու թանաքն առանց գրիչն, չաքուչն առանց ոսկերիչն, ոսկերիչն անչաքուչն. ձեր լաւութիւնն մոռացող չենք, թէ ձեր սրբագործ ոսկերիչներն մեզ համար մասնատուփ, խաչ, սկիհ, բուրվառ, ձեր աստուծահայր Յովսէփի հայրապետի աշակերտ նաջառներն (դուլգար) մեր ժամերի համար սեղան, դուռն չշինէն, և դուք իշխ-խանքդ մեզ գինի չածէք, ձեր դերձիկներն մեր քահանայից համար շուրջառ, փիլոն, փարաջի չկարեն, մեր ճարն հնարն ի՞նչ է, ո՞ւմն պէտք է խնդրենք : Էս մեր ակնկալութիւններին նայելով՝ պէտք էր խնայել էիք ու մեզ անէծքի տակն չձգէիք, թէ ինչ է մին քանի մեր Սև քարեցիքն ձեր քիշմիշից քամած գինուց ա-

նուէնն կոտրել են, որպէս թէ մահկանացու մեղք են արել։ Դուք էլ կարող էիք նրանց վատութիւնն, գոռոզութիւնն, յանդգնութիւնն, ապերախտութիւնն և այլ ուրիշ մեղքերն և յանցանքներն բամբասէիք կամ զրախօսութիւնն, շատախօսութիւնն և ստախօսութիւնն սուտ էիք հանել, հրատարակել քուրդերի մէջն աւելի գերազանց և բարձրագանց, բարձրագոչ աղաղակաւ. և ոչ թէ մեր ոտիցն բռնել և խածնել և կամ թէ կամենալ ինչպէս ծաղկակոխ մեզ մաքրաղարդել՝ մեր թափանն հանել պատառել ուտել, ի հարկ է մեք էլ ինչպէս մոխրաթաւալն պարտական էինք այժմ և այսօր, վասն և միւս օրն որքան զօրութիւն կարողութիւն ունէինք, մեր յետի ոտովն ձեր դունչը պառունկը ջարդել, խորտակել և ատամնիդ փշրել և մանրել։

Ի վերջոյ՝ այս ևս ծանուցումն լինի և զեկուցումն, որ թէև մեզ վերաբերելի չէ էս կռիւն և մեր պարտքն չէր ասելն, բայց տեղն է եկել լուենք, կասէք ինչ ամենաաւանակ մարդիկ են, այսինքն շնորհակալ, երախտապարտ և գոհ չէք. մի՞թէ որ մեր ամենաղովելի Սև քարեցիքն միայն ձեր դինուոյ անունն են կոտրել քուրդերի մոտ և չեն ասել, թէ Թարվիզեցոց մարդիկն՝ փոզոցի՝ միջին՝ դուքանումն նստած՝ քուրդերին արաղ են ծախում, և կանանիքն էլ ձեռնէրուն հինայ դրած՝ անէրուն խմիչք են խմացնում, խորտիկաճաշակ, ախորժաճաշակ մաղէքն իրենց ձեռքովն են թափազայ անում քուրդերին, կամ ձեր երեխէքն որքան ջէհիլ են, գինի արաղ են տանում փէշի տակին քուրդերի տուն, երբ մենծանում են՝ դամայ են կապում՝ լոթի դառնում, հէնց ծերանում են՝ տների դառնն մէյլեանաչութիւն են անում. որիցն Աստուած հեռի արասցէ մեր երկրացի Սև քարեցոց թէ՛ էդպեղ, թէ՛ էսպեղ, թէ՛ էս կեանքումն, թէ՛ էն կեանքումն, թէ՛ արքայութիւնում, թէ՛ դժոխքում, ասացէ՛ք ամէն։

Ասենք մեր ջէհիլներն չեն իմացել ձեզ վատութիւն ասելոյ կերպն, սկսել են էսանք խօսալ։ Աւելի վատ չէր. մեր մէջն ծածուկ ասենք, թէ ձեզ համար ասած էին եղած Թարվիզեցիք ալջիկ են տալիս անպսակ Ֆռանգնէրին, կամ Թարվ-

վիզու խանութներ ասածներին շատն նրանցից են, որք Ֆռանգներին մեռնելուց կամ իւրեանց երկիրն վերադառնալուց յետոյ են Թարվիզեցի գինեծախ իշխանքերին գնացած, մի՞թէ ձեր երեսնքանց շատն գիտեն իւրեանց իսկական հօր անունն—բաւ լեցի. ո՞ր կանանց զնաղլըղութեանց մէջն չեն տեսել էսպէս ներիցն խանութ դառած՝ շարված՝ նստած լինին ամէնի գըլխին: Ո՞վ չգիտէ, որ ձեր տէրտէրներն հարփած քուչէքուն կը շրջեն և գիշեր ցորեկ անպսակ կնանքոց հետն ծունկն ծընկան կպցրած՝ կը նստին, կուտեն կը խմեն: Զէ՞ք արդեօք տաչում էս պակասութեանց տէր ըլնելով, ուզում էք ուրիշներին էլ ոչինչ տեղն բամբասել: Ասենք մարդ տաչում է ձեր երեսին ասելն էստոնք, ինչի՞ դուք ձեր արարմունքէն չի պէտք է տաչէք:

Մենք ձեզ խօմ մուդդահի (թշնամի) չենք և չենք էլ ուզում ձեր մեծ մեծ պակասութիւնները ասել կամ գրել, խնայելով էն երեք ու կէս օջախներին, որ ձեր մէջն ողորմելիքն իւրեանց հայէն, պատիւն, աբուռն պահում են. սպա թէ ո՞չ շուռ կը գանք, ձեր հազար ու մէկ պակասութիւններն մէկ մէկ կը գըրենք, կը թայտառակենք. ուրեմն լաւ կանէք փոշմանիք շան նման և անմեղայ չմնաք Յուդայի նման, որպէս զի էլի միմեանց հետ ինչ պատով ցայսօր, ցայս բոպէն, այսուհետև էլ էնպէս կառավարվինք: Խելք ունիք՝ էն անէծքի նըղովքի տակէն հանեցէք մեզ և շուտով գրով գրեցէք, ղրկեցէք և համոզեցէք մեզ ի խաղաղութիւն անեղբական, սպա թէ ո՞չ, երդվում ենք Աստուած, երկինք, սատանայ, հրեշտակ, պար, քար, սև, սպիտակ, էնպէս կանենք ձեզ, աշխարհումս մի մատն մեզը դառնաք. դժոխքումն տեղ չունենաք, երկնքումն սանդարամետականաց երանի տաք. Յուդայի, Վասակի, Շիմրի և Եղդի վերայ շատ նահլաթ լսէք ու տարտարոսի հրոյն կերակուր դառնաք, յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Պիտի չարունակուի.

ԵՐԳ ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱՏԵՐԱԿԱՆԱՅ

Նուէր Թիֆլիզու Հայ Համքարներին

Թատրոնիս սիրողք, Թիֆլիզի Հայ Համքարներ,
Հայաստան իր յոյսը ձեր վերայ է դրել.
Թե թիկունք դարձէք մեզ,
Մոնել այս ասպարէզ,
Հայ անուան փառք ու պարծանք,
Համքարներ, հաստատ մնաք:

Մեր ըսկսած գործը դուք շատ փառաւորեցիք,
Մեր սրտի եռանդը աւելի վառեցիք,
Այսօր դուք ցոյց տուիք
Թէ Հայ է՛ք ճշմարիտ,
Հայ անուան փառք ու պարծանք,
Համքարներ, հաստատ մնաք:

Թող հասնի այս ձայնը Հայաստանի ականջը,
Իմանայ իր որդւոց մէջ զարթնած եռանդը,
Վառի ողջ Հայերին
Նմանիլ Թիֆլիզին,
Հայ անուան փառք ու պարծանք,
Համքարներ, հաստատ մնաք:

Պ. Պռոշեանց.

ԽՄԲԱԳԻՐ ՄԱՐԿՈՍ ԱՂԱԲԻԳԵԱՆ.

ՀՐԱՏԱՐԱԿԻՉ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԷՆՖԻԱՃԵԱՆՑ

одобрено цензурою. Тифлисъ, 30 Марта, 1863 г.